

ՀՀ ԿԳՄՍՆ ԼԵԶՎԻ ԿՈՄԻՏԵ

ԼԵԶՎԱԿԱՆ ԿՈՂՄՆԱՑՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔ	3
ՀՈՐԴՈՐԱԿՆԵՐ	4
Շնորհակալ ենք ձեզ կամ ձեզնից, բայց շնորհակալություն ենք հայտնում ձեզ.....	4
«Կողմից» կապով կազմվող կրավորական կառույցները չարաշահելու մասին	5
«Թվով+թվական» բառակապակցությունների մասին.....	7
Ե-ի արտասանության մասին.....	8
Չակերտների գործածության մասին	9
Հարցական նշանի և հնչերանգի մասին.....	12
Հայերենի շեշտի մասին.....	14
«Որ, որպեսզի» շաղկապների մասին	15
Փողոցների և հրապարակների անվանումների մասին.....	17
«Ու» տառի գրության մասին.....	19
«Առթիվ» և «կապակցությամբ» բառերի գործածության մասին.....	20
Կախման կետերի և բազմակետի գործածության մասին	22
«Չ» ածանցով բայերի մասին.....	23
Տոնական հորդորակ.....	25
«Վ» ածանցով սխալ բայաձևեր կազմելու և գործածելու մասին	27
Բայերի ելակետային ձևերի սխալ գործածության մասին	29
Հայերեն դիմելաձևերի մասին	30
Գծիկի գործածության մի յուրահատկության մասին.....	31
Թվականները ճիշտ գործածելու մասին	33
Բայական որոշ կառույցների ճիշտ գործածության մասին.....	35
ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻՑ.....	37
Մակաբույծ «տարրերի» մասին.....	37
Ե՞րբ պետք է «սեփականաշնորհել» և ե՞րբ «սեփականացնել» գույքը.....	38
Անգամ-ի «զանցանքները».....	41
Պահանջում են կապերը.....	43
Ի՞նչ է հասկացությունը, ի՞նչը կարելի է փոխանցել և ի՞նչը ոչ.....	44
Ի՞նչ է թելադրում մեր գաղտնավանկը.....	45
Բեմադրե՞լ, նկարահանե՞լ, թե՞	47
Զգացնե՞լ, թե՞ զգացնել տալ.....	48

ԱԾ-ի, ՍԱԾ-ի, ԴԲԾ-ի, ՊՊԾ-ի և ԴԱՀԿԾ-ի մասին.....	51
Հապավումների փոխառումը	53
Այլք-ի, այլոց-ի և այլոք-ի մասին.....	53
Բացօդյա-բացօթյա	55
Ուլքե՞ր են հանդիպում նախագահների միջև	56
«Նուրբ» սխալ, որ դառնում է կոշտուկ	61
Երբ «գերիշխող» դիրքում են բառերը.....	68
Օրինակ և այլն	69
ԵԹԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆ	72
Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 1-ին).....	72
Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 2-րդ).....	74
Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 3-րդ).....	76
Պատմական սխալներ (մաս 1-ին).....	78
Պատմական սխալներ (մաս 2-րդ).....	81
Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 1-ին)	83
Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 2-րդ)	85
Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 3-րդ)	87
Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 4-րդ)	89
«Անահիտ» մուլտֆիլմի լեզվական սխալները.....	92
Խոսում է «Անհայտ բաժանորդը»	95
Մանուկներին մատուցվող «մեծական» սխալներ.....	97
Երեխաներին՝ միայն որակյալ խոսք (1-ին մաս)	100
Երեխաներին՝ միայն որակյալ խոսք (2-րդ մաս)	102
Ուշադրություն, երեխաներ են.....	104
«Հարրի Փոթերը» և նրա հայերեն կրկնօրինակումը	107
«Մադագասկար» մուլտֆիլմը երեխաները ոչ միայն դիտում, այլև լսում են.....	112
Շրեկ կանաչ հսկան հայերեն վատ է խոսում.....	114
Մենք էլ եղանք «Մոլորակ հմ. 612»-ում	116
Ինչպես է խոսում «Երգիր, թե կարող ես»-ը	118
Նորահայտ սխալներ.....	121
Անկոտրում սխալներ	122
ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ	124

ՄՈՒՏՔ

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լեզվի կոմիտեն ներկա ժողովածուում ամփոփել է լեզվական այն սխալները, որոնք լայնորեն տարածված են հանրային խոսքում: Դրանք երբեմն այնպիսի սխալներ են, որ իրենց լայն տարածվածությամբ այլևս որպես սխալ չեն ընկալվում:

Կոմիտեն հրնթացս անդրադարձել է դրանց ինչպես իր կազմած ամփոփագրերում, այնպես էլ առանձին հրապարակումներում: Այս ժողովածուն, մեկտեղելով դրանք, փորձում է կողմնորոշել օգտվողին լեզվական խնդրահարույց հարցերում՝ յուրաքանչյուր դեպքի համար ներկայացնելով դրան բնորոշ համատեքստը: Լեզվական բարդությունները ներկայացնելով են նյութերը ձևավորում լեզվական այս կամ այն ձևի կիրառության նախընտրելիությունը:

Ժողովածուի բաժինները և դրանցում ներառված նյութերը տարասեռ են: Բաժինները հիմնականում Լեզվի կոմիտեի առանձին հրապարակումների խորագրերն են կամ պայմանական խորագրի տակ մեկտեղված որոշ ընդհանրություն ունեցող հրապարակումները: Դրանք վերաբերում են ինչպես բառերի իմաստային առումով ճիշտ գործածությանը, այնպես էլ քերականական ձևերի տեղին գործածությանը, կետադրական նշանների՝ հայերենին բնորոշ ձևերի օգտագործմանը, թարգմանված կամ փոխառված բառերի ու հասկացությունների կիրառությանը, խոսքի հղկվածությանը և այլն: Այս իմաստով ժողովածուն անդրադառնում է հայերենում գոյություն ունեցող լեզվականորեն խնդրահարույց ոչ թե բոլոր, այլ տիպական դեպքերին՝ փորձելով մատնանշել սխալների տարածման հանգամանքներն ու աղբյուրները: Սա կարող է օգնել օգտվողին ինքնուրույն կողմնորոշվել լեզվական տարածությունների հարցում և իր խոսքի մեջ նկատել դեպքեր, որոնք լեզվականորեն նույնքան խնդրահարույց են:

Լեզվական կողմնացույցը պատրաստել է Լեզվի կոմիտեի Լեզվական վերահսկողության բաժինը, նյութերը պատրաստել են բաժնի աշխատակիցներ Երազիկ Գրիգորյանը և Գուրգեն Միքայելյանը: Նյութերի հիմնական մասը հասանելի նաև Լեզվի կոմիտեի [կայքում](#):

ՀՈՐԴՈՐԱԿՆԵՐ

Շնորհակալ ենք ձեզ կամ ձեզնից, բայց

շնորհակալություն ենք հայտնում ձեզ

Շնորհակալ եմ և շնորհակալ լինել բայական միավորները պահանջում են *ու՛մ, ինչի՞ն, ումի՞ց, ինչի՞ց* հարցերին պատասխանող լրացումներ: Այսինքն՝ մենք կարող ենք շնորհակալ լինել ինչպես *մեկին*, այնպես էլ *մեկից*: Բերենք օրինակներ.

- «*Շնորհակալ ենք ծնողներին (ու՛մ)* զգոնության համար»:
- «*Շնորհակալ եմ իմ բախտին (ինչի՞ն)*, որ այս ժամանակներում եմ լույս աշխարհ եկել»:
- «Անչափ *շնորհակալ եմ Աստծուց (ումի՞ց)*, որ ինձ անցկացրեց այդ փորձությունների միջով, երազելու հնարավորություն տվեց»:
- «*Շաբաթաթերթից (ինչի՞ց) շնորհակալ եմ*, որովհետև հարցազրույցից հետո տունս վերանորոգեցին»:
- «Հեռացա՝ *շնորհակալ լինելով* այն *կնոջը (ու՛մ)*, որն ասաց. «Հիշի՛ր, մարմնական ցավն անցողիկ է, հոգեկանը՝ ընդմիշտ տանջող»»:
- «*Շնորհակալ եղանք թատրոնի տոմսավաճառից (ումի՞ց)*»:
- «Դուք պետք է *շնորհակալ լինեք ճակատագրին (ինչի՞ն)*, որ Ձեզ պարգևել է այդպիսի արտաքին»:
- «Հարկավոր էր *շնորհակալ լինել ճակատագրից (ինչի՞ց)*. այս բոլորը նա հասկանում էր»:

Վերջին տարիներին պաշտոնական խոսքում և զանգվածային տեղեկատվության միջոցներում *շնորհակալ եմ և շնորհակալ լինել* միավորների հետ կիրառվում են հիմնականում տրական հոլովով լրացումներ (*շնորհակալ եմ քեզ, զինվորին, ոստիկանությանը* և այլն): Ինչպես տեսանք, կարելի է նաև շնորհակալ լինել *քեզնից, զինվորից, ոստիկանությունից*, քանի որ սովորական է բացառական հոլովի

գործածությունը հոգեկան վիճակ, դրություն և համանման իմաստներ արտահայտող բայերի հետ (*վախենալ, ձանձրանալ, սարսափել, զգուշանալ* և այլն): Ուրեմն ինչպես որ խոսվում, սարսափում ենք *մեկից*, այնպես էլ՝ գոհանում ենք *մեկից*, շնորհակալ լինում *մեկից*:

Այժմ անդրադառնանք *շնորհակալություն հայտնել* և *շնորհակալություն* միավորներին:

Սրանք պահանջում են *ու՛մ, ինչի՞ն* հարցերին պատասխանող լրացումներ:

- «Խորին *շնորհակալություն եմ հայտնում* իմ թեկնածությունն առաջադրած *կազմակերպություններին* և *ընկերներին*» (*ու՛մ*):
- «Հատուկ *շնորհակալություն ենք հայտնում խմբագրությանը*» (*ինչի՞ն*):
- «*Շնորհակալություն ձեզ (ու՛մ)*, պարո՛ն Գևորգ, շնորհակալություն»:

Բացառական հոլովով լրացումների կիրառությունը սխալ է (*շնորհակալություն հայտնել* բարերարից):

Այսպիսով՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

1. *շնորհակալ եմ* և *շնորհակալ լինել* բայերի հետ հավասարապես գործածել տրական և բացառական հոլովով լրացումներ (*շնորհակալ ենք ձեզ / ձեզնից*, որ հետևում էք մեր խորհուրդներին),
2. *շնորհակալություն հայտնել* և *շնորհակալություն* միավորների հետ գործածել միայն տրական հոլովով լրացումներ (*շնորհակալություն ենք հայտնում / շնորհակալություն ձեզ* համագործակցության համար):



«Կողմից» կապով կազմվող կրավորական կառույցները չարաշահելու մասին

Մեր լեզվի քերականական բազմաձևությունից օգտվելու փոխարեն մենք երբեմն նախապատվություն տալիս ենք միայն մեկ ձևի, դա դարձնում կաշկանդող կաղապար:

Այդպիսի կադապարներից է «կողմից» կապով կազմվող կրավորական կառույցը: Արդեն այնքան է չարաշահվել այս ձևի գործածությունը, որ ոմանց սխալմամբ թվում է, թե չի կարելի ասել, օրինակ, «Մեր կատարած աշխատանքը», պարտադիր պետք է ասել «Մեր *կողմից կատարված* աշխատանքը»: Շատերը խուսափում են «Մեր իրականացրած ծրագրերը» ասելուց և նախընտրում են «Մեր *կողմից իրականացված* ծրագրերը» տարբերակը: Կարծես բացառված է, որ կառավարությունը կամ առհասարակ որևէ մարմին ինչ-որ աշխատանք ձեռնարկի, որոշում ընդունի, կարգ սահմանի: Այդ աշխատանքը պարտադիր կատարվում է *կառավարության կողմից*, որոշումն ընդունվում է *գերատեսչության կողմից*, կարգը սահմանվում է *իրավասու մարմնի կողմից*: Խոր մոլորություն...

Բանը հասել է նրան, որ օրենքներում, օրենսգրքերում ոչ կրավորական ձևեր գրեթե չեն հանդիպում: Որևէ բան ոչ ոք չի անում, ամեն ինչ նրանց *կողմից կատարվում է*: Բերենք օրինակներ.

- «Հոգաբարձուների խորհուրդը պայմանագիր է կնքում *իր կողմից նշանակված* կառավարչի հետ»:
- «Խախտում է համարվում *անձի կողմից կատարված* անօրինական գործողությունը կամ անգործությունը»:
- «Հայաստանի Հանրապետության *կողմից վավերացված* միջազգային պայմանագրերով սահմանված են»:
- «Օրենքն *ընդունվել է* Ազգային ժողովի *կողմից*»:

Եթե որևէ իրավաբանի ասենք, որ այսպիսի դեպքերում կարելի է, առավել ևս գերադասելի է գրել. «Հոգաբարձուների խորհուրդը պայմանագիր է կնքում *իր նշանակված* կառավարչի հետ», «Խախտում է համարվում *անձի կատարած* անօրինական գործողությունը», «Հայաստանի Հանրապետության *վավերացրած* միջազգային պայմանագրերով սահմանված են», «Օրենքն *ընդունել է* Ազգային ժողովը», նա հավանաբար կառարկի. «Դա իրավաբանական լեզու է»:

Իրականում սա ոչ թե իրավաբանության լեզու է, այլ լեզվի թերիմացության հետևանք:

Այդ թերիմացության պատճառով էլ երբեմն «մոռանում ենք», որ «*կողմից*» բառը պահանջում է կրավորական սեռի բայ, և գրում ենք. «Դատարանի *կողմից* ակտն

անվավեր *ճանաչելու* դեպքում....», «Ղեկավարի *կողմից* որոշում *ընդունելուց* շինարարության թույլտվություն *տալուց* հետո...», «.... ամուսիններից մեկի մահվան կամ դատարանի *կողմից մահացած ճանաչելու* հետևանքով»:

Այդպես էլ *կողմից*-ը սխալ է գործածվում այնպիսի կառույցներում, որտեղ կարող էր պարզապես բացառական հոլովածն լինել: Այսպես.

«Այդ ընթացքում երկու թեկնածուի *կողմից* ընկերությունը հայտ է ստացել»:
«Լիցենզավորված անձ՝ կարգավորող *հանձնաժողովի կողմից.... լիցենզիա ստացած անձ*»:

Պարզ է, որ ընկերությունը հայտ է ստացել ոչ թե երկու թեկնածուի *կողմից*, այլ **երկու թեկնածուից**, լիցենզավորված անձը ոչ թե *հանձնաժողովի կողմից* լիցենզիա ստացած անձն է, այլ *հանձնաժողովից*:

Նկատի ունենալով այս ամենը, ինչպես նաև լեզվի անցանկալի կրավորականացումից խուսափելու նպատակով



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

չչարաշահել «կողմից» կապով կազմվող կրավորական ձևերի գործածությունը, օգտվել մեր լեզվի քերականական բազմաձևությունից և նախապատվություն տալ ոչ կրավորական կառույցներին:



«ԹՎՈՎ+ԹՎԱՆԿԱՆ»

բառակապակցությունների մասին

Զանգվածային տեղեկատվության միջոցներով հաճախ կարդում կամ լսում ենք.

- «Կազմակերպվել է *թվով երկու* այլ գորակոչիկի տարկետում տալու գործընթացը»:
- «Այս հարցը Ռուսաստանի և Հայաստանի ղեկավարների *թվով երրորդ* հանդիպման օրակարգում էր»:
- «Անվավեր է ճանաչվել *թվով հինգ* քվեաթերթիկ»:
- «Գնել են *թվով 53* կոնյակ»:

Օրինակների այս շարքը կարելի է շարունակել, բայց կարծում ենք՝ հարկ չկա, որովհետև անհրաժեշտ հարցը հավանաբար արդեն ծնվեց. իսկ ի՞նչն է սխալ, ինչպե՞ս պետք է լինի: Խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ բառակապակցություններին՝ *թվով երկու*, *թվով երրորդ*, *թվով հինգ*, *թվով 53*: Հիմա հարց տանք. իսկ ուրիշ ի՞նչ են երկու-ն, երրորդ-ը, հինգ-ն ու 53-ը, եթե ոչ թիվ: Արդյո՞ք իմաստ ունի թվականի հետ «թվով» բառաձևի գործածությունը: Չե՞ որ նրա մեջ «թիվ» բառի իմաստն արդեն իսկ կա:

Սա այն դեպքերից է, երբ երկու բառից մեկն անհարկի է գործածվում, ուղղակի ավելորդ է: Լեզուն ավելորդություններ չի սիրում և ձգտում է սեղմության:

Առաջնորդվելով այս սկզբունքով՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

թվականների հետ «թվով» բառաձևը չգործածել և այսուհետև ասել (գրել), օրինակ, ոչ թե *թվով երկրորդ*, այլ *երկրորդ*, ոչ թե *թվով երեք*, այլ պարզապես *երեք*, ոչ թե *թվով 53*, այլ *53*:



Ե-ի արտասանության մասին

Կանոնը սահմանում է՝ *ե-ն* բառասկզբում արտասանվում է *յէ*, բառամիջում և բառավերջում՝ *է*: Օրինակ՝ *յերգ*, *յերկու*, *ներել*, *բերել*, *Նարինէ*, *րոպէ*:

Բաղադրյալ բառերում բառարմատի սկզբի *յէ-ն* (*ե-ն*) բաղաձայնից հետո արտասանվում է *է*, օրինակ՝ *համերգ*, *բազմերանգ*, *առերես*, *անէլանելի*, *անէնթակա*, ձայնավորից հետո՝ *յէ*, օրինակ՝ *ամենայերջանիկ*, *կիսայեզրափակիչ*:

Չպետք է կարծել, որ եթե բառն առանձին արտասանվում է *յէ-ով*, օրինակ՝ *երկու* (*յերկու*), *երգ* (*յերգ*), *երկիր* (*յերկիր*), ապա այդ արտասանությունը պետք է պահել նաև բառամիջում, ինչպես՝ *տասներկերկու*, *գուգյերգ*, *ստորյերկրյա*: Սա ճիշտ չէ: Ինչպես ասվեց, բաղաձայնից հետո *ե-ն* արտասանվում է *է*: Ուստի պետք է արտասանվի՝ *տասներկու*, *գուգերգ*, *ստորերկրյա* և այլն:

Հարց է առաջանում. իսկ ինչպե՞ս արտասանել *է*-ն, եթե պայմանական (ենթադրական) եղանակի *կ*- /*կը*/ և ժխտական *չ*- /*չը*/ մասնիկներից հետո է, որոնք նույնպես բաղաձայն հնչյուններ են: Օրինակ՝ ասել *կերգե՞մ*, թե՞ *կյերգեմ*, *կեզրափակի՞ր*, թե՞ *կյեզրափակի*, *կերկրպագե՞ն*, թե՞ *կյերկրպագեն*, *չերագե՞նք*, թե՞ *յերագենք*, *չենթարկվե՞լ*, թե՞ *յենթարկվել* և այլն:

Օրինաչափությունն այն է, որ պայմանական եղանակի *կ*- և ժխտական *չ*- մասնիկներից հետո *է*-ն արտասանվում է *յէ*, քանի որ այդտեղ *կ*-ից և *չ*-ից հետո *ը* է արտասանվում (փաստորեն *է*-ն ձայնավորի է հաջորդում): Ուստի պիտի արտասանել *կյերգեմ*, *կյեզրափակի*, *կյերիտասարդացնեն*, *կյեռապատկենք*, *կյերդվենք*, *կյերկնի*, *յերագել*, *յեզրատել*, *յեռացնել*, *յեռակցել*, *յերթնեկել* և այլն: Իհարկե, կարող են լինել բացառություններ և զուգաձևություններ (*կէփեմ/կյէփեմ*, *չենթարկվել/յենթարկվել*, *չերկնչել/յերկնչել*):

Հիմք ընդունելով ասվածը՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

բաղադրյալ բառերում բաղաձայնից հետո *է*-ն արտասանել *է*, պայմանական եղանակի *կ*- և ժխտական *չ*- մասնիկներից հետո *է*-ն արտասանել *յէ*:



Չակերտների գործածության մասին

Չակերտը հայերենի կետադրական նշաններից է (բառը կազմվել է *չ* տառի անվանումից՝ *չա*+*կերտ*, ձևով էլ հիշեցնում է տառի մասնիկը): Ինչպես հայտնի է, չակերտը կիրառվում է կազմակերպությունների, հիմնարկների, թերթերի, ամսագրերի, գրական ստեղծագործությունների, մարզական ակումբների և այլ անուններ գրելիս, երբ դրանք գործածվում են բառակապակցության կամ

նախադասության մեջ, օրինակ՝ «Հայկական միջօրեական» օրաթերթ, «Անուշ» պոեմ, «Հայոց լեզու» հրատարակչություն, «Հայկագուն» ակումբ: Հիշեցնենք նաև, որ մատենագիտական ցանկերում վերնագրերը գրվում են առանց չակերտի: Կան, սակայն, չակերտների գործածության խնդրահարույց դեպքեր, որոնց էլ կանոնադրաճանաչենք:

Հոլովական վերջավորությունները և հոդերը գրվում են և՛ չակերտների ներսում, և՛ դրսում:

Հարցին անդրադարձել և որոշում է կայացրել Տերմինաբանական կոմիտեն դեռևս 1978 թվականին: Ըստ այդմ՝ չակերտների մեջ առնվող բառերի հոլովական վերջավորությունները և հոդերը, որպես կանոն, պետք է գրել չակերտներում: Օրինակ՝ գրել ոչ թե «Հայկական միջօրեական»-ի լրագրողը, այլ «Հայկական միջօրեականի» լրագրողը:

Միաժամանակ սահմանել է այն բացառությունները, որոնց դեպքում հոդերը և հոլովական վերջավորությունները պետք է գրել չակերտներից դուրս: Այսպես՝

- եթե անունն արտահայտված է ամբողջական նախադասությամբ, օրինակ՝ «Որտե՞ղ էիր, մարդ աստծո»-ի հեղինակը, «Մայրի՛կ, ես սիրում եմ քեզ»-ում.
- եթե անունը (բաղադրյալ լինելու դեպքում՝ վերջին բաղադրիչը) կա՛մ բառի հոլովական ձև է, կա՛մ չհոլովվող բառ, կա՛մ անձնական ու ցուցական դերանուն, օրինակ՝ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի»-ի, Լ. Յիպկինի «Ամառը Բաղենում»-ի, Հովհ. Գրիգորյանի «Քեզ հետ և քեզ համար»-ի բնագիրը, Պ. Սևակի «Դու»-ի վերլուծությունը:

Հոլովական վերջավորությունները և հոդերը կարելի է չակերտներից դուրս գրել նաև այն դեպքերում, երբ հատուկ նպատակ կա շեշտելու վերնագիրը: Որոշ դեպքերում, երբ առաջանում են անվան ընկալումը դժվարացնող և հայերենի համար անսովոր ձևեր, խորհուրդ է տրվում գործածել լրացյալ: Այսպես. ոչ թե ասել հատվածներ «Մատյան ողբերգության»-ից, այլ հատվածներ «Մատյան ողբերգության» աղոթամատյանից, ոչ թե՝ «Դուռը թակում են»-ի բովանդակությունը, այլ «Դուռը թակում են» վեպի բովանդակությունը:

Շատ հաճախ հայերեն չակերտների փոխարեն տեքստերում գործածում են օտար չակերտներ կամ այլ նշաններ, ինչպես՝ << >>, “”:

Հայերենում գործածվում են այս չակերտները՝ «»:

Տեղեկացնենք, որ հայերեն բացվող ու փակվող չակերտներ դնելու համար պետք է մուտքագրել, համապատասխանաբար, Alt+0171 և Alt+0187:

Երբեմն հարցնում են՝ ի՞նչ չակերտ գործածել, երբ հայերեն գրության մեջ կա օտարազիր միավոր:

Պետք է գործածել հայերեն չակերտը, քանի որ օտարալեզու միավորը հայերեն տեքստում է: Օրինակ՝ Նա «The New York Times»-ի թղթակից էր (նախընտրելին, անշուշտ, հայատառ գրությունն է՝ Նա «Նյու Յորք թայմսի» թղթակից էր):

Նույն հարցն առաջանում է նաև այն դեպքում, երբ օտար բառը գործածված է նախադասության մեջ որպես ինքնանվանողական միավոր: Օրինակ՝ «Նա փորձում էր գտնել անգլերեն *feedback* բառի համարժեքը»: Նման դեպքերում չակերտի առանձնացնող դերը կարելի է փոխարինել շղատառ կամ թավ գրությամբ:

Հաճախ պատահում է այնպես, որ չակերտով սկսվող ուրիշի ուղղակի խոսքը սկսվում կամ ավարտվում է մի արտահայտությամբ, որը ևս պետք է գրել չակերտում: Հարց է առաջանում. քանի՞ չակերտ պետք է գործածել այսպիսի դեպքերում: Պետք է գործածել երկու չակերտ, որովհետև, ըստ կանոնի, մեկը ներքին խոսքի, մյուսը, օրինակ, վերնագրի չակերտն է: Օրինակ՝ ««Լոռեցի Սաքոն» պոեմի մասին կգրեմ», - մտածում էր ուսանողը:

Գրե՞լ արդյոք ա-ից և ո-ից հետո գրվող յ-ն այն դեպքերում, երբ այս տառերից որևէ մեկով վերջանում է չակերտի ներսում գրված բառը:

Հոլովական վերջավորությունը չակերտի ներսում գրելիս յ-ն պետք է գրել, իսկ չակերտից դուրս՝ ոչ: Օրինակ՝ Ե. Չաբենցի «Սոմայի», սակայն «Սոմա»-ի:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Չակերտներ գործածելիս առաջնորդվել վերոշարադրյալ կանոններով:



Հարցական նշանի և հնչերանգի մասին

Հայտնի է, որ հայերենում հարցական նշանը դրվում է ոչ թե նախադասության վերջում, ինչպես անգլերենում, ռուսերենում և շատ այլ լեզուներում է, կամ նախադասության սկզբում և վերջում միաժամանակ, ինչպես իսպաներենում է, այլ հենց հարցում արտահայտող բառի վրա: Բայց հաճախ սխալմունք է առաջանում հարցական նշանի (պարույկի) ճիշտ տեղը որոշելիս:

Պետք է հիշել ու կիրառել հայերենում հարցական նշանը գրեթե միշտ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա (շեշտի պես): Նույն օրինաչափությամբ է ձևավորվում նաև հարցական հնչերանգը: Օրինակ՝ «**Գիտե՞ք**» (ոչ թե *գիտեք*), թե տոնածառը տեղափոխելու համար ինչքա՛ն փող է հարկավոր»:

Շեշտի մասին պատահաբար չհիշեցինք: Հարցական սխալ հնչերանգ կիրառողը հաճախ սխալվում է նաև բառը շեշտադրելիս. «Դուք հաստատ *գիտեք* (փոխանակ **գիտե՞ք**), թե տոնածառը տեղափոխելու համար *ինչքան* (փոխանակ **ինչքա՞ն**) փող է հարկավոր»:

Որոշ բացառությունների մասին

Եթե բառն ավարտվում է *ը* ձայնավորով, ապա հարցական հնչերանգ ստանում է դրան նախորդող վանկը (օրինակ՝ *բառարա՞նը, խո՞սքը* և այլն):

Հարցում արտահայտող դերանունները բառի վերջին ձայնավորի վրա գրավոր խոսքում սովորաբար կրում են հարցական նշան, ինչպես՝ *ե՞րբ, ինչո՞ւ, քանի՞, որտե՞ղ* և այլն:

Կանոնից շեղվում են *ո՞րերորդ, քանի՞երորդ, նո՞ւյնպես, նո՞ւյնչափ* դերանունները, - *երորդ* մասնիկով կազմված թվականները (*հի՞նգերորդ, տասնվե՞ցերորդ*), *մի՞թե* վերաբերականը, որոնց շեշտը դրվում է նախավերջին կամ դրան նախորդող վանկի վրա:

Որոշ հաղորդավարներ, գովազդ կարդացողներ երբեմն արտառոց, հայերենին անհարազատ ու սխալ լուծումներ են մատուցում եթերում: Օրինակ՝ «*Մսա՞մթերք էք նախընտրում, թե՞ կաթնա՞մթերք*»:

Եթե կարիք կա ընդգծելու մթերքի ինչպիսին լինելը, ապա կարելի է հետևյալ կերպ ասել՝
«Մսայի՜ն մթերք էք նախընտրում, թե՞ կաթնային» կամ **«Մսամթե՞րք էք նախընտրում, թե՞ կաթնամթե՜րք»:**

Օժանդակ բայերի վրա հարցական նշան դնո՞ւմ ենք:

Տեսե՛ք՝ գրել ենք՝ **դնո՞ւմ ենք** (ոչ թե *դնում ե՞նք*):

Հայերենում օժանդակ բայի վրա հարցական նշան չենք դնում, ուստի խրախուսելի է, որ բանավոր խոսքում նույնպես օժանդակ բայը չարտասանվի հարցական հնչերանգով (բարբառային խոսքը կամ անհատական մոտեցումը չհաշված): Օրինակ՝

- **«Արդեն քննարկե՞լ էք** (ոչ թե *քննարկել ե՞ք*) **հարցը**»:
- **«Նոր տոնածառը փոխանցո՞ւմ է** (ոչ թե *փոխանցում է՞*) **տոնական տրամադրություն**»:

Օժանդակ բայը հարցական հնչերանգով է արտասանվում և կրում հարցական նշան, եթե ժխտական խոնարհման բայաձև է: Օրինակ.

«Դեռ չե՞ք եկել»:

«Գիրքը չե՞ի՜ր կարդալու»:

«Չի՞ խոսելու»:

Հիշեցնենք նաև, որ մեր լեզվում կիրառելի է միայն պարույկը (ոչ թե «?», այլ «^օ»): Հմմտ.

«Կարո՞ղ եք գտնել այլ տարբերակներ?» փոխանակ **«Կարո՞ղ եք գտնել այլ տարբերակներ»:**

Ի դեպ, ոմանք «ու» տառի պարույկը դնում են լ-ի վրա, ոմանք՝ ո-ի: Ավանդաբար ընդունված է երկրորդ տարբերակը. **«Այդ ո՞ւր», «Ամո՞ւր ես կապել»:**

Ելնելով ասվածից՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

գրական բանավոր խոսքում պահպանել հայերենի հարցական ճիշտ հնչերանգը, իսկ գրավոր խոսքում հետևել կետադրելու ընդունված կանոնին:



Հայերենի շեշտի մասին

Հայերենի շեշտը կայուն է. սովորաբար շեշտվում է բառի վերջին վանկի ձայնավորը: Այդ շեշտը միևնույն ժամանակ շարժական է, քանի որ նոր վանկ ավելանալու դեպքում շեշտը տեղափոխվում է բառավերջի վանկի վրա: Այսպես՝ փողո՛ց, փողոցի՛, փողոցայի՛ն և այլն: Կան **բացառություններ**:

Այսպես՝ գաղտնավանկի դեպքում շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, օրինակ՝ երբե՛մն, ուրե՛մն, ա՛յժմ: Չի շեշտվում նաև ը որոշիչ հոդը. այս դեպքում ևս շեշտն ընկնում է նախավերջին վանկի վրա, օրինակ՝ նկա՛րը, քաղա՛քը, աշտարա՛կը:

Կան նաև բառեր, որոնցում շեշտվում է ոչ թե վերջին վանկի ձայնավորը, այլ նախավերջին կամ էլ դրան նախորդող վանկինը, օրինակ՝ մի՛գուցե, գրե՛թե, իհա՛րկե, մի՛թե (մի՞թե), ո՛րևէ և այլն: Այդպես՝ երորդ ածանցով կազմված դասական թվականների և դերանունների շեշտը բառավերջում չէ, օրինակ՝ հի՛նգերորդ, քսանյո՛թերորդ, ո՛րերորդ, քանի՛ երորդ և այլն:

Վերջին շրջանում զանգվածային լրատվության միջոցներով (հեռուստատեսություն, ռադիո) հնչող խոսքում հաճախ են հանդիպում հայերեն բառերը սխալ շեշտադրելու դեպքեր. շեշտում են ոչ թե բառի վերջին վանկի ձայնավորը, այլ շատ հաճախ՝ առաջինը: Այդ սխալները ուղղակի ականջ են ծակում: Բերենք օրինակներ, որոնք վերցվել են եթերից՝ հաղորդավարների խոսքից, գովազդից.

- «Գա՛գիկ (փոխանակ Գագի՛կ), ի՞նչ ես անում»:
- «Ե՛ղբայր (փոխանակ եղբա՛յր), դու գիտե՞ս՝ ի՛նչ են գողացել»:
- «Դի՛մավորեք (փոխանակ դիմավորե՛ք) այսօրվա մեր հյուրին»:
- «Զա՛րմանում եմ (փոխանակ զարմանո՛ւմ եմ), գիտե՞ս»:
- «Հայկական բո՛լոր (փոխանակ բոլո՛ր) ալիքները»:
- «Ո՛ւժեղ (փոխանակ ուժե՛ղ) պայքար է սպասվում»:
- «Երեկոյի ա՛նակնկալ (փոխանակ անակնկա՛լ) հյուրը»:
- «Մեր քաղաքում բնակարանները հա՛մեմատաբար (փոխանակ համեմատաբա՛ր) թանկ են»:

- «Վայելէ՛ք հա՛նքային (փոխանակ հանքայի՛ն) ջրի համը»:
- «Ամանորը գա՛լիս է (փոխանակ գալի՛ս է) նվերով»:
- «Գիշերային գները շա՛հավետ են (փոխանակ շահավե՛տ են)»:
- «Մա՛նրահատիկ, հա՛մեղ, հյո՛ւթալի...» (փոխանակ մանրահատի՛կ, համե՛ղ, հյութալի՛):
- «Հասանելի է միայն ա՛մենաեռանդուն (փոխանակ ամենաեռանդու՛ն) մասնակցին»:

Բոլոր դեպքերում պետք էր շեշտել բառի վերջին վանկի ձայնավորը: Ըստ հայերենի կանոնների՝ կրկնադիր շաղկապները շեշտվում են, օրինակ՝ թե՛ ..., թե՛ ..., և՛ ..., և՛ ..., ո՛չ ..., ո՛չ... և այլն: Արգելական հրամայականի դեպքում շեշտվում է մի մասնիկը՝ «Մի՛ հուշիր»:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

շեշտը դնել բառի վերջին վանկի ձայնավորի վրա (բացառությունները չհաշված).
շեշտել հրամայականի արգելական մասնիկը:



«Որ, որպեսզի» շաղկապների մասին

Որ շաղկապը կարող է արտահայտել մեկնական, նպատակի, պայմանի, պատճառի, ժամանակի և այլ իմաստներ:

Ի տարբերություն **որ**-ի՝ **որպեսզի**-ն ունի միայն նպատակի իմաստ, այսինքն՝ գլխավոր նախադասությանը կապում է նպատակի պարագա երկրորդական նախադասություն: **Որպեսզի**-ի նպատակի իմաստն ընկալելի է նույնիսկ խոսքից դուրս: Ինչպես տեսնում ենք, այս շաղկապների գործառույթները համընկնում են մեկ դեպքում. երբ գլխավոր նախադասությանը միացնում են նպատակի պարագա նախադասություն: Այստեղից կարող ենք հետևություն անել. **որ** շաղկապը **որպեսզի**-ին կարող է փոխարինել գրեթե բոլոր դեպքերում, իսկ **որպեսզի**-ն **որ**-ին միայն այն դեպքում, երբ երկրորդական նախադասությունը նպատակի պարագա է:

Վերջին ժամանակներս ոմանք խուսափում են **որ** շաղկապը կիրառելուց՝ մտածելով, թե **որպեսզի**-ն պաշտոնական ոճին առավել պատշաճ է: Սա թյուր կարծիք է:

Զանգվածային տեղեկատվության միջոցներում, պաշտոնական խոսքում հաճախադեպ են **ոքսլեսզի**-ի գործածության և խալները:

Բերենք օրինակներ.

- «Հարկային ու մաքսային մարմինները տարիներ շարունակ նպաստել են, **ոքսլեսզի** որոշ իշխանավորների բանկային հաշիվները գնալով մեծանան»:
«Կողմերից ամեն մեկը ցանկանում է թույլ չտալ, **ոքսլեսզի** իր իրավունքները խախտվեն»:
- «Նախընտրելի է, **ոքսլեսզի** թեկնածուն լինի այն համայնքից, որի ղեկի համար պայքարում է»:
- «Նա պնդում է, **ոքսլեսզի** նոր սահմանադրության նախագծի մեջ ամրագրվի այդ դրույթը»:
- «Ժամանակն է, **ոքսլեսզի** մենք ինքներս մի րոպե կանգ առնենք»:
- **Ոքսլեսզի** շաղկապի գործածության ճշտությունը կարելի է պարզել հարցով:
Նպատակի պարագան պատասխանում է *ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով* հարցերին: Բերված օրինակներում գլխավոր նախադասություններից հետո չենք ասի՝ *ինչո՞ւ* (ի՞նչ նպատակով, ինչի՞ համար): Այլ՝
- «... նպաստել են (*ինչի՞ն*), **ոք** նրանց բանկային հաշիվները գնալով մեծանան»:
- «... ամեն մեկը ցանկանում է թույլ չտալ (*ի՞նչ*), **ոք** իր իրավունքները խախտվեն»:
«Նախընտրելի է (*ի՞նչք*), **ոք** թեկնածուն լինի այն համայնքից, որի ղեկի համար պայքարում է»:
- «Նա պնդում է (*ի՞նչ*), **ոք** նոր սահմանադրության նախագծի մեջ ամրագրվի»:
«Ժամանակն է (*ինչի՞ն*), **ոք** մենք ինքներս մի րոպե կանգ առնենք»:
- Համոզվում ենք, որ այս օրինակներից ոչ մեկում երկրորդական նախադասությունը նպատակի պարագա չէ, և, բնականաբար, պետք էր գործածել **ոք** շաղկապը: Իսկ ահա այս նախադասություններում **ոքսլեսզի**-ն ճիշտ է գործածված.
- «ՀՀ քաղաքացիություն են ընդունել (*ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով*), **ոքսլեսզի** գոնե կենսաթոշակ ստանալու հնարավորություն ունենան»:

- «Օգնենք նրանց (*ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նպատակով*), *որպեսզի* կարողանան մոռանալ ողբերգությունը»:

Ինչպես ասվեց, **որպեսզի**-ի փոխարեն կարող է գործածվել նաև **որ**-ը. «Օգնենք նրանց, **որ** կարողանան մոռանալ ողբերգությունը»:

Նկատի ունենալով այս ամենը, **որ** և **որպեսզի** շաղկապների ռանձնահատկությունները՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

երկրորդական նախադասությունը նպատակի պարագա լինելու դեպքում հավասարապես գործածել **որպեսզի** կամ **որ** շաղկապները.

երկրորդական նախադասությունը նպատակի պարագա չլինելու դեպքում գործածել միայն **որ**-ը:



Փողոցների և հրապարակների

անվանումների մասին

Հաճախ հարց է ծագում, թե ինչպես պետք է գրել կամ արտասանել փողոցների և հրապարակների անվանումները:

Երբ փողոցների և հրապարակների բաղադրյալ անունների լրացումներն ածական են, ամեն ինչ պարզ է, քանի որ կարող են լինել միայն ուղիղ ձևով (*Հյուսիսային պողոտա, Անտառային փողոց, Վրացական փողոց,*

Երիտասարդական փողոց, Առափնյա փողոց, Արարատյան փողոց և այլն):

Մյուս դեպքերում հարցեր են առաջանում, ինչպես՝ *Մաշտոց պողոտա*, թե՞ *Մաշտոցի, Նալբանդյան փողոց*, թե՞ *Նալբանդյանի, Գարեգին Նժդեհի հրապարակ*, թե՞ *Գարեգին Նժդեհ* և այլն:

Երբեմն հարցեր են առաջանում նաև մեր փողոցների և հրապարակների անվանումներն այլ լեզուներով գործածելիս, թեև Տերմինաբանական կոմիտեն այդ մասին որոշում

ընդունել է դեռևս 1956 թվականին: Այդ հարցերին տարիներ առաջ անդրադարձել է նաև Հայերենի բարձրագույն խորհուրդը:

Այժմ թեև շատերն առաջնորդվում են սահմանված կանոններով, այսուհանդերձ դեռևս կան անհարկի բազմաձևություններ:

Այդ անմիօրինակությունը վերացնելու, հայերենին հարազատ քերականական ձևերի գործածությունը խրախուսելու նպատակով կոչ ենք անում հետևել ընդունված կանոններին:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

ա. Փողոցների և հրապարակների բաղադրյալ անունների գոյական կամ գոյականական բառակապակցություն լրացումը *փողոց*, *պողոտա* և *հրապարակ* բառերի հետ, որպես կանոն, գործածել սեռական-տրական հոլովով: Օրինակ՝ գրել ոչ թե *Մաշտոց պողոտա*, *Տիգրան Մեծ պողոտա*, *Գարեգին Նժդեհ հրապարակ*, այլ *Մաշտոցի պողոտա*, *Տիգրան Մեծի պողոտա*, *Գարեգին Նժդեհի հրապարակ* և այլն:

բ. Փողոցների, պողոտաների և հրապարակների *-յան* և *-յանց* ածանցներով կազմված ազգանուն լրացումը *փողոց*, *պողոտա* և *հրապարակ* բառերի հետ գործածել ուղղական հոլովով: Օրինակ՝ *Արմյան փողոց*, *Թումանյան փողոց*, *Սուրենյանց փողոց*, *Մարշալ Բաղրամյան պողոտա*, *Շահումյան հրապարակ* և այլն:

գ. Փողոցների անունները, որպես հատուկ անուններ, այլ լեզուներով գործածելիս ոչ թե թարգմանել, այլ տառադարձել: Օրինակ՝ *Անտառային*, *Հանրապետության* փողոցների անունները գրել ոչ թե *улица Лесная*, *Forest Street*, *улица Республики*, *Republic Street*, այլ *улица Антраин*, *Antarayin Street*, *улица Анрапетутян*, *Hanrapetutyayn Street*:

Եթե փողոցների կամ հրապարակների բաղադրյալ անուններում կան հատուկ անուններ, այլ լեզուներով գործածելիս դրանք կիրառել տվյալ լեզվի կանոններին համապատասխանող հոլովով: Օրինակ՝ գրել ոչ թե *улица Чаренци*, *Charentsi Street*, *площадь Гарегин Нжде*, *Garegin Nzhdehi Square*, այլ *улица Чаренца*, *Charents Street*, *площадь Гарегина Нжде*, *Garegin Nzhdeh Square* և այլն:





«ՈՒ» տառի գրության մասին

Մեր օրերում հանդիպում են «ու» տառի գրության տարբերակներ, որոնք խորթ են հայ գրչության ավանդույթին:

Համակարգիչների, բջջային հեռախոսների հայերեն ստեղնաշարերն ամրապնդել են «ու»-ի՝ երկու բաղադրիչից բաղկացած մեկ տառի ընկալումը: Անկախ նրանից՝ «ու»-ն միատառ, թե երկտառ ենք դիտարկում, այն բաղկացած է երկու գրանշանից՝ ո-ից և լ-ից, որոնցից յուրաքանչյուրը մյուս գրանշանների նման ունի մեծատառ ու փոքրատառ:

Այս տառի գրության որոշ առանձնահատկություններ կան:

«ՈՒ»-ն մեծատառ գրելիս մեծատառ գրանշանով պետք է գրել միայն նրա առաջին բաղադրիչը՝ ո-ն: Օրինակ՝ *Ուջան, Ուռուտյան, Ուրուզվայ* (և ոչ *ՈՒջան, ՈՒռուտյան, ՈՒրուզվայ*):

Ամբողջ բառը կամ նախադասությունը գլխագրերով գրելիս սխալ է լ-ի փոքրատառ գրությունը: Օրինակ՝ պետք է գրել ոչ թե *ՏՈՒՆ, ՁՈՒԿ*, այլ *ՏՈՒՆ, ՁՈՒԿ*. ոչ թե *ՈւՍՈւՑՈւՄԸ ՇԱՐՈւՆԱԿՎՈւՄ է*, այլ *ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է*:

Ցրիվ շարվածքի դեպքում «ու» տառի բաղադրիչները ևս՝ «ո»-ն և «լ»-ը, պետք է գրվեն իրարից հեռու: Օրինակ՝ *ու լ ս ու լ մ* (ոչ թե *ու ս ու մ*), *Ու լ ս ու լ մ* (ոչ թե *Ու ս ու մ* կամ *ՈՒ ս ու մ*), *ՈՒ Ս ՈՒ Մ* (ոչ թե *Ու Ս Ու Մ* կամ *ՈՒ Ս ՈՒ Մ*):



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

«ու» տառը գրելիս հետևել վերոնշյալ կանոններին:



«Առթիվ» և «կապակցությամբ» բառերի գործածության մասին

Հաճախ լինում են բանավեճեր «առթիվ» («առիթով») և «կապակցությամբ» բառերի գործածության վերաբերյալ: Ոմանք պնդում են, թե «առթիվ»-ն ունի դրական երանգ, և այն պետք է գործածել միայն ուրախ առիթների դեպքում՝ «կապակցությամբ»-ին վերագրելով հակառակ իմաստը: Շատերն էլ ուրախ երանգներ են տեսնում «կապակցությամբ»-ի մեջ՝ «առթիվ»-ին վերապահելով տխուր առիթները: Կա նաև երրորդ կարծիքը. երկու բառն էլ բոլոր դեպքերում կարելի է գործածել: Հարցը քննենք՝ պարզելով, թե «առթիվ» և «կապակցությամբ» բառերն ի՞նչ իմաստով են գործածվել և գործածվում այժմ: Բերենք օրինակներ.

- «Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ» (Հովհաննես Թումանյան):
- «Գումի դռանը հավաքվել, գործն սկսելու առիթով արդեն օդու շիշ էին բացում» (Հրանտ Մաթևոսյան):
- «Ես ուզում էի ծննդյան օրվա առթիվ տուն հրավիրել» (Զորայր Խալափյան):
- Ինչպես նկատում ենք, հայ գրողները «առթիվ»-ի մեջ միայն ուրախ կամ միայն տխուր երանգ չեն տեսել:
- Անդրադառնանք «կապակցությամբ» բառին (բառաձևին): Բերենք օրինակներ.
- «Շատ ուշ՝ արդեն պատերազմից հետո, նրա մահվան կապակցությամբ իմացա...» (Ադասի Այվազյան):
- «Մայրս երբեք չէր պատմել իմ ծննդյան կապակցությամբ հորս արած առատաձեռնության մասին» (Հենրիկ Սևան):
- «Մայիսի մեկին զանգ տվեց, հիմա էլ մամուլի օրվա կապակցությամբ զանգ կտա» (Վահագն Գրիգորյան):

Ակներև է, որ գրողները «կապակցությամբ»-ը գործածել են ինչպես ուրախ (կամ չեզոք), այնպես էլ տխուր առիթների դեպքում, այսինքն՝ բառը միայն դրական կամ միայն բացասական երանգ չունի:

Իսկ ի՞նչ են ասում բառարանները:

Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»՝ **«առթիվ»**-ն ունի հետևյալ իմաստները՝ 1. վերաբերմամբ, նկատմամբ, մասին, 2. **կապակցությամբ**, առնչությամբ: Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» այն բացատրված է այսպես՝ 1. մասին, վերաբերմամբ, **կապակցությամբ**, 2. պատճառով, համար, առիթով:

Երկու բառարանում էլ **«առթիվ»**-ի իմաստներից մեկը **«կապակցությամբ»**-ն է, և խոսք չկա նրանց իմաստային-ոճական տարբերակման մասին:

Ներկայացնենք «կապակցություն» բառի իմաստը (բառարանները «կապակցությամբ» գլխաբառ չունեն. այն համարել են «կապակցություն» բառի սոսկ գործիական հոլովածը):

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» բացատրում է. 1. կապակցված՝ շաղկապված լինելը, 2. կապ, առնչություն, 3. հարաբերություն, 4. լծակցություն, կողակցություն, 5. նախադասության անդամների մտքի կապը նրանց որոշակի դասավորությամբ.... 6. **առիթով** (գործիական հոլովով կապական կիրառությամբ):

Ակնհայտ է, որ բառարանային բացատրությամբ ևս այս բառերը չունեն ուրախության կամ տխրության որևէ երանգ:

«Առթիվ» / «առիթով» բառագույգի գործածության խնդիրներ հիմնականում չկան: Ի դեպ, այստեղ գործ ունենք նույն «առիթ» բառի գործիական հոլովի հետ («առթիվ»-ը գրաբարյան ձև է): Հաճախ նախադասության մեջ երկուսն էլ կարող են գործածվել, ինչպես՝ «Կազմակերպվեց համերգ Հաղթանակի օրվա **առթիվ** (**առիթով**)»:

Ի՞նչ հետևության ենք հանգում:

«Առթիվ» («առիթով») և «կապակցությամբ» բառերը կարող են գործածվել և՛ ուրախ, և՛ տխուր հանգամանքներում, ինչպես շնորհավորանքի, այնպես էլ ցավակցության խոսք հղելիս (ասելիս): Նրանք չեն արտահայտում հեղինակի դրական կամ բացասական վերաբերմունք որևէ բանի նկատմամբ:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

չսահմանափակել «առթիվ» և «կապակցությամբ» բառերի գործածության շրջանակը, նրանց չվերագրել մտացածին վերաբերմունքային երանգներ:





Կախման կետերի և բազմակետի

գործածության մասին

Հաճախ նկատվում է կախման կետերի ու բազմակետի ընկալման և գործածության անմիօրինակություն:

Կախման կետերը (...) դրվում են կիսատ թողած մտքի փոխարեն, երբ նախադասության մեջ առկա են չդրսևորված հույզ, զգացմունք, միտքը շարունակելու կամ ավարտելու դժվարություն, անվճռականություն: Կախման կետեր կարող են դրվել նախադասության տարբեր հատվածներում: Օրինակ՝

- *Դա՛վ... դա՛վ... ելե՛ք... կոչնա՛կ... պահնա՛կ...*
Զենք առեք շո՛ւտ... ձի հեծե՛ք, ձի՛... (Հովհ. Թումանյան):
- *Մուրը հյուսում է տրտմության ժանյակ,*
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում.
– Իմ սիրտը տրտո՛ւմ, իմ սիրտը մենա՛կ... (Վ. Տերյան):
- *Ինչ տեսա՞... Հիմա... Հիմա, հիմա... Որտե՞ղ ինչ տեսա... Տա՞նք... Ո՞ւմ տանք...*
Ի՞նչ տուն... Ես եմ սպանել... (Պ. Զեյթունցյան):

Կախման կետերը ցույց են տալիս նաև ինչ-ինչ պատճառներով մտքի ընդհատված լինելը, տևական դադարները մտքի տարբեր հատվածների միջև: Օրինակ՝ *Իսկ նա... նա պարտավոր է ինձ ասել, արհամարհել... այնպես չէ՞...* (Ալ. Շիրվանզադե):

Երբ ավարտուն միտք ենք ունենում, կախման կետերը վերջակետի արժեք են ձեռք բերում, և նրանցից հետո նախադասությունն սկսվում է մեծատառով: Օրինակ՝ *Մի րհավր թռել էր հեռու... Մամռոտ քարի վրա երկու փետուր էր ընկած* (Ա. Բակունց):

Կախման կետերը, ինչպես տեսանք, դրվում են նախորդող միավորին կից:

Բազմակետը (...) դրվում է մեջբերվող խոսքի կրճատված մասի փոխարեն: Օրինակ՝ *«Այս բաժանումը բացի աշխարհագրականից, ունի նաև պատմա-ավանդական և լեզվաբանական հիմք, եթե նկատի առնենք արևմտահայ և արևելահայ գրական լեզուների գոյությունը՝ ձևաբանական մի այնպիսի նկատելի տարբերությամբ, ինչպիսին ներկայի*

կազմությունն է» (Գ. Ջահուկյան, «Հայ բարբառագիտության ներածություն»): Գ. Ջահուկյանի խոսքից կրճատվել է «ինչպես հայտնի է» արտահայտությունը, որը տվյալ դեպքում անհրաժեշտ չէ:

Պետք է նկատի ունենալ, որ բազմակետը երկու կողմից առանձնանում է բացատներով:

Հավելենք, որ գիտական խոսքում բնագրի կրճատված մասի փոխարեն նաև այս՝ <...> պայմանական նշանն են դնում: Օրինակ՝ **«Այսպիսի պատկերումը կլուսավորի միայն մի փոքր տարածություն, իսկ կերպարը կստացվի շատ նեղ, սխեմատիկ, անարյուն, <...> չի արտահայտի իրականության բուն էությունը»** (Դ. Դեմիրճյան):

Կախման կետերն ու բազմակետը իրարից տարբերվում են միայն մեկ կետով, բայց տարբեր նշաններ են, և սխալ է մեկը մյուսի փոխարեն կիրառելը: Կետադրական այս նշանների մասին անհրաժեշտ է իմանալ հետևյալը.

- կախման կետերի միջոցով նշվում են անավարտ մնացած, բառերով չարտահայտած, չդրսևորված միտքը, հույզը կամ զգացմունքը, իսկ բազմակետը նշում է մեջբերվող խոսքի որևէ հատվածի կրճատված լինելը.
- կախման կետերը բնորոշ են գեղարվեստական, իսկ բազմակետը՝ գիտական ոճին.
- կախման կետերը գործածվում են թե՛ հեղինակային, թե՛ մեջբերվող խոսքում, իսկ բազմակետը՝ միայն մեջբերվող խոսքում.
- կախման կետեր ունեցող հատվածն արտասանվում է ոչ ավարտուն հնչերանգով. բազմակետի դեպքում արտասանական առանձնահատուկ երանգ չի դրսևորվում:

Այսպիսով՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

բազմակետն ու կախման կետերը գործածել ճիշտ և տեղին:



«Չ» ածանցով բայերի մասին

Մոսկաձանցավոր բայերի համակարգում քանակային առումով վերջին տեղում «չ» ածանցն ունեցող բայերն են: Դրանք անորոշ դերբայի ել մասնիկից առաջ ունեն «չ» ածանցը՝ դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, սառչել, ուռչել, փախչել և այլն: Կան այս բայերի գործածության տարածված սխալներ: Ի՛նչ սխալներ են դրանք, ինչպե՞ս խուսափել դրանցից: Ահա մամուլում և բանավոր խոսքում հաճախ հանդիպող սխալների օրինակներ՝

- «Գնդակը *դիպչել է* դարպասաձողին»:
- «Նա գնաց օդանավակայան և *թռչեց* Մոսկվա»:
- «Երկու ծայրահեղության արանքում *կորչեց* բուն խնդիրը»:
- «Դժբախտությունը ցավալի կերպով *կպչեց* ինձ»:
- «Մոմը դանդաղ *հանգչեց*»:
- «Վարորդը փորձել է *փախնել* դեպքի վայրից»:

Սխալներից զերծ մնալու համար պետք է իմանալ, թե ինչպես են կազմվում նշված բայերի ժամանակաձևերը: Ամեննին բարդ չէ: Ընդամենը պետք է հիշել, որ դուրս է ընկնում «չ» ածանցը, և այս բառերն ունենում են հետևյալ ձևը.

- **դիպել է, թռել է, կորել է, կպել է, հանգել է, փախել է** (և ոչ՝ դիպչել է, թռչել է, կորչել է, կպչել է, հանգչել է, փախչել է), նույն կերպ նաև հոգնակիում՝ **դիպել ենք, կորել ենք, կպել ենք, թռել ենք** և այլն (վաղակատար ներկա).
- **դիպավ, թռավ, կորավ, կպավ, հանգավ, փախավ** (և ոչ՝ դիպչեց, թռչեց, կորչեց, կպչեց, հանգչեց, փախչեց) և այլն (անցյալ կատարյալ).
- **դիպի՛ր, թռի՛ր, կորի՛ր, կպի՛ր, հանգի՛ր, փախի՛ր** և այլն (հրամայական եղանակ):
- Ավանդույթի ուժով որոշ դեպքերում պահպանվում է **հանգչել** բայի «չ» ածանցը (օրինակ՝ *հանգչի՛ր խաղաղությամբ*):

Հակառակ նշված իրողությունների՝ շատերն էլ «չ» ածանցը երբեմն չեն պահում այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է: Այս սխալը հանդիպում է *կորչել* բայի որոշ

Ժամանակաձևեր կազմելու ժամանակ: Օրինակ՝ պետք է լինի *կորչում է, կկորչի, պիտի կորչի*, այլ ոչ՝ *կորում է, կկորի, պիտի կորի*:

Սառչել և *ուռչել* բառերը ևս խոնարհվում են նույն սկզբունքով: Ընդ որում, սրանց գուգահեռ ունենք *սառել* և *ուռել* բառերը: Ի դեպ, *սառա, սառար, սառալ, ուռա, ուռար, ուռալ* ձևերը, որոնք մի ժամանակ համարվում էին միակ կանոնականը, այժմ ընկալվում են որպես ոչ գրական՝ բարբառային, խոսակցական: Այսինքն՝ արդի հայերենում ճիշտ են համարվում *սառեցի, սառեցիր, սառեց, ուռեցի, ուռեցիր, ուռեց* ձևերը:

Խոսակցական լեզվին բնորոշ են այս շարքի մի քանի բայերի «ն» ածանցով *թռնել, կպնել, փախնել* տարբերակները, որոնք թեև հանդիպում են նաև գեղարվեստական գրականության մեջ, սակայն գրական լեզվում հանձնարարելի չեն:

Նկատի ունենանք, որ մի քանի դեպքում էլ ունենք չ-վիոփոխությամբ կազմվող ձևեր (*թաքչել-թաքնվել, հալչել-հալվել, փլչել-փլվել*), որոնցից ներկայումս տարածված և նախընտրելի են երկրորդ տարբերակները (բացառություն է *հալչել* բայի անկատար ներկա ժամանակաձևը՝ *հալչում է*, որն արդի հայերենում գործածական է):

Հիմք ընդունելով ասվածը՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

նշված բայերի դիմավոր և անդեմ ձևերը կազմելիս առաջնորդվել վերոհիշյալ կանոններով:



Տոնական հորդորակ

Խոսենք մեր տոներից մեկին՝ Ամանորին առնչվող լեզվական միավորների մասին:

Արևելահայերենում այս տոնն անվանելիս գործածվում են *Նոր տարի* և *Ամանոր* անունները, արևմտահայերենում՝

հիմնականում *Գաղանդ* և *Ամանոր*, վերջին շրջանում՝ նաև *Նոր տարի*:

Նոր տարվա՝ Ամանորի կամ *Գաղանդի* տոնին արևելահայ երեխաները անձկությամբ սպասում են *Ձմեռ պապին (պապիկին)*, իսկ արևմտահայ փոքրիկները՝ *Գաղանդ պապուկին (պապային)*:

Ըստ մեծատառերի գործածության մասին կանոնի՝ տոների անունները գրվում են մեծատառով՝ **Նոր տարի** (առաջին բաղադրիչը), **Կաղանդ** և **Ամանոր**:

Ամանոր բառը կազմված է **ամ** (նշանակում է «տարի») և **նոր** արմատներից, որոնք միացել են **ա** հոդակապով: **Ամ** արմատով են կազմվել **ամենամյա, ամապերջ, բազմամյա, տասնամյակ** և բազմաթիվ այլ բառեր: Միավորում են նրանք, ովքեր բառը օ-ով են գրում՝ կարծելով, թե արմատը օր-ն է:

Կաղանդ բառը փոխառվել է հունարենից (սա էլ իր հերթին վերցրել է լատիներենից):

Կարծիք կա, թե ճիշտ է **Ամանորի** ձևը, իսկ **ամանորյա** ածականը սխալ է: Ասենք, որ երկուսն էլ ճիշտ են, երկու ձևերն էլ հավասարապես կիրառելի են: **Ամանորյա** բառը սխալ համարողները նշում են, որ **նորյա** բառ առանձին չի գործածվում, ուստի **ամանորյա** չի կարող լինել: Այո՛, **նորյա** բառ չկա, բայց այս դեպքում **-յա** վերջածանցը միացել է ոչ թե **նոր** արմատին, այլ **ամանոր** բառին: Այդպես՝ չունենք **ջրյա**, բայց ունենք **ստորջրյա**, չունենք **երկրյա**, բայց ունենք **ստորերկրյա** և նման այլ բառեր: Ուստի ճիշտ են թե՛ «Բոլոր երեխաները **Ամանորի** նվերներ ստացան» և թե՛ «Բոլոր երեխաները **ամանորյա** նվերներ ստացան»:

Նոր տարվա՝ Ամանորի կամ **Կաղանդի** տոնի անբաժան մասն է **տոնածառը՝** եղևնին: Բայց **եղևնին** չպետք է շփոթել **տոնածառի** հետ: **Տոնածառը** զարդարված **եղևնին** է:

Եղևնին դեռևս **տոնածառ** չէ. «**Եղևնին** անտառից եկավ տուն, զարդարվեց ու դարձավ **տոնածառ**»:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

հաշվի առնել մեր հիշեցումները.

1. **Նոր տարի, Ամանոր** և **Կաղանդ** բառերը նույն տոնի տարբեր անվանումներ են, գրվում են մեծատառով (**Նոր տարի** անվանման դեպքում՝ միայն առաջին բաղադրիչը),
2. նույն նշանակությունն ունեն **Ձմեռ պապ / պապիկ** և **Կաղանդ պապուկ / պապա** բառակապակցությունները. սրանց առաջին բաղադրիչները գրվում են մեծատառով.
3. **Ամանորի** և **ամանորյա** լեզվական միավորները հավասարապես ճիշտ են.
4. չպետք է նույնացնել **եղևնին** և **տոնածառը**:



«Վ» ածանցով սխալ բայաձևեր կազմելու և

գործածելու մասին

Կրավորական սեռի բայերը ցույց են տալիս գործողություն, որը ենթական կրում է իր վրա: Կազմվում են միայն ներգործական սեռի բայերից, որոնց ավելանում է **վ** ածանցը, ինչպես՝ **գնահատել-գնահատվել, հրավիրել-հրավիրվել**:

Հասկանալի է, **վ** ածանց կարող են ստանալ ոչ բոլոր բայերը, սակայն որոշ դեպքերում մենք դա նրանց «պարտադրում ենք»՝ կազմելով սխալ ձևեր: Օրինակ՝ «խնդրել» բայից կազմվող *խնդրվել*-ը հաճախ տեսնում ենք զանազան գրություններում՝ «*խնդրվում է չծխել*», ժողովների ժամանակ բարձրախոսով «խնդրվում է անցնել դահլիճ», հասարակական վայրերում «*խնդրվում է չաղտոտել*»: Այս բոլոր դեպքերում պետք է ասել (գրել). «*խնդրում ենք չծխել*», «*խնդրում ենք / եմ անցնել դահլիճ*», «*խնդրում ենք չաղտոտել*»:

Սխալներ հանդիպում են նաև «սպասել» և «սպասվել» բառերի գործածության ժամանակ: Ոմանք չեն կողմնորոշվում, թե ո՛րն է ճիշտ. օրինակ՝ «Երիտասարդությանը *սպասո՞ւմ է, թե՞ սպասվո՞ւմ է* լավ ապագա» կամ «Առաջիկայում բնակչությանն *սպասո՞ւմ են, թե՞ սպասվո՞ւմ են* անակնկալներ»:

Բնականաբար, ճիշտ չեն «*Հայաստանին սպասվում է* լավ ապագա», «*Բնակչությանն սպասվում են* անակնկալներ» և համանման նախադասությունները, որովհետև ինչպես «Ուսուցչին սպասում են աշակերտները» կամ «Ուղևորները սպասում են ավտոբուսի», այնպես էլ «*Հայաստանին սպասում է* լավ ապագա», «*Բնակչությանը սպասում են* անակնկալներ»:

Կարող է հարց ծագել. իսկ սխալ չե՞ն, օրինակ, «Վաղը սպասվում է անձրև», «Հաջորդ շաբաթ սպասվում է ձյուն» և նման ձևակերպումները, որոնք լսում ենք հաճախ:

Հակառակ որոշ առարկությունների՝ սրանք թերևս կարելի է ճիշտ համարել, որովհետև հայերենն ընդունել է այս արտահայտությունները:

Միսլ կլինեն, եթե շեշտվեր, թե ո՛ւմ է սպասում անձրև, կամ թե ո՛ւմ է սպասում տաք եղանակ. «Վաղը ~~սեզ~~ անձրև է սպասվում», «Եկող ամիս ~~երևանցիներին~~ սպասվում է տաք եղանակ» և այլն:

Բոլորովին ցանկալի չէ, սակայն, այս արտահայտությունները չարաշահելը, ասելիքը միշտ նույն կաղապարով ներկայացնելը: Այդ ամենը կարելի է շարադրել նաև այլ կերպ՝ գործածելով հոմանիշ բառեր: Օրինակ՝ «*Կանխատեսվել է անձրև (ձյուն)*» կամ «*Ըստ օդերևութաբանների կանխատեսման՝ առաջիկա օրերին կլինեն տեղումներ*»: Կամ՝ «Վաղը ձյուն է *ակնկալվում*»:

Անդրադառնանք նաև «*տուժվել*» բայի գործածությանը: Միսլների պատճառով, օրինակ, մենք *տուժո՞ւմ ենք*, թե՞ *տուժվում*:

Թեև ժամանակակից հայերենի բառարաններում արձանագրված է նաև *տուժվել*-ը, սակայն ներկայումս միակ ճիշտ և կանոնական ձևը *տուժել*-ն է (վ-ն ավելորդ է, քանի որ *վ* ածանց կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը, իսկ *տուժել*-ը չեզոք է):

Հիշեցնենք նաև, որ սխալ է «քծնել» բայից կազմված *քծնվել*-ը, որը տարածված է հատկապես բանավոր խոսքում:

Կրկնենք. *քծնել*-ը չեզոք բայ է, *վ* չի կարող ստանալ:

Անդրադառնանք ևս մի սխալի, որը հաճախ է հանդիպում հատկապես պատգամավորների, պաշտոնյաների խոսքում: «*Կրկնվեմ մեկ անգամ ևս*», «*Ես նորից կրկնվեմ*», «*Պետք է դարձյալ կրկնվեմ*» և այս կարգի այլ արտահայտությունները ճիշտ չեն, քանի որ նման դեպքերում *կրկնել*-ը *վ* չի ստանում, կրավորական չի դառնում. մեր լեզվատրամաբանությամբ անձը կրկնում է ասածը, ոչ թե ինքն իրեն:

Ուրեմն հիշենք ու այսուհետև նորից, դարձյալ կամ մեկ անգամ ևս ոչ թե *կրկնվենք*, այլ միայն և միայն *կրկնենք*:

Նույն տրամաբանությամբ՝ սխալ է նաև *խոստովանվել*-ը: Այստեղ ևս չկա *վ*-ի կարիքը: Մեր մեղքը, հանցանքը կամ զանցանքը ինքներս մեզ կամ թե ուրիշի *խոստովանում* ենք, այլ ոչ *խոստովանվում*: Թերևս մեր սխալները խոստովանելով էլ պայմանավորվենք այսուհետև ոչ թե իրար *զանգվել*, այլ բացառապես *զանգել*: Հարկ եղած դեպքում՝ *վիճել*, ոչ թե *վիճվել*: Ամեն դատարկ բանի համար *չնեղսրտել*...



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

նկատի ունենալ լեզվական նշված օրինաչափությունները և *վ* ածանցով բայերը ճիշտ ձևով գործածել ճիշտ տեղում:



Բայերի ելակետային ձևերի սխալ

գործածության մասին

Ժամանակակից արևելահայերենի բայերի ելակետային ձևերը կազմվում են երկու վերջավորությամբ՝ *ել* և *ալ*: Այսպես՝ *գործել*, *շահել*, *զեղչել*, *թպրտալ*, *թնդալ*, *զղջալ*: Վերջավորությունների *ե* և *ա* ձայնավորները պահպանվում են բայական տարբեր ձևերում, ինչպես՝ *գործեցինք*, *զեղչեց*, *թնդացին*, *զղջաց* և այլն:

Կան նաև բայեր, որոնք ունեն խոնարհման զուգաձևություն, օրինակ՝ *սարսռալ/սարսռել* բայը ենթարկվում է թե՛ *ա*, թե՛ *ե* խոնարհման, այսպես՝ *սարսռացի*, *սարսռացիր*, *սարսռաց* կամ *սարսռեցի*, *սարսռեցիր*, *սարսռեց*: Այդպես էլ՝ *ափսոսալ* և *ափսոսել*, *փողփողալ* և *փողփողել*, *վետվետալ* և *վետվետել* (թեթև՝ աննկատելի ալիքներով ծփալ), *կաթել* և խոսակցական *կաթալ*, *ոստոստալ* և *ոստոստել* (հաճախակի ուսույուններ անել), *հաչել* և խոսակցական *հաչալ*, *հեծեծել* և խոսակցական *հեծեծալ* (հառաչել, ողբալ) և այլն:

Միայն մեկ բացառություն կա: Հայերենի ամենագործածական բայերից *ասել*-ը, որն անկանոն բայ է, պատկանում է *ե* խոնարհման, սակայն ժամանակային որոշ ձևեր կազմելիս ենթարկվում է *ա* խոնարհման՝ *ասացի*, *ասացիր*, *ասաց* (հմմտ. ասացվածք, հեքիաթասաց, ասացող), ոչ թե ասեցի, ասեցիր, ասեց և այլն: *Ե*-ով կազմված ձևերը բնորոշ են խոսակցական լեզվին:

Նույնքան հաճախական է *խոսել* բայը, որը, ի տարբերություն *ասել*-ի, կանոնական է. բայական դիմավոր և անդեմ ձևեր կազմելիս կիրառվում է *ե*-ն: Այսպես՝ *խոսեցի* – *խոսեցիր* – *խոսեց*, *խոսել (ե)* – *խոսելու* – *խոսելով* – *խոսած*, *խոսի՜ր...*

Երբ ընտրվում է ելակետային սխալ ձևը, սկսվում է սխալների շղթան: Այսպես՝ *խոսալ* – *խոսացի* – *խոսացիր* – *խոսաց, խոսացել (է)* – *խոսալու* – *խոսալով* – *խոսացած, խոսա՛...* Գրական հայերենում, մասնավորապես պաշտոնական խոսքում այս բայաձևերն անընդունելի են:

Մի շարք բայերի պարագայում ևս ելակետային սխալ ձևեր են ընտրվում, ինչպես՝ գովալ (փոխանակ՝ *գովել*), ծիծաղալ (փոխանակ՝ *ծիծաղել*), որ նույնպես շղթայական սխալի պատճառ է դառնում և խաթարում հայերեն խոսքը:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

հատկապես պաշտոնական և հանրությանն ուղղված խոսքում հետևել գրական լեզվի կանոնին:



Հայերեն դիմելաձևերի մասին

Հոգեբաններն ասում են, որ մարդու համար ամենահաճելին իր անունը լսելն է, հետևաբար որքա՛ն կարևոր է, թե ինչպե՛ս ենք իրար դիմում: Մտերիմների շրջանակներում գործածվող դիմելաձևերն իհարկե բազմազան են, հաճախ՝ ջերմ, երբեմն՝ նույնիսկ հումորային: Բայց մեր այս կոչ-հորդորակը վերաբերում է պաշտոնական դիմելաձևերին:

Հայաստանի մի շարք դպրոցներում (հատկապես նախկին ռուսական) աշակերտները ուսուցչներին դիմում են ռուսերենին հատուկ անուն-հայրանվամբ (անգամ՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչին), օրինակ՝ *Արմինե Վաչագանովնա, Կարինե Դերենիկովնա, Տիգրան Սամսոնովիչ* և այլն:

Հայերեն պաշտոնական (կամ հարգական) խոսքում բնորոշ է ազգանվամբ դիմելաձևը, որի սկզբում սովորաբար ասվում է՝ *պարոն*, եթե զրուցակիցը տղամարդ է (գրավոր խոսքում կրճատ՝ *պրն*), *տիկին*, եթե զրուցակիցը կին է (*տկն*) և *օրիորդ*, եթե խոսքն ուղղված է երիտասարդ աղջկա՝ օրիորդի: Օրինակ՝ *պարոն Անանյան, տիկին Գևորգյան, օրիորդ Վարդանյան*:

Հատկապես ավելի մտերիմ հարաբերության դեպքում երբեմն ազգանվան փոխարեն զրուցակցի անունն է տրվում, օրինակ՝ *պարոն Արտաշես, տիկին Լատիրա, օրիորդ Լուսինե*:

Որոշ մարդիկ, խուսափելով ռուսերեն դիմելաձևից, բայց միաժամանակ ցանկանալով անուն-հայրանվամբ ներկայանալ, կիրառում են անուն+հայրանվան հայերեն սեռական հոլովաձևը, օրինակ՝ *Արտակ Վարդգեսի, Նաիրա Գեղամի*: Որքան էլ կառուցվածքային առումով այսպիսի կապակցությունները հայերեն են, այնուամենայնիվ դրանք խորթ են մեր լեզվամտածողությանը և ավանդույթին:

Տարբեր միջավայրերում կարելի է հանդիպել նաև այլ կիրառությունների: Օրինակ՝ որոշ շրջանակներ *պարոն*-ի փոխարեն նախընտրում են *տիար*-ը (*տիար Պետրոսյան*)։ Զավախքի հայկական կրթական հաստատություններում ուսուցչին դիմում են *հարգելի* բառով, օրինակ՝ *հարգելի՛ Վարդանյան*:

Անտեղի է օտար դիմելաձևերին կառչելը:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

պաշտոնական խոսքում զրուցակիցներին դիմելիս հրաժարվել ռուսերեն ձևերից, կիրառել հայերեն ընդունված դիմելաձևերը:



Գծիկի գործածության մի

յուրահատկության մասին

Բառերի այնպիսի միացությունները, որոնք արտահայտում են լեզուների, ժողովուրդների, պետությունների և այլ հարաբերություններ, երկկողմ (նաև եռակողմ) առնչություններ, ինչպես՝ *հայ-իրանական* (բարեկամություն), *ռուս հայերեն* (բառարան), *ֆրանս-բելգիական* (գործակցություն), գրվում են միության գծիկով:

Ինչպե՞ս են առաջացել սրանք: *Հայ-իրանական* բաղադրությունը, օրինակ, առաջացել է այսպես. *հայկական-իրանական* կամ *հայկական և իրանական* կապակցության առաջին

բաղադրիչի **-ական** կրկնվող ածանցը կրճատվել է (**և**-ը՝ դուրս մղվել), և բնականորեն կիրառվել գծիկը: Այդ գծիկն է հուշում, որ **ռուս-հայերեն**-ը նշանակում է **ռուսերեն-հայերեն**, **ֆրանս-բելգիական**-ը՝ **ֆրանսիական և բելգիական** և այլն:

Այս խմբի մեջ են մտնում ու գծիկով են գրվում նաև այն կազմությունները, որոնց առաջին բաղադրիչն ունի **-ա-** կամ **-ո-** մասնիկը, ինչպես՝ **գերմանա-հայկական** (առնչություններ), **իսրայելա-պաղեստինյան** (հակամարտություն), **անգլո-ամերիկյան** (գրականություն):

Շատերը մտածում են. քանի որ այս կարգի կազմությունների բաղադրիչների միջև կա հոդակապ, հետևաբար դրանք պետք է միասին գրել: Այնինչ նման դեպքերում այդ **ա-**ն միացնելու, կապելու դեր չունի, քանի որ այդ բաղադրությունները ցույց են տալիս երկկողմ հարաբերություններ և առաջացել են կրկնվող ածանցի կրճատման հետևանքով: Միության գծիկի նշված կիրառության մի դրսևորումն ենք տեսնում վերջին շրջանում հաճախադեպ **արցախա-ադրբեջանական** բաղադրության մեջ: Սա պետք է գրվի գծիկով, քանի որ երկկողմ հարաբերություն է ցույց տալիս, այլապես կընկալվի ինչ-որ միասնություն:

Իսկ ահա **ադրբեջանաթուրքական քարոզամեքենա** կապակցության առաջին բաղադրիչները միասին են գրված, քանի որ այդ կազմությունը երկկողմ առնչություն, հանդիպադրում ցույց չի տալիս, այլ ընդհակառակը՝ ադրբեջանական և թուրքական միասնություն:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

Երկկողմ հարաբերություններ և առնչություններ ցույց տվող կազմությունների բաղադրիչները գրել միության գծիկով, իսկ այն բաղադրությունները, որոնք նշանակում են միասնություն, ամբողջություն, գրել միասին՝ առանց գծիկի:



Թվականները ճիշտ գործածելու մասին

Բանավոր և գրավոր խոսքում հաճախ նկատվում են սխալներ, որոնք առնչվում են թվականների գործածությանը: Անդրադառնանք դրանցից ամենատարածվածներին:

- **Առաջին** թվականը հաճախ արտասանում են առանց **և**-ի՝ «առաջի», **եկրորդ**-ը՝ «եկրորդ» և աղավաղում բառերի հնչյունական ճիշտ պատկերը:
- Շատերն առանց **-ը** կամ **-ն** վերջնահնչյունի են արտասանում **տասը** / **տասն** թվականը և սխալ կազմում դրանով կազմված *տասերկու*, *տասհինգ* (և այլն) բառերը: Սրանց ճիշտ ձևերը **և**-ով են՝ **տասներկու**, **տասնհինգ**, **տասնյոթ** և այլն:

Ի դեպ, եթե այս թվականին հաջորդում է բաղաձայնով սկսվող բառ, ապա գրվում է **ը**, օրինակ՝ **տասը տարի**, իսկ եթե հաջորդում է ձայնավորով սկսվող բառ՝ **և**, օրինակ՝ **տասն անգամ**: Նույնն է նաև **ինը** / **ինն**-ի դեպքում՝ **ինը տարեկան** և **ինն աթոռ** (ճիշտ է համարվում նաև **ինը աթոռ**-ը):

- **Ինը/ինն** թվականը երբեմն գրում են *իննը*, որը սխալ է: **Իննսուն** թվականը բնականաբար գրվում է երկու **ն**-ով, ըստ այդմ էլ՝ **իննսունինը** (կամ **իննսունինն**):
- Երբեմն էլ բառավերջի **ը**-ն թվականներում անհարկի է գործածվում. լսում ենք՝ վեցը գիրք, ութը հոգի, չորսը տարի և այլն: Այնինչ ճիշտ ձևերն առանց **ը**-ի են՝ **վեց գիրք, ութ հոգի, չորս տարի**:
- Երբ **է**-ն հաջորդում է բաղաձայնի, կանոնի համաձայն՝ արտասանվում է **է**, հետևաբար **երկու** և **երեք** միավորներով կազմված տասնավորները ճիշտ է արտասանել **է**-ով՝ **քսան[է]րեք, հիսուն[է]րեք, տասն[է]րկու** և այլն:
- Ոմանք շփոթում են **յոթանասուն** և **ութսուն** թվականները և սխալ ասում ու գրում՝ *յոթսուն, ութանասուն*: Թվականակերտ «սուն» բաղադրիչը նշանակում է «տասը». 70-ի դեպքում *յոթան* գրաբարյան հոլովաձևին ավելանում է *ա* հոդակապը, ապա *սուն* բաղադրիչը, 80-ի դեպքում՝ *ութ+սուն*, ըստ այդմ ճիշտ տարբերակներն են՝ **յոթանասուն, ութսուն**:

- **Հիսուն** և **վաթսուն** թվականների կազմությունն այսպիսին է. *հի* (5) և *վաթ* (6) արմատներին ավելանում է *սուն* բաղադրիչը, ուստի *հիցուն* և *վացուն* ձևերն արտասանական «վթարներ» են:
- 100-ը գրվում և արտասանվում է **հարյուր**, յ-ով
- (այստեղից՝ **հարյուրամյա**, **հարյուրավոր**):
- 0-ն արտասանվում է **զրո**, ոչ թե *զերո* (այստեղից էլ՝ **զրոյացնել**, **զրոյական**):
- Փոխառությունների դեպքում ևս առաջնորդվում ենք հայերենի ուղղագրության կանոններով: Ուստի **միլիոն** և **միլիարդ** բառերը գրվում են ոչ թե կրկնակ բաղաձայնով, այլ մեկ **լ**-ով:
- Հաշվում ենք այսպես՝ մեկ, **երկու**, երեք... **Երկու** թվականին **ս** է ավելանում, երբ այն հոդ կամ հոլովական վերջավորություններ է ստանում՝ **երկուսը**, **երկուսի**, **երկուսին**, **երկուսից**, **երկուսով**:
- Հայտնի է, որ հայերեն տառերն ունեն նաև թվային արժեք: Այդ արժեքով գործածված տառը պետք է արտաբերել թվային արժեքին համապատասխան: Օրինակ՝ Աշոտ Բ, Վազգեն Ա անունները պետք է ասել՝ **Աշոտ Երկրորդ**, **Վազգեն Առաջին**: Ի դեպ, գրության ժամանակ թվական բաղադրիչը՝ որպես անվան բաղադրիչ, գրվում է մեծատառով:
- Հռոմեական թվանշանները դասական թվականներ են, այսինքն՝ IV, VIII, XI նշանակում են **չորրորդ**, **ութերորդ**, **տասնմեկերորդ**, և **րդ** մասնիկն ավելացնելը սխալ է (սխալ է, օրինակ, VI-րդ գրելը, քանի որ լինում է վեցերորդ+րդ): Իսկ հռոմեական I-ի դեպքում՝ սխալ է *I-ին* գրելը (ինչպես նաև՝ *I-րդ*): Ճիշտը սա է՝ **1-ին** դասարան (կամ **I դասարան**):
- Թվարկման ժամանակ հայերեն տառերը դասական թվականի արժեք են ստանում: Այսպես՝ **ա**), **բ.**, **է**/-ն դառնում են **առաջին**, **երկրորդ**, **հինգերորդ** և այլն: Այդպես էլ՝ 1., 2) – ը՝ **առաջին**, **երկրորդ** և այլն:



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

հաշվի առնել վերոնշյալ դիտարկումները և թվականներ գործածելիս խուսափել սխալներից:



Բայական որոշ կառույցների ճիշտ գործածության մասին

- Իրավունք ունենալ **ասելու**, թե՞ **ասել**:
- Հնարավորություն տվեց **երգելու**, թե՞ **երգել**:
- Չգտում է **հաղթելու**, թե՞ **հաղթել**:

Հայերենին հարազատ չեն հնչում *իրավունք ունենալ ասել, հնարավորություն տվեց երգել, չգտում է հաղթել* կապակցությունները: Դրանք ճիշտ կլինեն, եթե ձևակերպվեն այսպես՝ *իրավունք ունենալ ասելու, հնարավորություն տվեց երգելու, չգտում է հաղթելու*:

Բայի իմաստից է բխում, թե ի՞նչ ձևով է դրվում նրան կապվող բառը: Օրինակ՝ հրաժարվել (ի՞նչ անելուց կամ ինչի՞ց) դատարան ներկայանալուց, խուսափել (ի՞նչ անելուց կամ ինչի՞ց) մանրամասների հաղորդելուց: Սակայն օտար որոշ լեզուների ազդեցությամբ, որոնցում անորոշ դերբայը գործածվում է ուղիղ ձևով, հայերենում «հայտնվում են» սխալ կառույցներ:

Գործածության սխալ ձևերը հաճախ հանդիպում են հարադրական բայերի տարբեր կապակցությունների մեջ, ինչպես՝ ի վիճակի է մասնակցել, հիմք է տալիս պնդել, ի գործու լինել անել, կարիք ունենալ լսել և այլն: Ըիշտ կլինեն, եթե դերբայը թեք (այստեղ՝ տրական) հոլովով դրված լինի: Այսպես՝

- «Նա ի վիճակ չի եղել **մասնակցելու** տարեկան ասուլիսին»:
- «Աղբյուրները հիմք են տալիս **պնդելու**, որ նման քայլն անխուսափելի է»:
- «Նա այլևս ի գործու չէր մենակ **մնալու** ինքն իր հետ»:
- «Տան կառուցումից առաջ կարիք ուներ **լսելու** ճարտարապետի կարծիքը»:

Իսկ ինչպե՞ս կողմնորոշվենք այս կամ այն ձևն ընտրելիս:

Ըիշտ ձևերը պարզելու համար մի քանի հնար կարելի է կիրառել:

1. Փոխել շարադասությունը.

- «Դու *իրավունք չունես նրա մասին այդպես **խոսելու*** (թե՞ *խոսել*)»:

- Փոխենք շարադասությունը՝
- «*Դու նրա մասին այդպես **խոսելու** իրավունք չունես*»:

Այդպես էլ՝

- «*Ցանկություն չունի **աշխատելու***»:
- «***Աշխատելու** ցանկություն չունի*»:

2. Ինչպես արդեն ասացինք, թելադրողը բայի իմաստն է, հետևաբար պետք է ուշադրություն դարձնել դրան:

- «*Այդ միտքը մղում էր հանցագործություն **կատարելու** (ոչ թե՝ կատարել)*»:
- «*Շտապում եմ **տեսնելու** (ոչ թե՝ տեսնել) բանակից վերադարձող որդուս*»:
- «*Երիտասարդ նկարիչը ձգտում էր **անկախանալու** (ոչ թե՝ անկախանալ)*»:

Համոզվելու համար, որ սրանք են ճիշտ տարբերակները, բավական է պատասխանել բայի հարցին:

- «*Մեր աշխատակիցներն ի վիճակի են (ի՞նչ անելու) **լուծելու** այդ խնդիրները*»:
- «*Ազգայնական գործչին հորդորեցին խուսափել (ի՞նչ անելուց) սադրիչ հայտարարություններ **անելուց***»:
- «*Վախենում էր (ինչի՞ց) խիստ **պատժվելուց***»:

Սակայն ումանք երբեմն «ոգևորվում» և **ու** են ավելացնում այն բայաձևերին, որոնք առանց դրա պիտի լինեն: Այսպես՝ թույլ տալ ի՞նչ անել՝ «*Նա իրեն չէր կարող թույլ տալ (ի՞նչ կամ ի՞նչ անել) **հայտնել** իր կարծիքը*»:

Հարցը ճիշտ տալու դեպքում նման սխալներ չեն լինի:

3. Բայական ձևը փոխարինել գոյականով.

- *պատրաստվել **վազելու** – պատրաստվել **վազքի**,*
- *խուսափել **պարտվելուց** – խուսափել **պարտությունից**,*
- *զգուշանալ **հանդիպելուց** – զգուշանալ **հանդիպումից**:*

Հիմք ընդունելով վերոնշյալ դիտարկումները՝



ՀՈՐԴՈՐՈՒՄ ԵՆՔ

ուշադիր լինել և հավատարիմ մնալ հայերեն լեզվամտածողությանը:



ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻՑ

Խորագրի նյութերը՝ Գուրգեն Միքայելյանի



Մակաբույծ «տարրերի» մասին

Թե ինչ է նշանակում *մակաբույծ*-ը, պարզաբանման կարիք չկա, բայց թերևս արժի ասել, որ մակաբույծներ կան ամեն տեղ, և դրանց դեմ չպայքարելու դեպքում այդ վնասակար «տարրերը» տարածվում են ինչպես օրգանիզմներում, բնության ու հասարակության մեջ, այնպես էլ լեզվում: Սրանք առավել հաճախ հանդիպում են բանավոր խոսքում: Ինքդ քեզ չվերահսկելիս մեկ էլ տեսնում ես, որ «վարակվել ես» նաև դու:

Խոսենք դրանցից առավել տարածվածներից մեկի՝ *մի հատ*-ի մասին:

Զմոռանանք չկան «մեղավոր» բառեր ու արտահայտություններ: Կա դրանց տեղին՝ ճիշտ գործածություն, և կան դրանք չարաշահողներ, սխալ գործածողներ:

Ներկայումս այս չարչրկված *մի հատ*-ը կարծես ավելի շատ գործածվում է անհարկի. այնտեղ, որտեղ ընդհանրապես չկա ո՛չ թիվ, ո՛չ հաշվարկ: Ահա օրինակներ:

Խորհրդակցության մասնակիցը վրդովվում է. «Թեմայից շեղվեցինք. *մի հատ* նորից սկսենք»: Նույն պահին մեկ ուրիշը դիտողություն է անում. «Հանգստացե՛ք *մի հատ*»: Մյուսը փորձում է ուշադրությունն իր կողմը հրավիրել. «Ինձ *մի հատ* կլսե՞ք»: Ներկա մեկ այլ անձ էլ պահանջում է «*մի հատ* բացատրել, թե ինչ է կատարվել»:

Ծանոթ թ իրավիճակ է:

Բավական է՝ մենք էլ մեր խոսքին մի պահ ուշադրություն չդարձնենք և կպահանջենք, որ *մի հատ* մեզ նայեն, *մի հատ* լռեն, *մի հատ* գնան կամ գան:

Իսկ հիմա դուք էլ «*մի հատ*» ուշադրություն դարձրեք ձեր զրուցակիցների խոսքին և շարունակեք բերված օրինակները, իսկ ես առաջարկեմ այս նախադասություններից պարզապես հանել մակաբույծ «տարրերը»...

Որևէ բան պակասո՞ւմ է: Բնա՛վ:

Եթե այդպես է, հրաժարվենք ուրեմն այս բառակապակցության անհարկի գործածությունից, «չհամեմենք» մեր խոսքն ավելորդ տարրերով և չդարձնենք բառերը մակաբույծ:



Ե՛րբ պետք է «սեփականաշնորհել» և ե՛րբ «սեփականացնել» գույքը

Հակառակ իրավական երանգավորմամբ վերնագրին՝ ընթերցողն անշուշտ հասկա-ցավ, որ մենք խոսելու ենք լեզվական «ընթացակարգերից»: Այլ կերպ ասած՝ թե ե՛րբ պետք է գործածել սեփականաշնորհել, ե՛րբ՝ սեփականացնել բառը, և թե իմաստային ի՛նչ տարբերություններ ունեն դրանք:

Այս բառերի գործածության շփոթն առաջացել է վաղուց՝ 1990-ական թվականներից, երբ սկսվեցին սեփականաշնորհման ու սեփականացման գործընթացները:

Սեփականացնելը իր սեփականը, իրենը դարձնելն է:

Սեփականաշնորհել նշանակում է. «Անհատին կամ կոլեկտիվին պետական ունեցվածք հանձնել, շնորհել, վաճառել, մասնավորի սեփականություն դարձնել, ապապետականացնել, մասնավորեցնել»:

Իմաստների տարբերությունն ակնհայտ է. մի կողմը (պետությունը) սեփականաշնորհում է, մյուս կողմը (օրինակ՝ քաղաքացիները)՝ սեփականացնում: Տարօրինակ է, որ այս շփոթությունը շարունակվում է տասնամյակներ, և մինչև այսօր շատերը սեփականացնել բառի փոխարեն գործածում են սեփականաշնորհելը: Քանի որ վերջինս հոմանիշ է մասնավորեցում, մասնավորեցնել բառերին, խոսենք նաև դրանց մասին:

Մասնավորեցում բառը նշանակում է «մասնավոր դարձնել»: Ճի՛շտ է (իհա՛րկե՛՛ բառի գործածության առումով), երբ մասնավորեցվում է պետական գույքը, կազմվում է պետական գույքի մասնավորեցման ծրագիր, տրվում է հաշվետվություն մասնավորեցման ծրագրի կատարման վերաբերյալ և այլն:

Նշված լեզվական սխալներն ուղղելու համար հարկավոր է ընդամենը հիշել բառերի իմաստները, և հեշտ կլինի կողմնորոշվել, թե դրանցից ո՛րը ե՛րբ պետք է գործածել:

Ոչ թե խթանենք, այլ սանձահարենք

Խնդրառությունը բառերի (լրացյալի և լրացման) կապակցության այն եղանակն է, երբ մի բառը (լրացյալը) պահանջում է որոշակի հոլովով կամ կապային կառույցով խնդիր, ինչպես՝ *խոսում էինք մեր գործերից* կամ *խոսում էինք մեր գործերի մասին*:

Խոսենք խնդրառական այն սխալների մասին, որոնք մեր գրավոր ու բանավոր խոսքում հանդիպում են առավել հաճախ:

Սկսենք «մասին» կապից: Բերենք օրինակներ.

- «Մի քանի խոսքով *անդրադառնանք այդ մասին*»:
- «Ինչ *վերաբերում է* ծրագրի մասին ...»:
- «Խնդրի *կարևորության մասին* չեն պատկերացնում»:
- «.... ասաց պատգամավորը՝ *անդրադառնալով* այն կարծիքներին, թե ինքը *թաքցնում է* դրանց մասին»:
- «Կիսնդրեի, որ *ներկայացնեք* Ձեր ստեղծագործությունների մասին»:

Որևէ բանի մասին կարել է, օրինակ, խոսել, խորհել, լսել, իմանալ, երագել, բայց ոչ երբեք, ինչպես բերված նախադասություններում է, անդրադառնալ, վերաբերել, պատկերացնել, թաքցնել, ներկայացնել: Տվյալ օրինակներում «մասին» կապը չպիտի գործածվեր, և միտքն էլ պետք է ձևակերպվեր այսպես.

- «Մի քանի խոսքով *անդրադառնանք դրան*»:
- «Ինչ *վերաբերում է* ծրագրին ...»:
- «Խնդրի *կարևորությունը չեն պատկերացնում*»:
- «.... ասաց պատգամավորը՝ *անդրադառնալով* այն կարծիքներին, թե ինքը *թաքցնում է դրանք*»:
- «Կիսնդրեի, որ *ներկայացնեք* Ձեր ստեղծագործությունները»: (Եթե պետք է գործածել «մասին» կապը, ապա՝ «Կիսնդրեի, որ *խոսեք* Ձեր ստեղծագործությունների մասին»):

Բերենք նաև այլ կապերի գործածության հետ կապված սխալների օրինակներ.

- «Ունեցվածքը *կտակեց* զավակի *վրա*»:
- «Ժողովուրդը *հակադրվեց* բռնության *դեմ*»:
- «Երկրում ժողովրդավարության վերջնական հաստատումը հիմնականում *պայմանավորում են* կոռուպցիայի վերացման *հետ*»:
- «Ծանոթանում են մեր *գործերի հետ*»:

Այս նախադասություններում չպետք է գործածվեին *վրա*, *մեջ*, *դեմ*, *հետ* կապերը, որովհետև կտակում են ոչ թե որևէ *անձի վրա* (տվյալ դեպքում՝ *զավակի*), այլ *անձին* (*զավակին*): Հակադրվում են ոչ թե *բռնության դեմ*, այլ *բռնությանը*: Ինչ-որ բան պայմանավորում են ոչ թե մեկ այլ *բանի հետ*, այլ *բանով*: Ծանոթանում են ոչ թե *գործերի հետ*, այլ *գործերին*:

Հավելենք, որ ծանոթանալու պարագայում *հետ* կապի գործածությունը ճիշտ է, եթե խոսքը վերաբերում է անձի: Օրինակ.

- «Մենք *ծանոթացանք Կարենի հետ*»:
- «Վերջապես նրանք *իրար հետ ծանոթացան*»:

Խթանել, խոչընդոտել, հյուրասիրել: Բավական հաճախադեպ են նաև այս բառերի գործածության հետ կապված սխալները: Պետք է հիշել, որ ներգործական սեռի բայերի՝ իրի առումով խնդիրը դրվում է ուղղական (հայցական) հոլովով: Բնականաբար, խթանում կամ խոչընդոտում են, օրինակ, զարգացումը, ընթացքը, աշխատանքները, այլ ոչ զարգացմանը, ընթացքին, աշխատանքներին:

Հյուրասիրում են ոչ թե մրգերով, խմիչքով, խորտիկներով (թեև որոշ բառարաններում և գեղարվեստական գրականության մեջ այս ձևերը նույնպես հանդիպում են), այլ մրգեր, խմիչք, խորտիկներ: Օրինակ.

- «Նոր մտածելակերպը կխթանի մեր զարգացումը»:
- «Դա խոչընդոտում է մեր աշխատանքը»:
- «Տանտերերն այցելուներին հյուրասիրեցին մրգեր»:

Խթանել բառի հետ կապված՝ երբեմն առաջանում է նաև այլ հարց. ի՞նչ հոլովով դնել խնդիրը, եթե խոսքը կենդանիների մասին է: Ասել, օրինակ՝ Նա խթանեց *ձի՞ն*, թե՞ *ձիուն*:

Քանի որ մեր մտածողությամբ կենդանիներն ընկալվում են ոչ միայն իրի, այլև անձի առումով (փոխաբերական իմաստով), ուստի երկու տարբերակն էլ ճիշտ է՝ հակառակ այս հարցի վերաբերյալ տարբեր կարծիքներին: Ընդ որում, գրականության մեջ երկու ձևն էլ գործածվում է: Օրինակ.

- «Խելակորույս *խթանեց ձին...*» (Ավետիք Իսահակյան):
- «Նկատեց Մխիթարն ու *խթանեց ձիուն*» (Մերո Խանգաղյան):

Մենք էլ փորձենք այսուհետև ոչ թե խթանել, այլ սանձահարել այսպիսի սխալները:

Անգամ-ի «զանգանքները»

Մեր խոսքում հաճախ հանդիպող սխալներից մեկը կապված է մի «անմեղ» բառի՝ *անգամ*-ի հետ: Որքա՛ն ենք կարդում ու լսում՝ *բազմիցս անգամ ասել եմ, բազմիցս անգամ գրել ենք...*

Իսկ ի՞նչն է սխալ:

Խնդիրը նշված *անգամ* և *բազմիցս* բառերի միասին գործածությունն է: Հայերենի *-իցս* ածանցն ունի *անգամ*-ի իմաստը: *Երկիցս, երիցս, բազմիցս, քանիցս* բառերն արդեն իսկ նշանակում են «երկու անգամ», «երեք անգամ», «բազում անգամ», «(մի) քանի անգամ»:

Ի դեպ, գրաբարում կան նաև *չորիցս* (նշանակում է չորս անգամ), *հնգիցս* և նման այլ ձևեր: Հասկանալի է, որ այս բառերի հետ *անգամ*-ի գործածությունն ավելորդ է, սխալ: Ընդ որում, անհարկի գործածվող այս «անգամ»-ը երբեմն «կպչում է» նաև *կրկնակի* բառին՝ կազմելով «կրկնակի անգամ» բառակապակցությունը: Ահա օրինակներ.

- «Փարիզում *կրկնակի անգամ* *հնչել է հայկական օրհներգը*».
- «*Կրկնակի անգամ կրճատվել են խեցզետնի պաշարները*»:

Թեև վաղուց գործածվում է նաև «կրկին անգամ» կապակցությունը, որը ներկայացնում են նույնիսկ որոշ բառարաններ, այնուամենայնիվ, այստեղ նույնպես անգամ-ն ավելորդ է: Դրանից պետք է խուսափել և, օրինակ, ոչ թե ասել կրկին անգամ հիշեցնում ենք, կրկին անգամ բարձրաձայնում ենք, այլ կրկին հիշեցնում ենք, կրկին բարձրաձայնում ենք:

Այլ հարց է, երբ անգամ-ը գործածվում է բազում բառի հետ: Տվյալ դեպքում սխալ չկա, որովհետև բազում-ը նշանակում է շատ, բազմաթիվ, այլ ոչ շատ անգամ, բազմաթիվ անգամ: Այս պատճառով էլ նրա հետ անգամ-ը կարող է գործածվել: Օրինակ.

- «Հրատարակվել է *բազում անգամ*»:
- «*Բազում անգամ* փորձարկվել է»:

Հիշենք՝ ասում ու հորդորում են ոչ թե երկիցս անգամ, երիցս անգամ, բազմիցս անգամ, քանիցս անգամ, այլ **երկիցս, երիցս, բազմիցս, քանիցս**:

Ճիշտ է ասել, օրինակ՝

- *Կրկնակի աճել է*:
- *Կրկնակի գերազանցում է*:
- *Բազում անգամ հաղթել է*:

Միալ է՝ կրկնակի անգամ աճել է, կրկնակի անգամ գերազանցում է:

Միալ է՝ կրկնակի անգամ աճել է, կրկնակի անգամ գերազանցում է:

Երբեմն հարց է առաջանում՝ կարո՞ղ է արդյոք անգամ-ը գործածվել հոգնակի թվով, երբ, մասնավորապես, գործածվում է բազմաթիվ բառի հետ: Օրինակ՝ «Բարձրաձայնել ենք բազմաթիվ անգամներ», «Զգուշացվել է շատ անգամներ»:

Այս ձևը գործածական է վաղուց: Բերենք օրինակներ.

- «Ղազար Փարպեցին ունի բազմաթիվ անգամներ Մեսրոպ» (Կորյուն):
- «Տառապանքի ուղիներում շատ բան տեսած ու ապրած, բազմաթիվ անգամներ դառնապես խոցոտված» (Վ. Թորոպենց):
- «.... վերապացումներն ունեցած ազգերը, որ բազմաթիվ անգամներ վկայել էին» (Հ. Մաթևոսյան):

Թեև տվյալ դեպքում մենք հակված ենք եզակի թվով տարբերակը գործածելուն, այսուհանդերձ, ինչպես տեսնում ենք, սրանք զուգաձևություն են, և յուրաքանչյուր հեղինակ ինքն է որոշում, թե ո՞րը նախընտրի, որի՞ն տա նախապատվություն:

Պահանջում են կապերը

Նախ բերենք մի շարք կապերի հետ անձնական դերանունների գործածության օրինակներ.

- «Իմ հետ այդպես մի՛ խոսիր»:
- «Մենք հույս ենք դնում միայն *մեր վրա*»:
- «Ո՞նց է եղանակը *ձեր մոտ*»:
- «Քո *պես* քչերը կան»:
- «Իմ *համար* նույնը չէ»:
- «*Ձեր նման* չենք կարող»:

Այս նախադասություններից որո՞նց մեջ են անձնական դերանունները գործածված ճիշտ հոլովով:

Եթե ինքներդ ձեզ համար ճշտեցիք, ասենք՝ ոչ մեկում: Ինչո՞ւ: Իմանալով պատասխանը՝ կարծում ենք, որ չի սխալվի այլևս ոչ ոք: Հիշե՛նք հետևյալ կապերը, որոնք ընդամենը վեցն են՝ **հետ, վրա, մոտ, պես, համար, նման**: Մեր սխալների համար «մեղավոր» են հենց սրանք, որոնց հետ ճիշտ լեզու գտնելն առանձնապես դժվար չէ: Պարզապես պետք է իմանալ, որ բոլոր բառերի նման այս կապերը նույնպես թելադրում են, պահանջում «իրենցը»: Այդ ուղածն էլ իրականում մեծ բան չէ. ընդամենը... տրական հոլովով դերանուն:

Մերտենք այդ դերանունների (*ես (մենք), դու (դուք)*) տրական հոլովաձևերը ևս.

ուղղ. ես (մենք)	դու (դուք)
սեռ. իմ (մեր)	քո (ձեր)
տրակ. ԻՆՁ (ՄԵՁ)	ՔԵՁ (ՁԵՁ)

Ամփոփենք. նշված վեց կապերի հետ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները գործածվում են տրական հոլովով: Բնականաբար, ոչ թե պետք է ասել, օրինակ՝ իմ հետ, մեր վրա, ձեր մոտ, քո պես, իմ համար, ձեր նման, այլ ինձ հետ, մեզ վրա, ձեզ մոտ, քեզ պես, ինձ համար, ձեզ նման և այլն:

Երրորդ դեմքի անձնական դերանունների դեպքում խնդիրներ գրեթե չեն առաջանում:
Ասվում (գրվում) է՝ նրա հետ, իր պես, նրանց հետ, իրենց պես և այլն:

➡ Ի՞նչ է հասկացությունը, ի՞նչը կարելի է փոխանցել և ի՞նչը ոչ

«Իմ հասկացությամբ՝ վեճի առարկան գիտական հարց չէ», «Ժողովուրդը լայն հասկացողություն է», «Մի՛ շփոթեք հասկացությունը հասկացողության հետ»:

Այո՛, հասկացությունը հասկացողության հետ չպետք է շփոթել ու նաև չպետք է կարծել, թե այս բառերը, քանի որ նման են, ունեն նույն իմաստը: Ճիշտ է, նախկինում *հասկացություն*-ը ունեցել է նաև *հասկացողության* իմաստը, որն արձանագրված է նաև բառարաններում, բայց սա արդեն հնացած «երևույթ» է: Ժամանակակից հայերենում սովյալ բառերը հստակորեն սահմանազատված են, և ամեն մեկն ունի իր նշանակությունը: Իսկ ի՞նչ անել դրանք իրար հետ չշփոթելու համար: Ինչպե՞ս պարզել, թե ո՛ր դեպքում ո՛րը պետք է գործածել:

Ոչ մի դժվարություն չկա: Ընդամենը պետք է իմանալ, թե այս բառերից որը ի՞նչ է նշանակում:

Սկսենք *հասկացություն*-ից: Վերջինս ընդհանուր իմաստով նշանակում է գաղափար: Անշուշտ, բոլորս ենք տեղյակ փիլիսոփայական, գիտական հասկացություններից: Դրանցից շատերը ոչ միայն ուսումնասիրել ենք, այլև անգիր սովորել: Հիշենք գեղագիտական, բարոյական, մաթեմատիկական, տնտեսագիտական հասկացությունները և այլն:

Հասկացողություն-ը հասկանալու, ըմբռնելու կարողությունն է, այս կամ այն կերպ հասկանալը: Օրինակ՝ հասկացողությամբ նա չի փայլում. ժողովուրդներ կան, որոնց հասկացողության մակարդակը շատ բարձր է:

Այժմ ճշտենք սկզբում մեջբերած նախադասությունները: Ինչ խոսք, որ վեճի առարկան գիտական հարց կարող էր չլինել իմ *հասկացողությամբ*. որ ժողովուրդը լայն *հասկացություն* է և ոչ հասկացողություն:

Հուսով ենք՝ իմանալով այս ամենը, այսուհետև կբարձրանա նաև մեր հասկացողության մակարդակը, և կիմանանք, թե ի՞նչը կարելի է փոխանցել և ինչը՝ ոչ...

Դարձյալ անենք մեջբերումներ. «Արտակարգ իրավիճակների նախարարության *փոխանցմամբ*՝ վերջինս հայտնաբերվել է», «Հիվանդի ինքնազգացողությունը լավ է. *փոխանցում են* բժիշկները»:

Քանի որ այսպիսի նախադասություններ կարդում ու լսում ենք հաճախ, մենք էլ մեր ընթերցողին «փոխանցենք» մեր մտահոգությունը:

Բանն այն է, որ նման դեպքերում փոխանցելու ոչինչ չկա: Դրանք օտար կառույցներ են:

Արդարացում չունի այն պնդումը, թե այս բառը նույնպես իմաստափոխվել է, ձեռք բերել նոր իմաստ: Նման մտածողությամբ արդարացվել կարող է բառագործածության ամեն սխալ: Էլ որտե՞ղ հապա պետք է գործածվեն *տեղեկացնել, հաղորդել, ասել* բառերը, եթե ամեն բան մենք միայն փոխանցում ենք:

Մեկ անգամ ևս հիշենք. ամեն բառ պետք է լինի իր տեղում:

Ի՞նչ է թելադրում մեր գաղտնավանկը

Ո՞ր դեպքում են բառերն ստանում «ն» հոդը, ո՞ր դեպքում՝ «ը»: Պատասխանելը դժվար չէ: Ձայնավորով վերջացող բառերն ստանում են «ն» հոդը, բաղաձայնով վերջացողները՝ «ը»: Փոքր-ինչ այլ սկզբունք է գործում խոսքում: Այստեղ «ն» հոդ կարող են ստանալ նաև բաղաձայնով վերջացող բառերը: Օրինակ՝ Արթուրն ուշացավ: Եվ սա, ինչ խոսք, ինքնանպատակ չէ: «Ը»-ի փոխարեն գործածվում է «ն» հոդը, որպեսզի երկու բառերի միջև արտասանական դադար չլինի, դրանք արտասանվեն միասին: Ընդ որում, ոչ թե ԱրթուրԸն ուշացավ ձևով, որը սխալ է, այլ «ն»-ն մյուս բառին ձուլված, առանց ը-ն հնչեցնելու՝ Արթուրն/ուշացավ:

Անշուշտ, այս դեպքերում կարելի է գործածել նաև «ը» հոդը, և սա նույնպես ինքնանպատակ չէ: Եթե ցանկանում ենք շեշտել առաջին բառը, տրամաբանական շեշտը եթե կրում է նա, գործածվում է «ը»-ն: Օրինակ՝ քո՛ւյրը ասաց, Կարե՛նը օգնեց:

Այս պարագայում սխալվում են նրանք, ովքեր կարծում են, թե ձայնավորով սկսվող բառից առաջ պարտադիր պետք է գործածել «ն» հոդը:

- Հարց է ծագում. իսկ ճիշտ է արդյոք հենց տողերիս հեղինակի գործածած «բառերն ստանում» բառակապակցության մեջ «ն» հոդի կիրառությունը: Չէ՞ որ այս դեպքում ևս հաջորդ բառն սկսվում է բաղաձայնով՝ ս-ով:

Հիշենք քիչ առաջ ասվածը և առաջնորդվենք նույն տրամաբանությամբ: Ճիշտ է, «ստանալ» բառն սկսվում է բաղաձայնով՝ ս-ով, բայց չմոռանանք, որ նրանից առաջ կա մի «թաքնված», լսվող, սակայն չգրվող հնչյուն՝ ը-ն: Ահա հենց այս գաղտնավանկն էլ այստեղ ամեն բան որոշում է: Չմոռանանք նաև գլխավոր նպատակը. բաղաձայնով վերջացող բառերն ստանում են «ն» հոդը, որպեսզի հաջորդ բառի հետ արտասանվեն միասին: Եվ քանի որ գործ ունենք արտասանական երևույթի հետ, ուստի չենք կարող հաշվի չառնել բառասկզբում արտասանվող հնչյունը, եթե անգամ նա գաղտնավանկ է: Եվ սա այն դեպքն է, երբ ոչ թե արտասանությունն է պայմանավորված գրությամբ, այլ հակառակը՝ արտասանությունն է որոշում, թե ինչպես պետք է գրել:

Կարծում ենք՝ արդեն պարզ է, որ ճիշտ պետք է համարել երկու ձևն էլ. կարելի է ասել «բառերն ստանում են» և «բառերը ստանում են»: Նույն սկզբունքն է գործում բոլոր այն դեպքերում, երբ բառասկզբում լսվում, սակայն չի գրվում «ը» հնչյունը:

Այս է թելադրում մեր գաղտնավանկը:

Սակայն նկատենք, որ առաջին հայացքից այսպես պարզ թվացող կանոնին առնչվող հարցերն այսքանով չեն ավարտվում: Ընթերցողներից շատերը հավանաբար գիտեն, որ բանաստեղծական խոսքում երբեմն «ն» հոդն է գործածվում նաև «հ» հնչյունից առաջ, որը բաղաձայն է: Հիշենք Չարենցի տողերը. «Մպասում են՝ աչքերն հառած խավարամած հեռուներին», «Աչքերն հառած հեռու-հեռուն կարմիր վառվող արեգակին»:

Ի՞նչ ասել. գործ ունենք սխալի՞, թե՞ բացառության հետ: Ինչո՞ւ են բանաստեղծները գրում այսպես:

- Կարելի է արդեն ենթադրել. եթե գործ ունենք բանաստեղծության հետ, ուրեմն գործ ունենք նաև տաղաչափության, ռիթմի հետ: Այստեղ հ-ից առաջ «ն» հոդի կիրառությունը պայմանավորված է միայն և միայն այս հանգամանքով: Բանաստեղծներն այսպես են գրում չափը պահելու համար: Եվ այս «կանոնը»

գործում է միայն «հ» բաղաձայնի դեպքում, որովհետև այն, լինելով հազագային, միայն շունչ պարունակող հնչյուն, հնարավոր է լինում արտասանել «ն» հոդի հետ միասին՝ առանց մեկ վանկ ավելացնելու:

Բերված օրինակներում եթե գործածվեր «ը» հնչյունը, մեկ վանկ կավելանար, և կխախտվեր չափը (կդառնար «հայացքը հառած»): Ի դեպ, սխալվում են նրանք, ովքեր արտասանում են «հայացքն հառած» ձևով: Ամբողջ նպատակը հենց այս ը-ն չարտասանելն է, որպեսզի չափը պահվի:

Ընդ որում, հարց է առաջանում դարձյալ. իսկ այս դեպքում չի՞ խախտվում: Այո՛, խախտվում է, բայց... կիսով չափ: Չենք կարող չընդունել, որ կես վանկ, այնուամենայնիվ, ավելանում է: Սակայն չենք կարող նաև չընդունել, որ ը-ի փոխարեն «ն» հոդը կիրառելիս նույնքան՝ կես վանկ էլ պակասում է:

«Հ» բաղաձայնից առաջ «ն» հոդը գործածվում է ահա այս կես վանկը պակասեցնելու համար: Համարենք սա սխալ՝, թերություն՝: Իհարկե՝ ոչ: Կանոնից շեղո՞ւմ, բացառությո՞ւն: Գուցե: Եվ սա դարձյալ թելադրում է մեր գաղտնավանկը:



Բեմադրե՞լ, նկարահանե՞լ, թե՞...

Ի՞նչ կարելի է անել ներկայացումը...

Դե՛, ի՞նչ ասես, որ չի կարելի. դիտել, քննարկել, հավանել, քննադատել...

Այո՛, բայց մի կարևոր բան մնաց: Հարցրե՛ք բեմադրիչներին, և նրանց մեծ մասն անպայման կասի, որ իրենք պատրաստվում են ներկայացում... անել:

Այսպես՝ կինոռեժիսորը կասի, որ ֆիլմ է անում: Հեռուստալրագրողները կխոսեն իրենց արած հաղորդման մասին: Նրանց գործընկերները կխոսեն արած նախագծերի մասին: Մեկ ուրիշը կավելացնի, որ ինքը ցանկանում է մի նոր... ծրագիր անել:

Իհարկե, այս ամենը լսելով՝ հայրիկներն ու մայրիկներն էլ իրենց զավակներին անմիջապես կհորդորեն դաս անել:

Բնական է, որ հայերեն վատ իմացողն էլ, լինելով այս ամենին ունկնդիր, կմտածի, որ մեր լեզվում համապատասխան բառ չկա, և ինչ էլ լինի՝ ներկայացում, ֆիլմ թե հաղորդում, հնարավոր է միայն անել:

Իսկ ի՞նչ հետևություն կարելի է անել այս ամենից:

Քանի որ վերջին դեպքում անել բառը գործածվեց ճիշտ, և, հակառակ բերված օրինակների, հետևությունն իսկապես անում են, պատասխանենք:

Կարելի է անել այն հետևությունը, որ մենք մեր լեզվի նրբություններին, բառերի ոճական առանձնահատկություններին, բառապաշարին վատ ենք տիրապետում: Մոռանում ենք խոսքի կարևոր սկզբունքներից մեկը՝ ամեն բառ պետք է լինի իր տեղում: Այս պատճառով էլ որոշ բառեր ստանում են «գերիշխող» դիրք, դուրս մղում իրենց հոմանիշներին, երբեմն էլ՝ սխալ գործածվում:

Բերված օրինակները հենց այդպիսի դեպքեր են: Ի՞նչ ասել է անել ներկայացում, ֆիլմ, հաղորդում, նախագիծ, ծրագիր, դաս...

Մի՞թե անփոխարինելի է այս անել-ը, և ներկայացումը չի կարելի բեմադրել, ֆիլմը՝ նկարահանել, հաղորդումը՝ կազմել, վարել, նախագիծը, ծրագիրը՝ իրականացնել, դասը՝ սովորել:

Մրանք ընդամենը օրինակներ են: Կախված խոսքաշարից, բովանդակությունից՝ կարելի է գործածել նաև այլ բառեր, միտքը ձևակերպել այլ ձևով:

Մեծ ջանքեր, լեզվական խոր գիտելիքներ հարկավոր չեն: Պարզապես պետք է խոսքի նկատմամբ լինել ուշադիր, չանտեսել, «չմոռանալ» մյուս բառերը: Հավատացեք, որ այդպես կշահի թե՛ մեր լեզուն, թե՛ ձեր:



Զգացնե՞լ, թե՞ զգացնել տալ

Ո՞րն է ճիշտ. զգացնե՞լ, թե՞ զգացնել տալ, խոսեցնե՞լ, թե՞ խոսեցնել տալ, վազեցնե՞լ, թե՞ վազեցնել տալ...

Հարցը մի քիչ էլ «բարդացնենք». իսկ ի՞նչ կասեք զգալ տալ, խոսել տալ, վազել տալ ձևերի մասին: Գուցե միակ ճիշտը վերջիննե՞րս են:

Փորձենք «ներթափանցել» այս բառերի մեջ. զգացնել... խոսեցնել... վազեցնել... Արդյո՞ք սրանց մեջ արդեն իսկ չկա տալ բառի իմաստը: Անշուշտ կա, և դա դժվար չէ զգալ: Այս բառերում առկա ցն մասնիկը կատարում է հենց վերջինիս դերը: Եթե ասենք

քերականության լեզվով, նշված բառերը պատճառական բայեր են: Սրանք կազմվում են ցն մասնիկով, օրինակ՝ վախենալ-վախեցնել, ուրախանալ-ուրախացնել, մեծանալ-մեծացնել:

Քանի որ մի շարք բայերից ցն ածանցով պատճառական բայեր չեն կազմվում, ուստի դրանց պատճառականը կազմվում է տալ բայի հարադրությամբ, օրինակ՝ բերել-բերել տալ, զարդարել-զարդարել տալ:

Շատ դեպքերում էլ բայերի պատճառականը կազմվում է ն՛ ցն ածանցի, ն՛ տալ բառի միջոցով, օրինակ՝ ծիծաղեցնել կամ ծիծաղել տալ, քայլեցնել կամ քայլել տալ: Ահա այս դեպքերում է, որ պետք է խուսափել պատճառական ցն ածանցն ու «տալ» բառը միասին գործածելուց:

Հիշենք՝ զգալ տալ կամ զգացնել (և ոչ՝ զգացնել տալ), խոսել տալ կամ խոսեցնել (և ոչ՝ խոսեցնել տալ), վազել տալ կամ վազեցնել (և ոչ՝ վազեցնել տալ) և այլն:

Խուսափենք ոչ միայն վիրուսներից

– Համավարակների ժամանակ չախտահանված որևէ բանի դիպչելուց պետք է խուսափել: Իսկ եթե *դիպչել* եք, ձեռքերը լվացեք,– հեռուստատեսային հաղորդման ժամանակ հորդորում է վարակաբանը:

Լեզվական սխալն ակնհայտ է. պետք է ասվեր՝ *եթե դիպել եք*: Ամեննին դժվար չէ կազմել «չ» սոսկածանցն ունեցող բայերի ճիշտ ժամանակաձևերը: Ընդամենը պետք է իմանալ, որ խոնարհման որոշ դեպքերում կամ անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերում չ-ն դուրս է ընկնում, և տվյալ բայերը (*դիպչել, թռչել, կորչել, կպչել, հանգչել, փախչել*) ունենում են հետևյալ ձևը. *դիպել է, թռել է, կորել է, կպել է, հանգել է, փախել է* (և ոչ՝ *դիպչել է, թռչել է, կորչել է, կպչել է, հանգչել է, փախչել է*), հոգնակիում՝ *դիպել ենք, կորել ենք, կպել ենք, թռել ենք* և այլն (վաղակատար ներկա). *դիպավ, թռավ, կորավ, կպավ, հանգավ, փախավ* (և ոչ՝ *դիպեց, թռեց, կորեց, կպեց, հանգեց, փախեց*) և այլն (անցյալ կատարյալ). *դիպի՛ր, թռի՛ր, կորի՛ր, կպի՛ր, հանգի՛ր, փախի՛ր* և այլն (հրամայական եղանակ):

Միշտ նկատի ունենանք, որ խուսափել պետք է ոչ միայն տարատեսակ վիրուսներից, այլև լեզվական սխալներից:



Մի «փոքր» սխալի մասին

Խոսքը *և* ածանցի և *կապվել* բառի՝ վաղուց գոյություն ունեցող անընդունելի հարաբերության մասին է:

Նախ ասենք, որ *կապել* բայը, *վ* ստանալով, կարող է դառնալ կրավորական՝ *կապվել*, չնայած վերջինս ունի նաև չեզոք սեռի բայի կիրառություն: Սակայն տվյալ պարագայում հարցն առնչվում է ոչ թե այս բայի կրավորական կամ չեզոք լինելուն, այլ նրա մեջ ներխուժող *ն*-ին:

Անշուշտ, շատերն են նկատել, որ ոմանք սովորություն չունեն «կապվելու» որևէ մեկի հետ. նրանք պարտադիր պիտի «կապնվեն»: Թերևս ամեն օր ենք լսում այսպիսի նախադասություններ. «Երեկոյան ես *կկապնվեմ* քեզ հետ», «Դու վաղը *կապնվիր* ինձ հետ», «Փորձիր *կապնվել* հետո»:

Այսպես՝ քույրը հեռախոսով ուզում է «կապնվել» եղբոր հետ, հայրը՝ որդու, աշխատողը՝ տնօրենի և այլն: Մերժելի ձև, որից պետք է ձերբազատվել շուտափույթ: Իսկ դա ավելի քան հեշտ է. ընդամենը չպետք է գործածել *ն*-ն, և ամեն բան կընկնի տեղը: Այդ դեպքում մեջբերած նախադասություններն էլ կդառնան անսխալ ու կհնչեն այսպես. «Երեկոյան ես *կկապվեմ* քեզ հետ», «Դու վաղը *կապվիր* մեզ հետ», «Փորձիր *կապվել* հետո»: Ահա մի «փոքր», բայց արմատացած սխալից ազատվելու պարզ միջոց, որը խորհուրդ ենք տալիս կիրառել այս իսկ պահից:



Որպեսզի չսխալվել...

Որպեսզի բառի սխալ կիրառության մասին (երբ այն գործածվում է *որ*-ի փոխարեն) խոսվում է հաճախ, սակայն կա այս բառի գործածության ևս մեկ սխալ, որը նույնքան տարածված է:

- «Այդ գործը *որպեսզի* անել, հարկավոր են կիրթ աշխատողներ»,

- «Որպեսզի խնդիրները լուծել, հարկավոր է վճռականություն...»,
- «Պետք է շատ ժամանակ, *որպեսզի* այդ ամենին հետևել»:

Նմանատիպ նախադասություններ հաճախ են հանդիպում մեր թե՛ գրավոր, թե՛ բանավոր խոսքում: Ակնհայտ է, որ գործ ունենք ռուսերենի ազդեցությամբ կազմված, ռուսերենից պատճենված նախադասությունների հետ: (Օրինակ՝ «Детям нужна помощь, чтобы это сделать»).

Այսպիսի սխալներ հիմնականում հենց ռուսերեն կրթությամբ անձինք էլ թույլ են տալիս: Նման նախադասությունները, մտքի նման շարադրանքը ճիշտ են ռուսերենում: Տվյալ նախադասությունները մենք կձևակերպենք այսպես.

- «Այդ *գործն անելու համար* հարկավոր են կիրթ աշխատողներ»,
- «*Խնդիրները լուծելու համար* հարկավոր է վճռականություն»,
- «Պետք է շատ ժամանակ *այդ ամենին հետևելու համար*»:

– Որպեսզի չսխալվել, հարկավոր է մտածել հայերեն, – այսպես կասեն հայերեն վատ իմացողները: Իսկ մենք ճշտենք և հորդորենք հիշել. «*Չսխալվելու համար* հարկավոր է մտածել հայերեն»:

ԱԾ-ի, ՍԱԾ-ի, ԴԲԾ-ի, ՊՊԾ-ի և ԴԱՀԿԾ-ի մասին

Ինչպե՞ս են արտասանվում տառային հապավումները:

Այնպես, ինչպես գրվում են: Օրինակ՝ ՄԱԿ, ՄՕԿ, ՀՕՖ, ՏԻՄ: Բաղաձայններով կազմվածների դեպքում արտասանվում է գաղտնավանկի ք-ն՝ ԼՂՀ (ԼըՂըՀը), ԿԳՄՄՆ (ԿըԳըՄըՆըՆը), ՀԳՄ (ՀըԳըՄը), ՀՄԴԿ (ՀըՄըԴըԿը) և այլն:

Արտասանության հետ կապված խնդիր հիմնականում չկա, բայց այժմ խոսքը ոչ թե արտասանության, այլ այն մասին է, թե նպատակահարմա՞ր է արդյոք բաղադրյալ ամեն անվանում հապավել և եթերում արտասանել այդպես: Օրինակ՝ մեր երկրին՝ Հայաստանի

Հանրապետությանը ասել ՀՀ Ազգային ժողովին՝ ԱՇ, Սահմանադրական դատարանին՝ ՄՂ, և այլն:

Ուշադրություն դարձնենք և կնկատենք, որ որոշ հապավումների դեպքում եթերում այդ արտասանությունը գեղեցիկ, նպատակահարմար չէ: Օրինակ՝ մի՞թե արժի հաղորդման ընթացքում հնչող հազարավոր բառերի մեջ ընդամենը մի քանի բառ պակաս արտասանելու համար բարեհնչությունն անտեսել և ասել ՀԾԿՀ նախագահ, ԱԽ քարտուղար, ՊՊԾ գունդ, ԴԱՀԿ ղեկավար, ԹՄՄ մասնաճյուղ, ՀՔԾ հաղորդագրություն, ԹԳՄ համագումար, «ՊՄԺ»-ի հարձակվող, ՀԿ, ՉԹՕ, ՉԹԱ, ՊՎԾ և այլն:

Հակիրճությունը՝ հակիրճություն, բայց խոսքը, մանավանդ եթերի՝ խոսքը, նախ և առաջ պետք է լինի գեղեցիկ, հնչեղ:

Պետք է նաև նկատի ունենալ, որ այսպիսի հապավումները շատերին նույնիսկ անհասկանալի են: Օրինակ՝ քանի՞ հեռուստադիտող կամ ռադիոլսող գիտի, որ ինչ-որ ընկերության տուգանած ՏՄՊՊՀ-ն Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովն է:

Խե՛ղճ հեռուստադիտող ու ընթերցող, դե ե՛կ ու վերձանիր ԱԾ-ն, ՍԱԾ-ն, ԴԱՀԿԾ-ն, ԴԲԾ-ն, ԱԾԻԳ-ը, ՉԼ-ն, ՍՏՀԿ-ն, ՄԶԳ-ն, ՄԶԶ-ն...

Քանի որ մեր ժամանակներում էլ հապավումներն ստեղծվում ու տարածվում են «դարին վայել» արագությամբ, երևի հեռու չէ այն օրը, երբ ամեն նախադասությունից հետո մենք իրար պիտի հարցնենք, թե ի՛նչ էր նշանակում այս կամ այն բառը: Օրինակ՝ ԳՏՄԿ-ն, ԳՓՄ-ն, ԳՖԲ-ն, ԳՖԴ-ն, ՀՌՖ-ն, ՀՎՄ-ն, ՀՏԳՄ-ն, ՔՏՀԱՏՄ-ն և ԲԸՏՄ-ն...

Իմաստները հասկացա՞ք... Դժվար թե: Ավա՛ղ, ես էլ չեմ կարող օգնել, որովհետև... մոռացա:

Եվ գուցե ճիշտ կլինի որևէ մարմին անվանակոչելիս նաև մտածենք, թե հակիրճության ձգտող մեր դարում ինչպե՛ս է հնչելու դրա հապավումը, որպեսզի երբեմն չսկսենք նաև ակամայից հայիոյել...

Ճիշտ է, հապավումները նույնպես մեր բառամթերքի կարևոր մասն են, բայց ինչպես ամեն բառ, եկեք դրանք գործածենք տեղին, չափավոր: Օգտագործե՛նք, այլ ոչ թե չարաշահենք:

Հապավումների փոխառումը

Երբեմն հարց է առաջանում. «Ինչպե՞ս պետք է գրել՝ ՅՈՒՆԵՍԿՈ՞, թե՞ ՅՈՒՆԵՍԿՕ»: Նախ ասենք, որ լեզուները հաճախ փոխառում են նաև հապավումներ (օրինակ՝ ՖԻՖԱ (ֆր. Fédération Internationale de Football Association (Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա)), ՆԱՏՕ (անգլ. North Atlantic Treaty Organization (Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն)):

Ընդունված է նաև, որ լեզուները հապավումներ կազմեն օտար բաղադրյալ անվան թարգմանված բառերով: Օրինակ՝ անգլ. United Nations (UN) - Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ), ռուս. Содружество Независимых Государств (СНГ) - Անկախ պետությունների համագործակցություն (ԱՊՀ) և այլն: Ինչպես նկատում ենք, հապավումները փոխառելիս տառադարձվում են, օրինակ՝ FIFA – ՖԻՖԱ, NATO – ՆԱՏՕ:

Դառնանք խնդրո առարկա հապավմանը: Բոլորս էլ գիտենք, որ կա միջազգային մի կազմակերպություն, որը անգլերեն կոչվում է United Nations Educational, Scientific and Cultural Organization (UNESCO, հայերեն՝ Միավորված ազգերի կազմակերպության կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն): Քանի որ մենք փոխառել ենք այս անվան հապավումը՝ UNESCO-ն, բնականաբար այն պետք է տառադարձենք, պահպանենք նրա ուղղագրությունը: Ասել է՝ ճիշտ է ոչ թե ՅՈՒՆԵՍԿՈ-ն, այլ ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

Այլք-ի, այլոց-ի և այլոք-ի մասին

Արդյո՞ք ճիշտ են կազմված *այլք*, *այլոց*, *այլոք* բառերը:

Պատասխանենք կարճ՝ առաջին երկուսը՝ այո՛, երրորդը՝ ո՛չ:

Այլք-ը *այլ*-ի հոգնակին է, որ նշանակում է *ուրիշներ*: *Այլոց*-ը ունի նույն իմաստը, ինչ որ *ուրիշների*, *ուրիշների* բառաձևերը:

Այլք-ը և *այլոց*-ը գրաբարյան ձևեր են, որոնք այսօր էլ կենսունակ են և բավական հաճախ գործածելի:

Այլ է վերջին օրինակի՝ *այլոք*-ի պարագան: Այսպիսի բառաձև չի եղել ու չկա: Լեզուն վատ իմացող ինչ-որ մեկն այն գործածել է, և ուրիշներն էլ տարածել են՝ կարծելով, թե դա նույնպես գալիս է հնուց:

Ցավոք, այս սխալը նույնպես հանդիպում է հաճախ, թեև դրա մասին խոսվում է ոչ հազվադեպ: Ահա մի քանի օրինակ.

- «Պաշտպանության նախարարը, ԵԿՄ նախագահը և *այլոք* այցելել են Եռաբլուր»:
- «Մարդու իրավունքների եվրոպական դատարանը *Զայյանը և այլոք ընդդեմ Հայաստանի* գործով վճիռ է կայացրել»:
- «Լուիզա Ղամբարյանը, Լենա Ղազարյանը և *այլոք*՝ «Դու չտխրես» նոր հոլովակում»:

Ոմանց հավանաբար թվում է, թե *այլոք*-ը նշանակում է այլ անձինք: Թերևս սա է պատճառը, որ կազմվում է անգամ այսպիսի նախադասություն.

- «Շուրջ 400 լրագրողներ ենթարկվել են հարձակման, և 130 *այլոք* բերման են ենթարկվել»:

Նշենք, որ հաճախ է գործածվում նաև գրաբարյան *այլ ոք*-ը, որ նշանակում է այլ անձ, մեկ ուրիշը: Սա շփոթության տեղիք թող չտա: Իհարկե, չպետք է նաև կարծել, թե ամեն բան տեղը կընկնի, եթե սխալը վերացնելու համար *այլոք*-ը բոլոր դեպքերում փոխարինենք *այլք*-ով: Օրինակ՝ այս նախադասություններում.

- «Մի շարք ընտրողների փոխարեն *այլոք* են քվեարկել»:
- «Նա բացահայտել է երաժշտությունն այնտեղ, որտեղ *այլոք* միայն բանաձև են գտնում»:

Ամեն բառ ունի իր գործածության ոլորտը. այս հանգամանքը պետք է նկատի ունենալ միշտ:

Բերված վերջին նախադասություններում *այլոք*-ի փոխարեն կարելի էր գրել, օրինակ՝ *ուրիշներն (այլ անձինք) են քվեարկել. ուրիշները միայն բանաձև են գտնում*:

Անշուշտ, ուրիշ շատ դեպքերում *այլոք*-ի փոխարեն ազատորեն կարելի է գործածել *այլք*-ը, և, օրինակ, ոչ թե ասել. «Հանդիսությանը մասնակցում էին մտավորականներ,

գիտնականներ և *այլոք*», այլ «Հանդիսությանը մասնակցում էին մտավորականներ, գիտնականներ և *այլք*»: Ոչ թե՝ «Դա գրել են մեր գրողները, պատմիչները, գրիչները և *այլոք*», այլ «Դա գրել են մեր գրողները, պատմիչները, գրիչները և *այլք*»:



Բացօդյա-բացօթյա

Բացօդյա-ն և *բացօթյա*-ն զուգաձևություն, նույն բառը չեն՝ գրության տարբեր ձևերով: Սրանք տարբեր բառեր են՝ կազմված տարբեր արմատներից: *Բացօդյա*-ում երկրորդ արմատը *օդ*-ն է (բաց+օդ+յա), *բացօթյա*-ում՝ *օթ*-ը (բաց+օթ+յա): *Օթ*-ը առանձին չգործածվող բնիկ հայերեն արմատ է: Գործածվել է «գիշերը մի տեղ անցկացնելը» իմաստով: Այս արմատով են կազմված, օրինակ, *օթյակ*, *օթևան*, *գիշերօթիկ* բառերը:

Ընդ որում՝ սկզբում եղել է միայն *բացօթյա* բառը: Հրաչյա Աճառյանն առհասարակ սխալ է համարել *բացօդյա*-ի գործածությունը՝ նշելով, որ դա «տարածված է Կովկասում, տգետ գրողների մեջ»: Սակայն ժամանակները փոխվել են, այս բառը հարթել է իր ճանապարհը և հաստատուն տեղը գրավել նաև բառարաններում:

Կա նաև կարծիք, որ երբ «... խոսքը վերաբերում է բաց երկնքի տակ գիշերելուն, օթևանելուն, ապա գործածվում է *բացօթյա* բառը, իսկ բաց օդում, բաց տեղում, բաց երկնքի տակ պառկելու, խաղալու, հավաքվելու, խնջույք անելու դեպքում գործածվում է *բացօդյա* բառը»: Սակայն այս մեկնաբանությունը նույնպես անվիճելի չէ:

Բոլոր դեպքերում չենք կարող չընդունել, որ ժամանակակից հայերենում *բացօդյա* և *բացօթյա* բառերն իմաստներից մեկով ամբողջովին համընկնում են և ունեն *բաց օդում*, *բաց երկնքի տակ* նշանակությունը: Այս բառերին այսպիսի մեկնաբանություն է տրված, օրինակ, էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում»:

Հենց այս բացատրությունը նկատի ունենալով էլ ասենք, որ երբ խոսքը վերաբերում է *բաց երկնքի տակ անցկացվող միջոցառմանը*, կարող ենք գործածել այս բառերից որը կամենանք, որովհետև, անկախ այն հանգամանքից, որ դրանք կազմված են տարբեր արմատներից, այդ դեպքում ունեն նույն նշանակությունը (*բաց օդում*, *բաց երկնքի տակ*): Իհարկե, գործածության շատ այլ դեպքերում պետք է նկատի ունենալ նաև այս բառերի իմաստային նրբերանգները:

Ովքե՞ր են հանդիպում նախագահների միջև

Օտար լեզուների ազդեցությամբ հայերենում տարածվող սխալների մասին խոսվում է հաճախ: Այդ սխալների պատճառը երբեմն օտար լեզվական կաղապարների ուղղակի պատճենումն է:

Իհարկե, այս առումով չպետք է ընկնել ծայրահեղության մեջ, որովհետև օտար լեզվատրամաբանությանը «համընկնող» ամեն բան չէ, որ հայերենում սխալ է: Սակայն ոչ թե թարգմանելու, այլ լեզվական կաղապարը, արտահայտությունը «կրկնօրինակելու» պատճառով երբեմն մեր լեզվի մեջ մտնում են տարօրինակ սխալներ:

Պետք է նկատի ունենալ, որ ուղղակի «պատճենված» ձևերը սխալ են այն դեպքում, եթե խորթ, անհարազատ են մեր լեզվին, խաթարում են մեր լեզվամտածողությունը:

Այսօր կխոսենք այդպիսի ևս մեկ սխալի մասին, որը տարածվածության, հաճախ կրկնվելու պատճառով արդեն չենք զգում:

Կարո՞ղ է արդյոք հանդիպումը լինել... միջև: Օրինակ՝ պաշտոնական հանդիպումը՝ նախարարների միջև, աշխատանքային հանդիպումը՝ ներկայացուցիչների միջև:

Կարծես՝ ոչ: Բայց ուշադրություն դարձրեք, խնդրեմ, թե այդպիսի որքա՞ն հանդիպումներ են «կայանում» մեր խոսքում: Ահա մի քանի օրինակ.

- «Երեկ *հանդիպում է տեղի ունեցել* Ամերիկայի և Ֆրանսիայի *նախագահների միջև*»:
- «Կա տեղեկություն, որ հնարավոր է *հանդիպում կայանա* խմբակցությունների ղեկավարների *միջև*»:
- «Ֆուտբոլի Հայաստանի և Ռումինիայի *հավաքականների միջև հանդիպումը* կսպասարկի Լատվիան ներկայացնող մրցավարական անձնակազմ»:
- «Այսօր տեղի կունենա *հանդիպում* իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների *միջև*»:

- «ՀՀ առևտրաարդյունաբերական պալատում կայացավ աշխատանքային *հանդիպում* գործարար կանանց և «Արարատ» բանկի ներկայացուցիչների *միջև*»:
- «Թեհրանի միջուկային խնդրի հարցով միջազգային միջնորդների «վեցյակի» և Իրանի *միջև հանդիպումը* տեղի կունենա փետրվարի 18-ին»:
- «Երկրների *առաջնորդների միջև հանդիպում* պայմանավորված չէ»:
- «ԱՄՆ-ի և Ճապոնիայի բարձրաստիճան պաշտոնյաների *միջև հանդիպում* է տեղի ունեցել Տոկիոյում»:

Հայերենում «անհասկանալի» այս կադապարը վերցված է ռուսերենից: Համոզվելու համար ընթերցենք ռուսերեն մամուլից ընտրած՝ համանման նախադասությունների մի քանի օրինակ.

- «Состоялась *встреча между* главами МИД Армении и России».
- «25 марта состоялась *встреча между* экс-президентами Армении и Арцаха».
- «*Встреча между* «Жальгирисом» и «Црвеной Звездой» перенесена из-за вспышки коронавируса у сербов».
- «В Улан-Баторе прошла консультативная *встреча между* представителями МИД Монголии и России».

Կրկնենք. այն, ինչ ճիշտ է մի լեզվում, սխալ կարող է լինել մեկ այլ լեզվում, որովհետև ամեն լեզու ունի իր յուրահատկությունը, «տրամաբանությունը»: Պատկերացրեք, թե հաճախ ի՞նչ անհեթեթ ձևակերպումներ կլինեն այլ լեզուներում, եթե թարգմանելիս ուղղակիորեն «պատճենվի» հայերեն մտածողությունը: Փորձե՛ք, եթե ցանկանում եք, իսկ մենք, որպես օրինակ, հայերենացնենք քիչ առաջ ընթերցած նախադասություններից մի քանիսը.

- «Երեկ *հանդիպել են* Ամերիկայի և Ֆրանսիայի *նախագահները*»:
- «Կա տեղեկություն, որ հնարավոր է *հանդիպեն* խմբակցությունների *ղեկավարները*»:
- «Ֆուտբոլի Հայաստանի և Ռումինիայի *հավաքականների հանդիպումը* կսպասարկի Լատվիան ներկայացնող մրցավարական անձնակազմ»:

➤ «Այսօր **կհանդիպեն** իշխանության և ընդդիմության ներկայացուցիչները»:

Հայերենում, այո՛, պետք է ուղղակիորեն հանդիպեն, օրինակ, աշխատողները, ղեկավարները, թիմերը, նախագահները, այլապես կարող է հարց առաջանալ, թե այդ ո՛ր երրորդ անձինք են հանդիպելու նրանց միջև:

Նույն տրամաբանությամբ՝ լինում է գրույց, առանձնագրույց, հեռախոսագրույց ոչ թե, օրինակ, *նախագահների միջև*, այլ **նախագահների**: Ընդհարում ոչ թե *խաղացողների միջև*, այլ **խաղացողների**: Բախում ոչ թե *գորքերի միջև*, այլ **գորքերի**:

Այսպես՝ այս ավելորդ *միջև*-ից պետք է հրաժարվել բոլոր այն դեպքերում, եթե միտքը կարելի է ձևակերպել առանց դրա, և նախադասության մեջ այն չունի որևէ դեր:

Հոմանիշների նմանությունն ու տարբերությունը

Կա մի սխալ մտայնություն. չգիտես ինչու, ոմանց թվում է, թե հոմանիշ բառերն իրար փոխարինում են բոլոր դեպքերում, բոլոր նախադասությունների մեջ:

Պետք չէ ունենալ լեզվական հարուստ գիտելիքներ կամ իմանալ քերականական բազում կանոններ՝ զգալու համար, որ այդպես լինել չի կարող:

Հիշեցնեմք, որ *«հոմանիշներ են կոչվում միևնույն հասկացությունն արտահայտող այն բառերը, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստներ և միաժամանակ կարող են տարբերվել ռճական կիրառությամբ, հուզաարտահայտչական գունավորմամբ, ինչպես նաև գործածականությամբ և ուրիշ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ»*:

Լեզվաբան Աշոտ Սուքիասյանի այս ձևակերպմամբ (Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 122) պարզաբանված է ամեն բան:

Ասվածը մեկնաբանենք օրինակներով:

Հոմանիշներ են *մաքուր-ը, պարզ-ը, հստակ-ը, ջինջ-ը, վճիտ-ը, զուլալ-ը, ականակիտ-ը, անապակ-ը, անապական-ը...*

Ինչպես կարող ենք ասել, օրինակ, *մաքուր ջուր, պարզ ջուր*, այնպես էլ՝ *վճիտ ջուր, զուլալ ջուր, անապակ ջուր*:

Մաքուր-ը կարող ենք կապել նաև շատ այլ բառերի ու ասել, օրինակ, *մաքուր հատակ*, *մաքուր հագուստ*, *մաքուր մարդ*: Բայց կարո՞ղ ենք նույն բառերի հետ գործածել վերջինիս նշված հոմանիշներն ու ասել *հատակ հատակ*, *վճիտ հագուստ*, *ականակիտ մարդ*:

Հավանաբար թվում է այնքան տարօրինակ, որ նույնիսկ մտածում եք, թե ինչո՞ւ է այս մասին խոսվում:

Այդ դեպքում գրեմ երկու այլ հոմանիշ բառ՝ *խրախուսել*, *քաջալերել*:

Ո՛չ մի կասկած. *խրախուսել* բառի առաջին իմաստներից մեկը *քաջալերել*-ն է և հակառակը: Ուրեմն կարո՞ղ են սրանք իրար փոխարինել: Իհա՛րկե: Այլապես ինչո՞ւ պիտի համարվեին հոմանիշ: Բայց չմոռանանք քիչ առաջ ասվածը՝ *հոմանիշներն իրարից կարող են տարբերվել և՛ ոճական կիրառությամբ, հուզաարտահայտչական երանգավորմամբ, և՛ այլ բառերի հետ կապակցվելու տարբեր ունակությամբ*:

Ահա այստեղ է, որ պետք է մի քիչ ունենալ լեզվական հոտառություն:

Կարո՞ղ ենք խրախուսել զինվորներին:

Ոչ միայն կարող ենք, այլև պարտավոր ենք:

Իսկ քաջալերե՞լ:

Դե, էլ ուրիշ ո՞ւմ է հարկավոր քաջալերել, եթե ոչ հենց զինվորներին:

Ամեն բան թվում է պարզ: Այո՛, այս դեպքում՝ պարզ, բայց ո՛չ դրա հոմանիշներով ասած՝ անպաճույճ, անապակ, ջինջ...

Սակայն արի ու տես, որ ամեն ինչ պարզ է թվում առաջին հայացքից, իսկ իրականում *քաջալերել* բառի իմաստը շատերի համար մշուշոտ է: Այս պատճառով էլ այնքան են տարածվել դրա գործածության սխալները, որ հանդիպում են անգամ պաշտոնական փաստաթղթերում, զանազան գրություններում ու լրագրողների խոսքում: Քաջալերվում է այն, ինչը քաջալերվող բան չէ...

Օրինակ՝ քաջալերվում է... ձգտումը («Բանախոսը հորդորեց *քաջալերել* անկախացման *ձգտումը*»), գաղափարը («Կազմակերպությունը մտադիր է *քաջալերել* քուլեջի համար գումար խնայելու *գաղափարը*»), գործունեությունը («ՊԵԿ-ը այս հարցում բավական կառուցողական դեր է ունեցել և Կառավարությունում *քաջալերել* է այս *գործունեությունը*»):

Բերենք այլ օրինակներ՝ վերցված մամուլից ու տարբեր գրություններից.

- «Հայաստանն ու Գերմանիան *քաջալերում են* երկկողմ հարաբերությունների *զարգացումը*»:
- «ԵՄՀ-ն *քաջալերում է առաջընթացը*»:
- «Կողմերը *քաջալերում են* անմիջական *ներդրումները*»:
- «Շվեյցարիան *քաջալերում է* Հայաստան-Իրան *հարաբերությունները*»:
- «Առաջադեմ երկրները *քաջալերում են նորարարությունը*»:

Թեև աշակերտները նույնպես քաջալերման կարիք զգում են հաճախ, բայց դժվար թե այսպիսի դեպքերում. «Ընթերցանության ժամանակ պետք է հարցեր տալ և *քաջալերել*, որ աշակերտը ամբողջական նախադասություններով *պատասխանի* հարցերին»:

Շատերը դժվարությամբ են համաձայնում պատվաստվել, սակայն չենք կարծում, թե բանը հասել է նրան, որ դրա համար բնակչությանն սկսել են քաջալերել. «Թել Ավիվում մարդկանց *քաջալերում են* COVID-19-ի դեմ *պատվաստվել*»:

Հեշտ է նկատել, որ այս նախադասություններում ամեն բան տեղը կընկնի, եթե *քաջալերել*-ը փոխարինենք իր հոմանիշ *խրախուսել*-ով: Որպես օրինակ՝ ճշտենք դրանցից մի քանիսը.

- «Հայաստանն ու Գերմանիան *խրախուսում են* երկկողմ հարաբերությունների *զարգացումը*»:
- «ԵՄՀ-ն *խրախուսում է առաջընթացը*»:
- «Կողմերը *խրախուսում են* անմիջական *ներդրումները*»:
- «Շվեյցարիան *խրախուսում է* Հայաստան-Իրան *հարաբերությունները*»:

Միավելելու պատճառներից մեկն էլ ռուսերենից ոչ ճիշտ թարգմանությունն է: Քանի որ *поощрить* (*поощрять*) բառը նշանակում է և՛ խրախուսել, և՛ քաջալերել, ոմանց թվում է, թե ամեն պարագայում դրանցից ո՛րն ուզեն կընտրեն ու ինչպես կխրախուսեն, այնպես էլ կքաջալերեն աշխատանքը, ձեռնարկատիրությունը, առևտուրը...

Մեր մեկ այլ լեզվաբան՝ Մայա Ավագյանը, ասում էր. «Ճիշտ բառը ճիշտ տեղում»:

Պետրոս Բեդիրյանի հոմանիշների բառարանը կոչվում է «Բառի ընտրությունը», քանի որ մեծագույն խնդիրը ճիշտ բառ ընտրելն է:

Հոմանիշների բազում բառաբայների մեջ գտնենք, ուրեմն, ասելիքը ճիշտ արտահայտող բառը և իր տեղը դնելուց առաջ հիշենք, որ այն նույնպես ունի իր ոճական

առանձնահատկությունը, գործածության շրջանակն ու այլ բառերի հետ կապվելու յուրահատկությունը:



«Նուրբ» սխալ, որ դառնում է կոշտուկ

Լեզվական ամեն սխալ նման է մոլախոտի. քաղիանը ժամանակին չանելու դեպքում անվերջ տարածվում է:

Խոսենք նման մի «նուրբ» սխալի մասին, որը, շարունակ լսելով, անգամ չենք նկատում:

Ի՞նչ է նշանակում *տեղի ունենալ*:

Ավելի հեշտ հա՞րց...

Պատահել, կատարվել, կայանալ, լինել, ընթանալ:

Այսքան պարզ հարցո՞ւմ էլ կարելի է սխալվել:

Պարզվում է՝ այո՛:

Պատճառը թերևս այն է, որ ոմանք կարծում են, թե հոմանիշ բառերը, կառույցները իրար փոխարինում են բոլոր դեպքերում, ամեն տեղ. թե այն, ինչ պատահում է, կատարվում, կայանում, լինում ու ընթանում, ուրեմն նաև տեղի է ունենում:

Բերենք օրինակներ՝ վերցված հիմնականում էլեկտրոնային մամուլից.

- «Պատերազմի ավարտից հետո *տեղի են ունենում* սահմանազատման *աշխատանքներ*»:
- «Հետազոտողները նշել են, որ *P.1- ի տարածումը տեղի է ունեցել*՝ չնայած այն հանգամանքին, որ քաղաքի բնակչության 68%-ը արդեն վարակվել է»:
- «*Տեղի է ունեցել* ուղղորդված *քվեարկություն*»:
- «*Փոթորիկները* կարող են *տեղի ունենալ* տարվա ցանկացած պահի»:
- «Որոշ արտակարգ իրավիճակների ժամանակ էլեկտրաէներգիայի *անջատումներ* կարող են *տեղի ունենալ*»:
- «Այս *անօրինականությունները*, որ *տեղի են ունենում*»:
- «*Տեղի են ունենում* Արման Թաթոյանի *առանձնագրույցները* բերման ենթարկված անձանց հետ»:

- «Օղի աղտոտվածության մակարդակը բարձրանում է, երբ Կալիֆոռնիայում *տեղի են ունենում հրդեհներ*»:
- «Ուսուցչի *սպանությունը տեղի է ունեցել* աշակերտուհու ստի պատճառով»:
- «Բենեվենտոյից» կրած պարտությունից հետո զանգվածային *տարաձայնություն է տեղի ունեցել* հանդերձարանում»:
- «Երևանի Սարալանջի պողոտայում *տեղի է ունեցել քարաթափում*»:

Ցավոք, շարքը կարելի է շարունակել երկար:

Հայերենին տիրապետող ընթերցողն անշուշտ նկատեց, որ այս օրինակները կարելի է ճշտել՝ մի մասում գործածելով *«տեղի ունենալ»* բառակապակցության ճիշտ հոմանիշը, մի մասում այն պարզապես հանելով ու նախադասությունները ձևակերպելով այլ կերպ: Այսպե՛ս.

- «Պատերազմի ավարտից հետո *կատարվում են* սահմանազատման *աշխատանքներ*»:
- «Հետազոտողները նշել են, որ *P.1-ը տարածվել է՝* չնայած այն հանգամանքին, որ»:
- «*Եղել է* ուղղորդված *քվեարկություն*» կամ «*Քվեարկությունն ուղղորդվել է*»:
- «*Փոթորիկներ* կարող են *լինել* տարվա ցանկացած պահի»:
- «Որոշ արտակարգ իրավիճակների ժամանակ *էլեկտրաէներգիայի անջատումներ կարող են լինել*» կամ «Որոշ արտակարգ իրավիճակների ժամանակ *էլեկտրաէներգիան կարող է անջատվել*»:
- «Այս *անօրինականությունները*, որ *կատարվում են/լինում են*»:
- «Արման Թաթոյանն *առանձնազրույցներ է ունենում* բերման ենթարկված անձանց հետ»:

Մյուս նախադասությունները թողնենք, որ ուղղի ընթերցողը: Կարծում ենք՝ դժվար չէ:

Իսկ ի՞նչը կարող է տեղի ունենալ:

Հազար ու մի բան: Օրինակ՝ իրադարձությունը, հանդիպումը, ցույցը.

- «Դարասկզբին *տեղի են ունեցել* պատմական խոշոր *իրադարձություններ*»:
- «Վերջապես *տեղի ունեցավ*՝ սան այդ կարևոր *հանդիպումը*»:

➤ «Ֆրանսիայում **տեղի է ունեցել** բողոքի զանգվածային **ցույց**»:

Մեր լեզվից քաղհանե՛նք, այո՛, նաև այս մոլախոտը, վերացնենք նաև այս «նուրբ» սխալը, որն արդեն դառնում է կոշտուկ...



Լուսացույցե՞ր, թե՞ լուսացույցներ

Կարող ենք նաև շարունակել՝ *հեռուստացույցե՞ր, թե՞ հեռուստացույցներ, կողմնացույցե՞ր, թե՞ կողմնացույցներ, ժամանակացույցե՞ր, թե՞ ժամանակացույցներ*:
Հիշենք **կանոնը**:

Ո՞ր դեպքերում են բազմավանկ բարդ բառերն ստանում *-էր* մասնիկը, ո՞ր դեպքերում՝ *-ներ*, եթե դրանց վերջին բաղադրիչը միավանկ բառ է:

Երբ բառի վերջին բաղադրիչ միավանկ բառը պահպանում է իր հիմնական իմաստը, բառն ստանում է *-էր* մասնիկը: Օրինակ՝ *տոնաձառ-տոնաԾԱՌԵՐ, ծովաքար-ծովաՔԱՆԵՐ*:

Մյուս դեպքերում բազմավանկ բարդ բառերն ստանում են *-ներ* մասնիկը: Օրինակ՝ *մանկավարժ-մանկավարժՆԵՐ, նյութապաշտ-նյութապաշտՆԵՐ*:

Կա նաև **երկրորդ կանոնը**, որը պետք է համադրել առաջինի հետ:

Երբ բազմավանկ բառի վերջին բաղադրիչը բայական արմատ է, և բառն արտահայտում է մի բան անողի կամ մի բան ունեցողի նշանակություն, բառն ստանում է *-ներ* հոգնակիակերտ մասնիկը: Երբ վերջին միավանկ բաղադրիչը ոչ թե բայական, այլ անվանական արմատ է, և բառը չի արտահայտում մի բան անողի կամ մի բան ունեցողի նշանակություն, բառն ստանում է *-էր* մասնիկը:

Դառնանք օրինակներին: Մանկավարժը մանկավարժություն անողն է, և, բնականաբար, այդ բառն ստանում է *-ներ* մասնիկը: Նյութապաշտը ոչ ուղղակի իմաստով նյութ պաշտողն է, և տվյալ բառը նույնպես ստանում է *-ներ* մասնիկը:

«Տոնաձառ» բառում *ձառ*-ը պահպանել է իր հիմնական իմաստը, անվանական արմատ է՝ գոյական, և այդ պատճառով *տոնաձառ*-ը ստացել է *-էր* մասնիկը: Նույնն է *ծովաքար*-ի

դեպքում: Քար-ը այստեղ նույն քար-ն է, նույն միավանկն ու նույն գոյականը, և ծովաքար-ն էլ այդ պատճառով դարձել է ծովաթԱՐԵԼ:

Վերադառնանք լուսացույց-ին: Այն ունի՞ որևէ բան անողի իմաստ: Անշո՛ւշտ. լուսացույցը ուղի ցույց տվող, երթևեկությունը լույսերով կարգավորող սարքն է: Ուստի, քանի որ այդպես է, ուրեմն լուսացույց բառը պետք է ստանա -*ներ* մասնիկը, և հոգնակին պետք է լինի՝ **լուսացույցներ**:

Կարծում ենք՝ արդեն հասկանալի է, որ նույն տրամաբանությամբ պետք է կազմվեն նաև բերված մյուս բառերի հոգնակի ձևերը: Այսինքն՝ **հեռուստացույց-հեռուստացույցներ, կողմնացույց-կողմնացույցներ, ժամանակացույց-ժամանակացույցներ**:

Թեև բարդ բառերի հետ կապ չունի, սակայն կարող է հարց ծագել. իսկ ինչո՞ւ են ոմանք ասում *սպաեք*: Մի՞թե դա ճիշտ է: Բհարկե՛ ոչ: Ճիշտ չէ, որովհետև *սպա* բառը թեև «գտարյուն» երկվանկ չէ, բայց նաև միավանկ չէ: Բառասկզբում «ւ» հնչյունից առաջ գաղտնավանկ ը-ն թույլ լսվում է: Հենց այդ թույլ հնչողությունը, կես վանկն էլ պահանջում է, որ բառի հոգնակին կազմվի -*ներ* մասնիկով: Հիշենք սա նույնպես և այսուհետև ոչ թե ասենք *սպաեք*, այլ **սպանեք**:

Կարո՞ղ է արդյոք փորձի պակասը լինել ֆուտբոլիստների մոտ

Ֆուտբոլիստների փորձի ու վարպետության մասին խոսելը մենք կթողնենք ֆուտբոլի մասնագետներին: Հասկանալի է, որ մեզ հետաքրքրողն այստեղ լեզվական կողմն է: Եվ քանի որ ֆուտբոլի մեր բոլոր մեկնաբանները ՄՈՏ «հարաբերություններ» ունեն այս բառի հետ, ուստի որոշեցինք վերջինիս հետ կապված մեր դիտարկումներն անել ըստ նրանց սխալների:

Եթե ասենք, որ մեկնաբաններն այս բառով ավելի շատ սխալ նախադասություններ են կազմում, քան ճիշտ, հավատացեք, որ սխալված չենք լինի: Եվ, ինչպես կհամոզվեք նաև դուք, դրանք այն դեպքերից չեն, որոնց ճիշտ կամ սխալ լինելը դեռևս տալիս է վիճաբանության տեղիք: Դրանք սխալ են աներկբայորեն՝

- «Առայժմ դա *նրանց մոտ* ոչ մի կերպ չի հաջողվում»:

Փորձենք պարզապես մտածել հայերեն, և անմիջապես կզգացվի, որ այստեղ *մոտ*-ի կարիքը բնավ չկա: Իհարկե, դա ոչ թե *նրանց մոտ չէր հաջողվում*, այլ *նրանց չէր հաջողվում*:

- «Փորձի *պակաս կա* Բելգիայի հավաքականի *ֆուտբոլիստների մոտ*»: (Հայերեն կասենք. «Փորձի *պակաս ունեն* Բելգիայի հավաքականի *ֆուտբոլիստները*» կամ «*Պակասում է Բելգիայի հավաքականի ֆուտբոլիստների փորձը*»):
- «Ավելի բարձր է տրամադրությունը Գերմանիայի հավաքականի երկրպագուների *մոտ*»: (Անշուշտ, բարձր է եղել *երկրպագուների տրամադրությունը*):
- «Բավական հետաքրքիր *հավաքական է ստացվել Դեշանի մոտ*»: («Բավական հետաքրքիր *հավաքական է կազմել Դեշանը*»):

Շարունակենք՝ առանց մեկնաբանության.

- «Ոչինչ չի *ստացվում բրազիլացիների մոտ*»,
- «*Գերմանացիների մոտ խաղը չի ստացվում*»,
- «Բայց այսօր *չստացվեց* աշխարհի լավագույն *ֆուտբոլիստի մոտ*»:

Ահա *մոտ*-ի հետ այսպիսի «մոտիկություն», որը մեզ հեռացնում է հայեցի մտածելակերպից: Բայց մի՞թե լավ չի լինի, որ ամեն բառ գործածենք տեղին, մոտ լինենք նախ և առաջ ինքներս մեզ և մեր լեզվամտածողությանը: Քանի որ բերված նախադասություններում սխալ է գործածված նաև *ստացվել* բառը, խոսենք նաև դրա մասին: «*Հաջողվել*» բառը հայերենում կարծես չկա. ամեն բան ստացվում կամ չի ստացվում: Իսկ ի՞նչ կլինի, եթե այնպես խոսենք, որ ամեն լավ բան նաև *հաջողվի*: Եվ ոչ թե հաջողվի մեր, ձեր և ֆուտբոլիստների *մոտ*, այլ մեզ, ձեզ ու մյուս բոլորին: Այդ դեպքում արդեն փորձի պակաս երբեք չի լինի ֆուտբոլիստների *մոտ*...

Մեր տառերի «վարկը»

Կար ժամանակ, երբ օտար անվանումները հայերեն տեքստերում, որպես կանոն, տառադարձվում և գրվում էին հայատառ: Օրինակ՝ «SUUU», «Վեստի», «Օգոնյոկ», «Նյու Յորք թայմս», «Վաշինգտոն թայմս», «Գարդիան», «Ռոյթեր», «Պրավդա», «Իզվեստիա» և այլն:

Իսկ ինչպե՞ս են դրանք գրվում այժմ: Բերենք օրինակներ.

- «Աշխատում էր «Украинская правда» ամսագրում»:
- «Sikorsky UH-60 Black Hawk ռազմական ուղղաթիռի անձնակազմը»:
- ««Вести» ռադիոընկերությունում հաղորդումներ էր վարում»:
- «WikiLeaks պորտալն արգելափակված է Թուրքիայի տարածքում»:
- ««Огонек» ամսագիրը տպագրել է»:
- «Ներկայացնում է Showtime հեռուստաալիքը»:
- «Patriot հակահրթիռային պաշտպանության համակարգերը»:
- «.... մեջբերել է IRNA գործակալությունը»:
- ««Էրմենիհաբերը», վկայակոչելով «Doğan» լրատվական գործակալությանը»:

Վերևում տրված հարցին պատասխանելն արդեն դժվար չէ. հիմա դրանք ով ինչպես ցանկանում, այդպես էլ գրում է՝ ռուսերեն, անգլերեն, թուրքերեն, հայերեն ու անգամ «չգիտեսինչերեն»...

Զի գործում ոչ մի սկզբունք ու կանոն: Անգամ նույն պարբերականում նույն անվանումը կարող է գրվել տարբեր լեզուներով: Ասենք՝ «SUUU» և «TACC», «Վեստի» և «Вести», «Պրավդա» և «Правда»:

Անտեսվում է նաև կետադրության համապատասխան կանոնը. անվանումները, ըստ «տրամադրության», մի դեպքում չակերտների մեջ առնվում են, մեկ այլ դեպքում՝ ոչ:

Բայց մի՞թե սա արդեն օրինաչափություն է: Մի՞թե ուղղագրության, կետադրության հարցերում ևս վերջին տասնամյակներում եկել են նոր ժամանակներ: Այնպիսի ժամանակներ, երբ կանոնական ձև է անկանոնությունը:

Նոր ժամանակներին, փոփոխությանը մենք իհարկե դեմ չենք, եթե այդ փոփոխության մեջ կա իմաստ, տրամաբանություն, և եթե դրանից չի աղավաղվում լեզուն: Սակայն այդպես

չէ այս պարագայում, որովհետև երբեմն հանդիպում են հայերեն այնպիսի տեքստեր, որոնք լեցուն են օտարատառ բառերով: Ընդ որում՝ հայատառ չգրվող անվանումների շրջանակը գնալով ավելի ու ավելի է ընդլայնվում, և հիմա հաճախ հայատառ չեն գրվում երգչախմբերի, երգերի և այլ անվանումներ: Օրինակ՝

- «Այդ երգերն են՝ *Rude Boy, Love The Way You Lie, What's My Name?, Only Girl*»,
- «Այդ մասին հայտնի է դարձել *Marvel* ստուդիայի հետ նրա կնքած պայմանագրից»,
- «2005-ին նրա *Fijacion Oral* ալբոմը դարձավ ամենավաճառվողը»,
- «Երկրորդ անգամ ռեկորդ սահմանեց նրա *La Tortula* երգը»:

Ավելացնենք նաև, որ արդեն «ընդունելի» է դարձել միջազգային կազմակերպությունների անվանումները հայերեն չգրելը: Օրինակ՝ FIFA, UEFA, UNESCO: Էլ չխոսենք TV-ի մասին, որի պարագայում «սխալ» է հայատառ գրելը:

Անշուշտ, այսպիսի «նորարարության» կարիք չկա. օտար անվանումները պետք է տառադարձվեն և գրվեն հայատառ, ինչպես եղել է նախկինում, ինչպես որ ճիշտ է:

Երբ խորհրդային տարիներին հայատառ էին գրվում «ՏԱՍՍ»-ը, «Վեստի»-ն, «Օգոսյոկ»-ը, «Պրավդա»-ն ու «Իզվեստիա»-ն, դրանից այդ անվանումների «տեսքը» չէր աղավաղվում, աչքը դրան սովորում էր արագ:

Հավելենք, որ իրավական ակտերի պարագայում օտար անվանումները պահանջվում է գրել հայատառ անգամ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, որի համապատասխան դրույթը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Նորմատիվ իրավական ակտերում օտարերկրյա կազմակերպությունների անվանումները, ֆիզիկական անձանց անունները, աշխարհագրական օբյեկտների անունները, դրանց հապավումները, ինչպես նաև թարգմանության ոչ ենթակա իրավական, ֆինանսական, տեխնիկական և այլ տերմինները (եզրույթները) գրվում են հայերեն տառադարձությամբ: Անհրաժեշտության դեպքերում հայերեն հապավումների կամ տերմինների հետ փակագծերում կարող են կիրառվել նաև լատիներեն կամ օտարալեզու հապավումներ կամ տերմիններ» (10-րդ հոդված, 2-րդ մաս):

Ոմանց տարօրինակ չթվալու համար ասենք նաև, որ խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ անվանումները միաժամանակ նաև էլեկտրոնային հասցե-հղումներ են:

Օրինակ՝ «Газета.ru»-ն հղում է այդ պարբերականին, «Вести.ru»-ն՝ տվյալ ռադիոընկերությանը:

Այնպես որ, ինչպես պահանջում է լեզուն, եկեք նախկինի պես անգլերեն տեքստերը գրենք անգլերեն, ռուսերենը՝ ռուսերեն, հայերենն էլ՝ հայերեն՝ պահպանելով մեր տառերի «վարկը»:

Երբ «գերիշխող» դիրքում են բառերը

Լայն տարածում ունեցող լեզվական սխալների մասին խոսվել է բազմիցս: Թվում է՝ չկա այնպիսի սխալ, որի մասին գրված ու ասված չլինի: Սակայն երբեմն մեր աչքն ու ականջն այնպես են սովորում հաճախակի կրկնվող սխալներին, որ դրանք արդեն չենք նկատում: Այդպիսի մի սխալ կապված է *հրականացնել* բառի հետ: Չգիտես ինչպես, այս բառն էլ լեզվում է ստացել «գերիշխող» դիրք, արշավ սկսել իր հոմանիշների դեմ՝ նրանց հանիրավիորեն դուրս մղելով և հաճախ կիրառվելով ոչ տեղին:

Բերենք օրինակներ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից.

- «Դուք ի՞նչ *աշխատանքներ պետք է հրականացնեք*»,
- «Խափանման միջոցը փոխելու համար *ստորագրահավաք են հրականացրել* Ազգային ժողովի պատգամավորները»,
- «Հունիսի 20-ին *կհրականացվի* Եգիպտոս-Երևան առաջին կանոնավոր *չվերթը*»,
- «Մեզ ասացին, որ *հրականացնում են* սոցիալաբեթով *ծառայության մատուցում*»,
- «Բողոքում են քսան տարուց ավելի զինված ուժերում *ծառայություն հրականացրած* սպաները»:

Այսպես՝ *հրականացվում են* վագոնների նորագումը, շենքերի ու վերելակների սպասարկումը, ուղևորափոխադրումը...

Այլևս ոչինչ կարծես չի կատարվում, չի արվում. ամեն բան միայն *հրականացվում է*: Հատկապես՝ աշխատանքը:

Չմոռանանք բառերի բուն իմաստները: «*հրականացնել*» նշանակում է իրական դարձնել, իրականություն դարձնել, իրագործել:

Մի՞թե ճիշտ չի լինի, որ ավելի հաճախ իրականացնենք երազանքները, ցանկություններն ու ծրագրերը, իսկ աշխատանքները՝ կատարենք, անենք:

Այժմ նույն նախադասությունները շարադրենք առանց *իրականացնել* բառի և համեմատենք. արդյո՞ք այսպես ավելի ճիշտ ու տրամաբանական չէ:

«Դուք ի՞նչ **աշխատանքներ պետք է անեք**», «Խափանման միջոցը փոխելու համար **ստորագրահավաք են կազմակերպել** Ազգային ժողովի պատգամավորները», «Հունիսի 20-ին **կկատարվի** Եգիպտոս-Երևան առաջին կանոնավոր **չվերթը**», «Մեզ ասացին, որ սոցիալաբեթով **ծառայություն են մատուցում**», «Բողոքում են քսան տարուց ավելի զինված ուժերում **ծառայած** սպաները»:

Նույն ձևով՝ որևէ կազմակերպություն կարող է **վազոնները** պարզապես **նորոգել** (ոչ թե *իրականացնել* դրանց *նորոգումը*), համատիրությունը՝ **շենքերն ու վերելակներն սպասարկել** (ոչ թե *իրականացնել* դրանց *սպասարկումը*), ավիաընկերությունը՝ **ուղևորափոխադրում կատարել** (ոչ թե *իրականացնել*):

Հուսով ենք, որ այսուհետև մենք էլ ոչ թե *իրականացնել* բառի ճիշտ կիրառում կիրականացնենք, այլ պարզապես այն ճիշտ կկիրառենք:



Օրինակ և այլն

Ճի՞շտ է արդյոք «*օրինակ և այլն*» բառերի համատեղ գործածությունը:

Ասվածը թերևս թվա տարօրինակ, որովհետև դրանք միասին գործածվել են միշտ, և չի առաջացել որևէ հարց:

Ասելիքը հստակեցնելու համար բերեմ օրինակներ.

- «Այդպիսի կայուն խմբեր են ազգերը, որոշ կազմակերպություններ (*օրինակ՝ նախարարությունները, ակադեմիաները և այլն*)»:
- «Շատ դեպքերում կարելի է կիրառել ոչ ջրային լուծիչներ, *օրինակ՝* սպիրտ, եթեր *և այլն*»:

Մեկնաբանենք: Ե՞րբ է գործածվում *օրինակ* բառը:

- Երբ ընդհանուրից, ամբողջից թվարկվում, նշվում են մի քանիսը: Օրինակ՝ քիմիական տասը տարրից նշվում է, դիցուք, երեքի, չորսի կամ հինգի անունը:

Այսինքն՝ այս դեպքերում գործածվող *օրինակ*-ը ենթադրում է, որ բոլորը չենք գրում:

Իսկ ե՞րբ ենք գործածում *և այլն* կապակցությունը:

➤ Երբ դարձյալ թվարկում ենք ոչ թե ամբողջը, այլ մի քանի օրինակ:

Այսինքն՝ սա նույնպես նշանակում է, որ ամբողջից տալիս ենք մի քանիսի անունը:

Դարձյալ բոլորը չէ, որ գրում ենք:

Դառնանք սկզբում տրված հարցին: Անհարկի կրկնություն չէ՞ դրանց միասին գործածությունը: Կարծում ենք՝ այո՛:

Համոզվելու համար նախադասություններից հանենք *օրինակ*-ը կամ *և այլն*-ը ու տեսնենք՝ կորցնո՞ւմ են դրանք իմաստային որևէ բան:

«Փորձարկումն» անենք մեկ այլ նախադասության վրա:

«Խմբում կարող են ընդգրկվել այլ մասնագետներ նույնպես. *օրինակ*՝ փրկարար, ինժեներ, հրշեջ, բուժաշխատող *և այլն*»:

Հանենք *օրինակ*-ը. «Խմբում կարող են ընդգրկվել այլ մասնագետներ նույնպես. փրկարար, ինժեներ, հրշեջ, բուժաշխատող *և այլն*»:

Հանենք *և այլն*-ը. «Խմբում կարող են ընդգրկվել այլ մասնագետներ նույնպես. *օրինակ*՝ փրկարար, ինժեներ, հրշեջ, բուժաշխատող»:

Կրկնենք. երկու դեպքում էլ թե՛ *օրինակ*-ը, թե՛ *և այլն*-ը միայն և միայն նշանակում են, որ խմբում, բացի փրկարարից, ինժեներից, հրշեջից ու բուժաշխատողից, կարող են ընդգրկվել նաև այլ մասնագետներ, որոնց մասին չենք նշում:

Այլ կերպ ասած՝ *օրինակ*-ը պարունակում է *և այլն*-ի իմաստը, և հակառակը՝ *և այլն*-ը պարունակում է *օրինակ*-ի իմաստը:

Սա, իհարկե, առանձնապես «լուրջ» ու «վտանգավոր» սխալ չէ, ու թերևս կլինեն առարկություններ, որովհետև, որքան գիտեմ, այս մասին խոսվում է առաջին անգամ:

Հարցը ավելի շատ տրամաբանական է, քան լեզվական: Տրամաբանության ու լեզվի մասնագետ Վլադիմիր Բաղդասարյանի ստեղծած բառով ասած՝ *լեզվատրամաբանական* է:

Բոլոր դեպքերում, կարծում ենք, ճիշտ կլինի ուշադրություն դարձնել նաև այս հանգամանքին և խուսափել իրար անհարկի կրկնող այս բառերը միասին գործածելուց:

Նկատենք նաև, որ ոչ ոք չի կարծում, թե պարտադիր միասին պիտի «գույգ» կազմեն *օրինակ*-ն ու *և այլն*-ը, և շատ են նաև դեպքերը, երբ գործածվում է սրանցից միայն մեկը: Թեև ոչ հաճախ, սակայն պատահում է նաև, որ *և այլն*-ը գործածվում է ոչ թե մի քանի բան թվարկելուց հետո, այլ ընդամենը մեկ: Օրինակ՝ «Գնել էին գրասենյակային պարագաներ *(պահարաններ և այլն)*»:

Հիշենք. երբ գործածում ենք *և այլն*-ը, պետք է թվարկվի առնվազն երկու-երեք բան: Տվյալ նախադասությունը ճիշտ կլիներ, օրինակ, այսպես. «Գնել էին գրասենյակային պարագաներ *(պահարաններ, սեղաններ, աթոռներ և այլն)*»:

ԵԹԵՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆ

Խորագրի նյութերը՝ Երազիկ Գրիգորյանի



Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 1-ին)

Լեզվական անփութություններ

Ընդհանուր լեզվավիճակի վրա ունեցած մեծ ազդեցությունից է, որ եթերից հնչող հայերենը եղել ու մնում է Լեզվի կոմիտեի ուշադրության կենտրոնում: Եթե այս կամ այն հաղորդման մեջ հնչած լեզվական մեղանչումը ժամանակի ընթացքում կարող է դուրս մղվել եթերից, չկրկնվել ու մոռացվել, ապա կա մի ասպարեզ, որտեղ սխալները վարակի մնայուն աղբյուր են դառնում: Խոսքը եթերով հեռարձակվող ֆիլմերի լեզվի մասին է:

Լեզվական սխալները քննարկելուց առաջ խոսենք դիտարկված ֆիլմերի թարգմանությունից ստացած ընդհանուր տպավորության մասին: Շրջանցելով ֆիլմերի ընտրության չափանիշները, ինչպես նաև ծանոթ չլինելով բնագրին՝ չենք կարող չնշել, որ ժամանցային, անգամ պարզունակ ֆիլմերը մեծապես տուժում են մեր թարգմանիչների ներկայացրած աղքատիկ, անկյանք ու անարյուն հայերենից: Երբեմն խոսքային պատկերը ջերմ, սրտառույ տեսարանի վրա սառը շունչ է փչում. մի բան, որից կարելի է խուսափել չափազանց հեշտությամբ:

- «Մենք կթողնենք, որ սերն ընթանա իր հունով», - մի հուզական պահի, բազում խնդիրներ հաղթահարելուց հետո ասում է «Չորս Սուրբ ծնունդ» ֆիլմի հերոսն իր սիրելիին: «Միանշանակ», - պատասխանում է աղջիկն ու անհարկի չարաշահված այս բառով փչացնում տպավորությունը:

Ֆիլմի հերոսը կարող էր ասել. «Արի թողնենք, որ մեր սերն իր հունով ընթանա», աղջիկն էլ կարող էր պատասխանել. «Արի թողնենք» կամ «Համաձայն եմ»: Գուցե այս տեքստում տարբերությունը մեծ չի թվում, բայց ֆիլմը դիտելիս տպավորությունը միանգամայն այլ կլինի:

- Նույն ֆիլմում երեխաները կանգնած են տոնածառի մոտ ու ինչ-որ պատճառով տխուր են: Նրանց տատիկը հարցնում է. «Չեմ հասկանում՝ *ո՞րն է խնդիրը, ո՞րն է խնդիրը*»:

Կգտնե՞ք մի տատիկ, որն իր թոռների հետ այս կերպ կխոսի, այն էլ սուրբծննդյան երեկոյին: Չե՞ր կարելի մարդկային լեզվով թարգմանել այս պարզագույն միտքը, այո՛, միտքը, ոչ թե նախադասությունը, քանի որ լավ թարգմանությունը միտքն է փոխանցում, այլ ոչ բառերի շարանը: Տեսարանը կջերմանար, եթե տատիկն ասեր. **«Չեմ հասկանում՝ ինչո՞ւ եք քիթներդ կախել»** կամ **«Չեմ հասկանում՝ ի՞նչ է պատահել»**: Հազար ու մի տարբերակ կա այս կոճղային խոսքից խուսափելու համար, եթե անգամ այն բառացի ձիշտ թարգմանություն է:

Այս ֆիլմին առաջիկայում կանդրադառնանք, իսկ այժմ՝ նման լեզվական «տեսարաններ» «Բառեր» ֆիլմից:

- «Ես ուզում եմ ձեզ *իրական իրավիճակը* ներկայացնել»: Ֆիլմում լեզվական սխալներ շատ կան: Բայց արդյո՞ք սա դրանցից մեկն է: Ամեննին ոչ: Այստեղ լեզվական սխալ չկա: Այստեղ կա լեզվական անճաշակություն:

«Ես ուզում եմ ձեզ իրական վիճակը ներկայացնել», «Ես ուզում եմ ձեզ **իրականությունը** ներկայացնել», «Ես ուզում եմ ձեզ ներկայացնել **իրավիճակը, ինչպես որ կա**»: Այս շարքը կարելի է շարունակել: Ուրեմն ինչո՞ւ է ֆիլմում ընտրվել այս «իրական իրավիճակը» արտահայտությունը: Չե՞ որ այս խոսքը հնչում է գեղարվեստական ֆիլմում:

- **«Մի հիմար երիտասարդ, ում դեմքից հիմարությունը թափվում էր»:**

Իմպրեմ՝ ևս մի անհաջող արտահայտություն: Հնարավոր չե՞ր խուսափել մի նախադասության մեջ երկու անգամ **հիմար** բառը գործածելուց: Թարգմանիչը կամ խմբագիրը կարող էին բացել բառարանն ու կարդալ, թե այս բառը քանի հոմանիշ ունի հայերենում: Դրանք բոլորն էլ կարող էին փրկել տեքստը:

- Բայց ինչի՞ մասին է խոսքը, եթե բոլորներն անց ֆիլմում հնչում է. «-Ի՞նչ կասես սրա մասին: *Այն* կարծես գեղեցիկ է: Հավանո՞ւմ ես *այն*: -Իմ կարծիքով *այն* շատ հին է: -

Իմ կարծիքով *այն* շատ լավն է: Եթե մենք *այն* մաքրենք, դու կարող ես օգտագործել *այն*: Ես կգնեմ *այն* քեզ համար»: Մոտ կես բոլորում յոթ անգամ հնչում է *այն* բառը ու տեսարանին տաղտկություն հաղորդում:



Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 2-րդ)

Լեզվական անհեթեթություններ

Յուրաքանչյուր ֆիլմի համար մեկ անգամ կատարվող թարգմանական աշխատանքը, որին հետագայում տարիներ շարունակ եթեր է տրամադրվում, պարտադիր ու տրամաբանական է, որ լինի անթերի, առնվազն չներկայացնի սխալ, անճաշակ կամ անհեթեթ խոսք: Մենք նաև իրավունք չունենք զանց առնելու այն բարձր չափանիշը, որն այս ասպարեզում ժամանակին ստեղծել է «Հայֆիլմ» կինոստուդիան, որի թարգմանիչների մոքով չէր անցնի, որ երբևէ էլեկտրոնային բառարաններ ու էլեկտրոնային «թարգմանիչներ» կլինեն, որոնք կհեշտացնեն մի լեզվից մյուսի փոխադրման գործը. այնքա՛ն կհեշտացնեն, որ ֆիլմերի թարգմանությամբ զբաղվելը ձախ ձեռքի գործ կթվա, ու չի ուշանա հետևանքը, որի ապացույց-օրինակները կգտնեք ստորև:

- «Նա միակ դիակն էր, որ նա իր ողջ բանակում անցկացնելու ընթացքում տեսել էր» («Բառեր»):

Դիակի մասին ճիշտ կլիներ ասել՝ **դա**: Այդպես նաև գեղեցիկ կլիներ, քանի որ չէր կրկնվի **նա** դերանունը: Գեղեցիկ կարելի էր շարադրել նաև շարունակությունը: Օրինակ, ըստ դրվագի՝ «**Դա միակ դիակն էր, որ նա տեսավ իր բանակային տարիներին**»:

- Շարունակենք «լսել» այս ֆիլմը: «Նրա և նրա կնոջ համար իրար նայելը հավասարազոր էր ճշմարտությանը նայելուն»:

Հայերենում դերանունները չունեն սեռի քերականական կարգ: Դա չի նշանակում, թե պետք է թարգմանել սխալ՝ «նրա և նրա կնոջ» և անգամ ճիշտ՝ «նրա և իր կնոջ» ձևով:

Ֆիլմում այս կերպարի անունը Ռոբի է: Ուրեմն կարելի էր առաջին դերանվան փոխարեն գործածել անունը:

Ահա հաջորդ լեզվական անհեթեթությունը նույն ֆիլմում.

➤ «Փաստորեն այնքան էլ ամեն ինչ չգիտեք»:

Եթե սխալն ուղղելու հնարավորություն լիներ, կառաջարկեինք՝ «Փաստորեն ամեն ինչ չէ, որ գիտեք», «Պարզվում է՝ այնքան էլ տեղեկացված չեք», «Ուրեմն ճիշտ չեք ասում, թե ամեն ինչ գիտեք» և այլն:

➤ «Դա մի հնարք է, որ կօգնի այդ սառնությունը անցնել»:

Պետք էր ոչ թե անցնել, այլ անցկացնել: Եվ ոչ թե կոկորդի սառնությունը, այլ սառածությունը: Ահա՛, հենց այսպիսին է լինում վատ թարգմանությունը:

➤ Նաև այսպիսին՝ «Դու ռինգում արյունահոսել ես սեփական արյամբ» (գեդ. ֆիլմ «Զախլիկը»): «Դու ռինգում արյուն ես թափել», «Ռինգում քո արյունն է թափվել», «Ռինգում քո վնասվածքներն արյունահոսել են»... Խնդրեմ՝ մեկ վատ թարգմանության դիմաց բազում լավ տարբերակներից երեքը միայն:

➤ «Հայրի՛կ, խոսքը ռդջ-առոդջ երեխաների մասին է (գեդ. ֆիլմ «Վարձով երեխա»):

Ֆիլմում խոսքը **հրական** երեխաների մասին է, որոնց առողջության մասին խոսք անգամ չկա:

➤ Կամ՝ «Որդեգրումը շատ փափուկ հարց է»:

Հայերենում որդեգրումը փափուկ չէ: Ճիշտ է՝ «Որդեգրումը շատ **նուրբ** հարց է»: Այ սա հայերեն է:

➤ Նույն ֆիլմում՝ «Լավ հիշիր, լա՛վ»:

Զե՛ր կարելի թարգմանել «Լավ հիշիր, **հա՛**»: Միանգամայն այլ խոսքային պատկեր է:

➤ «Մեծամասնության պես անում եմ **ձեռքիս եկածը**» (գեդ. ֆիլմ «Աշունը Նյու Յորքում»):

Նախ ո՛չ թե **ձեռքիս եկածը**, այլ **ձեռքիցս եկածը**: Բացի այդ՝ մի՞թե այդպես ենք խոսում մենք առօրյայում: Այսպիսի՞ն է սովորական, բնական հայերենը: Այ այսպիսին է այն՝

«Բոլորի պես անում եմ ձեռքիցս եկածը»: «Ես էլ շատերի պես անում եմ, ինչ ձեռքիցս գալիս է»:

- Սա էլ է արհեստական խոսք՝ «Նա պիտի լավ սովորի *ականհայտաբար*» (գեղ. ֆիլմ «Մեծ Մայք»):

«Նա *անպայման* պիտի լավ սովորի»: Ամենից շատ երևի սա կսազեր կադրին:

- «Քո խելքն ու կամքն *ինձ պես* ուժեղ են»:

Ոչ թե *ինձ պես*, այլ *իմի պես* (գեղ. ֆիլմ «Զորս Սուրբ ծնունդ»):

- «Ինձ քեզ մոտ բերելու սա շատ *խղճուկ պատրվակ է*» (գեղ. ֆիլմ «Դենի Քոլիս»):

Ճիշտ է՝ «Սա *ինձ քեզ մոտ բերելու շատ խղճուկ պատրվակ է*»:

- «Վատ եղանակ են *խոստացել*» (գեղ. ֆիլմ «Գիշերը Ռոդանտիում»):

Ոչ թե *խոստացել*, այլ *կանխատեսել*:

- «Ի՞նչ *հաշիվ է ֆուտբոլային խաղը*»:

Ճիշտ է՝ «*Ֆուտբոլային խաղի հաշիվն ի՞նչ է*» (գեղ. ֆիլմ «Մեծ Մայք»):

Պետք չէր հանճար լինել այս սխալները կանխելու համար: Պետք էր պարզապես բարեխիղճ լինել ու չվնասել ո՛չ մեր լեզուն, ո՛չ այն աշխատանքը, որ կատարել են ֆիլմարտադրողները:



Գործնական աջակցություն ֆիլմերի թարգմանիչներին (մաս 3-րդ)

Օտար լեզվական կադապարների պատճենումներ

Որևէ տեքստի ճիշտ թարգմանությունն ապահովելը պարզունակ պահանջ է: Ճիշտ թարգմանությունը դեռևս լավ թարգմանությունը չէ: Լավ թարգմանությունը լեզվական,

լեզվատրամաբանական չափանիշները բավարարելուց բացի, մի տեսակ պահպանում է բնագրի շունչը և նուրբ զգացողություն ունեցող «սպառողին» աննկատ հուշում է, թե ի՞նչ լեզվից է այն կատարված:

Մեր եթերով հեռարձակվող հայերեն թարգմանությամբ ֆիլմերը դիտելիս, սակայն, առանց լեզվական նուրբ զգացողության էլ հասկանում ես, որ ֆիլմը, լինի ֆրանսիական, իտալական թե ամերիկյան, թարգմանված է միջնորդ լեզվից՝ ռուսերենից, և այն էլ բավական

կոպտորեն:

Դիմե՛նք ապացույցներին:

- «Ինչպես տատիկս էր ասում՝ տալիս են՝ վերցրո՛ւ, խփում են՝ փախի՛ր» («Գիշերը Ռոդանտիում»):

Պարզ է, որ սա ռուսերեն дают-бери, берут-бери ասացվածքի բառացի թարգմանությունն է: Իսկ ասացվածքները, ինչպես գիտենք, բառացի չեն թարգմանվում, այլ փոխարինվում են տվյալ լեզվում եղած համարժեք իմաստ արտահայտող ասացվածքով, ինչպես որ արվել է հոլիվուդյան ֆիլմի բնագրից՝ անգլերենից ռուսերեն թարգմանության մեջ: Իսկ եթե, ասենք, հայերենում նման ասացվածք չկա, քալ լիցի, ազատ, գեղարվեստական թարգմանություն է, ընկալի՛ր դրվագը ու գտի՛ր, շարադրի՛ր կերպարին ու իրավիճակին հարմար, հնչած միտքը լավագույնս փոխանցող արտահայտություն: Այստեղ, օրինակ, կարելի էր ասել. «Ինչպես տատիկս էր ասում՝ **եթե հոժարակամ տալիս են, տեղնուտեղը վերցրո՛ւ**»:

- «Ես պետք է աշխատեմ: Այստեղ ամեն ինչ ինքնիրեն չի լինում» («Բառեր»):

Սա հայերեն^օն է: Իհարկե ո՛չ: Սա ռուսերեն է: Ռուսերենում է, որ *ամեն ինչ ինքնիրեն չի լինում*, իսկ հայերենում **ոչի՛նչ ինքնիրեն չի լինում**: Այդպիսին է մեր լեզվամտածողությունը: Մինչդեռ այս ֆիլմը պատմում է այն մասին, թե ի՞նչ կարևոր են բառերը: Ասենք ավելին. դրանք սխալ ընտրելու դեպքում կարող է խաթարվել մարդու լեզվամտածողությունը:

- «Կուզե՞ք նախաճաշել: /-Մի քիչ ավելի ուշ» («Գիշերը Ռոդանտիում»):

Կարելի է մտածել, թե նախաճաշելու առաջարկն ուշ է արված, պատասխանողն էլ նախընտրում է դրանից էլ ուշ նախաճաշել: Մինչդեռ ֆիլմում նախաճաշելու համար շատ շուտ է, և այդ է պատճառը, որ առաջարկը ստացողը նախընտրում է մի քիչ հետո նախաճաշել: Հենց այդպես էլ պետք էր թարգմանել՝ *մի քիչ հետո*: Ռուսերենի *позже* բառի պատճենումն է այս *ավելի ուշ*-ը, որ շատ ֆիլմերում է հանդիպում: «Թող մնա *մի քիչ ուշ*, պապիկը զբաղված է» («Չորս Սուրբ Ծնունդ»): Մենք՝ հայերս, ասում ենք՝ թող *մնա մի քիչ հետո*: «Մեր տվյալները նրա պայուսակի մեջ են, եթե ցանկանաք *ավելի ուշ* տեսնել դրանք» («Դենի Քոլինզ»): Այստեղ էլ տվյալները տեսնելու համար ամեննին ուշ չէ, և առաջարկվում է տեսնել ոչ թե ավելի ուշ, այլ պարզապես *հետո*:

Ֆիլմերում սխալներ կան, որոնք ժամանակին արված վատ թարգմանություններից արդեն տարածվել են մեր խոսքում ու անընդհատ վերադառնում են իրենց «ծնողի մոտ»: «*Տես, ինչ ուրախ է քեզ տեսնել*» «*Ուրախ եմ ծանոթանալ*» («Հաչիկո»), «*Ուրախ եմ տեսնել*» («Լիալուսնի թագավորությունը») «*Ներս եկեք, նա ուրախ է Ձեզ տեսնել*» «*Ուրախ եմ տեսնել քեզ, ընկեր*», («Դենի Քոլինզ»), «*Շատ ուրախ եմ տեսնել*», «*Ուրախ ենք ծանոթանալ*» («Մեծ Մայք»), «*Ուրախ էի ծանոթանալ, Բիլի*» («Չախլիկը»), «*Անչափ ուրախ եմ քեզ տեսնել*» («Գիշերը Ռոդանտիում») և այլն, և այլն... Լավ թարգմանության մեջ այս արտահայտությունները տեղ չէին գտնի: *Տես, ոնց է ուրախանում, երբ քեզ տեսնում է... Ինչ լավ է, որ ծանոթացանք... Ուրախ եմ, որ տեսա քեզ...* Պետք չէ պատճենիչով թարգմանել: Պետք է լավ հեծյալի պես երկու լեզվի սանձերն այնպես պահել, որ նրանք նույն ուղղությամբ սլանան:



Պատմական սխալներ (մաս 1-ին)

Օտարամուտ լեզվական կառույցներ

Հայկական եթերի ցուցափեղկում հիմնականում հոլիվուդյան ֆիլմեր են, որոնք, սխալներից դատելով, թարգմանված են միջնորդ լեզվից՝ ռուսերենից: Թեև դա դժվար է ասել. թարգմանիչների մեղքով ռուսերենից անցած լեզվական սխալներն արդեն այնքան են տարածվել, որ ինքնակոչի վստահությամբ հայտնվում են անգամ ճապոներենից

թարգմանված հայերենում: Սկսենք հենց Ճապոնիայի մասին պատմող «Վերջին սամուրայը» ֆիլմից:

- «Տղա՛ս, տեսե՛լ էս՝ ի՛նչ կարող է անել հրացանը *մարդու հետ*»,
- «*Զորքերի հետ* ի՞նչ եղավ: Բոլորը զոհվեցի՞ն»,
- «Ես տեսել եմ՝ ինչ եք անում ձեր *ախոյանների հետ*»,
- «Կապիտա՛ն, մելոդրամատիկ դերերը *մոտո լավ են ստացվում*»,
- «Ճապոնիայի կայսերական զորքը *պահանջում է, որպեսզի* հանձնվեք»:

Առաջին աշտարակաշինությունից սկսած՝ լեզուներն օգտվում են իրարից, փոխհարստացնում միմյանց: Բայց դա անում են միայն կարիքի՝ դեպքում, երբ լեզվում չկա այս կամ այն բառը, հարմար կադապարը: Հարգելի՛ թարգմանիչներ, բառարա՛ն բացեք ու նայե՛ք, թե ի՛նչ են նշանակում *հետ* և *մոտ* բառերը: Ազատե՛ք ձեր թարգմանած տեքստը այդ բառերից ու կտեսնեք, որ այդ նախադասությունները դրանց կարիքը չունեն: «...Ի՞նչ կարող է անել հրացանը *մարդուն*», «*Զորքերն* ի՞նչ եղան», «...ինչ եք անում ձեր *ախոյաններին*»: Կամ՝ «Կապիտա՛ն, մելոդրամատիկ դերերը *լավ էս խաղում*»:

- Կապերի անհարկի ներկայությունը կա մեր ուսումնասիրած գրեթե բոլոր ֆիլմերում:

«Տե՛ս, Հեկտորը ի՛նչ արեց *մեզ հետ*»: («Տրոյա»): Այս ավելորդ *հետ*-ը ռուսերենի *с* կապի (что он сделал с тобой) պատճենումն է: *Մոտ* կապի խնդիրն էլ նույնն է (у тебя получается): Ռուսերենի կադապարները թարգմանվելու փոխարեն տեղափոխվել են մեր լեզու:

- Նույնն է և *որպեսզի* շաղկապը *որ*-ի փոխարեն գործածելու խնդիրը:

Վերևում նշված «*Պահանջում է, որպեսզի* հանձնվեք»-ը, ինչպես նաև «Օսմանյան կայսրությունը *կամենում է, որպեսզի* իր սահմանները ձգվեն մինչև Միջերկրական օվկիանոս», «*Հրաման է եկել* Ստամբուլից, *որպեսզի* ոչ մեկի չխնայենք» («Խոստում»), «Հորաքույրս *խորհուրդ է տվել, որպեսզի* չշտապեմ» («Երիտասարդ Վիկտորիան») նախադասություններում *որպեսզի*-ն հայերեն չէ, ռուսերեն *чтобы*-ն է (նաև՝ ոչ թե *ոչ մեկի*, այլ *ոչ ոքի*): Այս բոլոր դեպքերում ճիշտ է գործածել *որ* դերանունը: Հիշենք, որ մեր *որպեսզի*-ն պատասխանում է *ինչո՞ւ, ի՞նչ նպատակով, ինչի՞ համար*, այլ ոչ *ի՞նչ* հարցին: «Ագորա» ֆիլմի հերոսը «Ի՞նչ ես անում» հարցին պատասխանում է. «Իսկ դու *ինչպե՞ս ես կարծում*. Ես աղոթում էի»: А как ты думаешь? Այս նախադասության *как* բառը, ճիշտ է,

թարգմանվում է «ինչպես», բայց ո՛չ այս դեպքում: Այստեղ ճիշտ է «ի՞նչ ես կարծում»: «Ուրախ եմ քեզ տեսնել այստեղ», «Ուրախ եմ ծանոթանալ» («Խոստում»), «Ուրախ եմ քեզ տեսնել» («Եզիպտոսի աստվածները»), «Ուրախ եմ ծանոթանալ» («Երիտասարդ Վիկտորիան»): Շարքը կարելի է շարունակել: Սրանք հայերեն նախադասություններ չեն: Այս սխալն այնքան է տարածվել, որ մենք նույնպես ստիպված ենք լինում հաճախ կրկնել ճիշտ տարբերակները՝ «Ուրախ եմ, որ քեզ տեսա», «Ուրախ եմ, որ ծանոթացանք», «Ուրախ եմ մեր ծանոթության համար» և այլն: Ա՛յ հիմա թարգմանվեցին այս նախադասությունները:

Եզիպտական աստվածների ժամանակներում հայերենը հաստատ ոռուսերենի ազդեցությունը չէր կրում, և ոչ ոք «*խնդիրն այն չէ*»-ի փոխարեն ոռուսերենի նմանողությամբ չէր ասում «*խնդիրը դրանում չէ*»՝ проблема не в том («Եզիպտոսի աստվածները»): Վիկտորիա թագուհին էլ, եթե հայերեն խոսեր, երբեք չէր ասի «*Խնդիրը նրանում է*, որ պալատի տաքացման հարցով լորդ Սթյուարդն է զբաղվում» կամ «*Ամբողջ խնդիրը նրանում է*, որ լորդ Մելբուրնը կրկին վարչապետ է» («Երիտասարդ Վիկտորիան»): Այլ կերպ կասեր:

«Զորքի կեսին ուղարկեք, մնացածին *ավելի ուշ* կուղարկենք», - ասում է հույն նահանգապետը 4-րդ դարում («Ագորա»): Լորդ Մելբուրնն էլ 19-րդ դարում ասում է. «Ես *ավելի ուշ* կներկայացնեմ պալատական կանանց ցանկը» («Երիտասարդ Վիկտորիան»): Այս *ավելի ուշ*-ը ոռուսերեն postpone-ն է և վերջին շրջանում (մեր թարգմանիչները կասեին՝ *ավելի ուշ*) է սողոսկել մեր խոսք: Այս նախադասություններում այն պետք է թարգմանվեր **հետո**:

«Տրոյա» ֆիլմում Հեկտորը կնոջը ցույց է տալիս, թե վտանգի պահին ինչպես պիտի անցնի գաղտնի ճանապարհով: Վերջում Հեկտորը կնոջը հարցնում է. «Ճանապարհը *հիշեցի՞ր*»: Բայց չէ՞ որ կինն այդ ճանապարհին առաջին անգամ էր տեսնում: Թարգմանիչն այստեղ բայի ժամանակը չէ, որ շփոթել է (ճանապարհը *կհիշե՞ս*), այլ «թարգմանել է» ոռուսերեն запомнить բառը, որը ոչ միայն հիշել, այլև մտապահել է նշանակում, և հենց այս երկրորդ տարբերակն էր պետք գործածել ֆիլմում:



Պատմական սխալներ (մաս 2-րդ)

Լեզվատրամաբանական սխալներ

Ներկայացնում ենք պատմական ֆիլմերի «չներկրված» լեզվական սխալներ: Դրանց մեջ շատ են լեզվատրամաբանականները: Սկսե՛նք դրանցից:

Անգլիայի Վիկտորիա թագուհու մասին պատմող «Երիտասարդ Վիկտորիան» ֆիլմում դավադիրները, օգտվելով Վիկտորիայի հիվանդ վիճակից, մի գրություն են տալիս ստորագրելու: Այս մասին ֆիլմում լսում ենք. «*Լինելով ծանր հիվանդ՝ նա չի ստորագրել այդ թուղթը*»: Այսպես ստացվում է՝ չի ստորագրել, քանի որ ծանր հիվանդ էր: Մինչդեռ ֆիլմում հակառակն է: Պետք էր ասել. «*Նա չի ստորագրել այդ թուղթը, թեև ծանր հիվանդ էր*»:

Վաղ քրիստոնեական Հռոմի մասին պատմող «Ագորա» ֆիլմում կադրից դուրս լսում ենք հեղինակի խոսքը. «Մեր թվարկության 4-րդ դարի վերջում հեթանոսական հավատքին դիմակայում էր քրիստոնեությունը, որը *մինչ այժմ* գտնվում էր արգելքի տակ»: Պարզ է՝ ոչ թե *մինչ այժմ*, այլ *մինչ այդ*:

Նույն ֆիլմում փիլիսոփա Հեպատիան իր աշակերտներին ասում է. «Ձեր կարծիքով՝ ի՞նչ խորհրդավոր ուժ *կարող է թաքնվել* մեր երկրի ներսում և ամեն ինչ պահել մակերևույթի վրա»: Այստեղ նուրբ սխալ կա: Ոչ թե *թաքնվել*, այլ *թաքնված լինել*: Չէ՞ որ խոսքը տիեզերքի հավերժական երևույթների մասին է:

Հայոց ցեղասպանության մասին ամերիկյան «Խոստում» ֆիլմի գլխավոր հերոսը պատմում է. «*200 տարուց ավել Պողոսյաններն էին պատրաստում դեղորայքը՝ կիրառելով մեր նախնիների դեղատոմսերը*»: Ստացվում է, որ Պողոսյաններն ուրիշ են, «մեր նախնիները»՝ ուրիշ: Իրականում այդպես չէ: Պետք էր թարգմանել. «*200 տարուց ավել մենք՝ Պողոսյաններս էինք պատրաստում դեղորայքը...*»:

Շարունակենք հետևել մեր թարգմանիչների աշխատանքին:

«Եթե մեկը Հորուսի աչքերը Սեթից հետ վերցնի, Հորուսը *կրկին կվերագտնի* իր ուժը» («Եգիպտոսի աստվածները»): «Դեսպան Մորգենթաու, կարո՞ղ եմ *նորից վերադառնալ*

Ձեզ մոտ» («Խոստում»): *Վերագտնել* նշանակում է՝ *կրկին գտնել*: *Վերադառնալ* նշանակում է՝ *նորից դառնալ (գալ)*: Ուրեմն՝ *Հորուսը կվերագտնի* (կամ՝ *Հորուսը կրկին կգտնի*), և՝ *կարո՞ղ եմ վերադառնալ* (կամ՝ *կարո՞ղ եմ նորից գալ*): «Սա ինձնից *անհամեմատ ավելի* սիրուն է» («Տրոյա»): *Անհամեմատ*-ն էլ, *ավելի*-ն էլ ցույց են տալիս համեմատություն: Այս բառերից մեկն ավելորդ է:

«Եթե ասեմ ոչ, կստացվի, որ *ստել եմ իմ տիրոջը*: *Ստել*-ը չեզոք սեռի բայ է, *խաբել*-ը՝ ներգործական: Ստում են առհասարակ, անհասցե: Իսկ որևէ մեկին, ասենք՝ տիրոջը, ոչ թե ստում, այլ *խաբում են*:

«Վերջին սամուրայը» ֆիլմում լսում ենք. «Ոչ ոքին հայտնի չէ նրա ճակատագիրը»: *Ոչ ոքի*-ն չի կարող որոշիչ հոդ ունենալ: Ճիշտ է՝ *ոչ ոքի* հայտնի չէ: «Զորքի *կեսը ճանապարհին են*» («Տրոյա»): Ենթական եզակի թվով է, ուրեմն ստորոգյալն էլ պետք է լինի եզակի՝ «Զորքի *կեսը ճանապարհին է*»: «Վանականների *կարգը, որոնք հայտնի են* որպես պարաբալաններ...» («Ագորա»): *Հայտնի են*-ը թվով պետք է համաձայնեցնել ոչ թե *պարաբալաններ*-ի, այլ *կարգ*-ի հետ: Ճիշտ է՝ *հայտնի է*: նախընտրելի է այս դեպքում գործածել ոչ թե *որք* ձևը, այլ *որ*: Ուրեմն՝ «Վանականների *կարգը, որ հայտնի է* որպես պարաբալաններ...»:

«Իմ եղբայրը թշնամիներ ունի: Նրանց *մեծ մասը սենատում են*» («Գլադիատոր»): Որքան էլ թշնամիները շատ լինեն, *մասը* եզակի թվով ենթական պահանջում է, որ ստորոգյալն էլ եզակի լինի՝ «Նրանց *մեծ մասը սենատում է*»:

«Երիտասարդ Վիկտորիան» ֆիլմում անընդհատ լսում ենք՝ *նրա նորին մեծություն արքայադուստր Վիկտորիա, նրա նորին մեծություն դքսուհի, Ձերդ նորին գերազանցություն...* Ահավոր է: Կարելի էր մի քիչ ջանք թափել ու պարզել, թե հայերենում ինչպես են հնչում այս տիտղոսները. *նորին մեծություն, ձերդ գերազանցություն*:

Իսկ հիմա տեսեք, թե մեր թարգմանիչներն ինչպես են «խոսեցնում» հայ հոգևորականին «Խոստում» ֆիլմում: Իր բնակավայրից տեղահան արված հայ կինը քահանային ասում է. «Տեր հայր, ասում են՝ թուրքերը բոլորիս կսպանեն»: Ի մխիթարություն՝ հոգևորականը տերունական ադոթքն է ասում ու կրկնել տալիս՝ արարչին *հայր մեր*-ի փոխարեն դիմելով այնպես, ինչպես կինը իրեն դիմեց՝ «Տեր հայր, որ բարի ու ողորմած ես...»:

Ի՛սկը պատմական սխալներ: Սրանցից մարդու գլուխը ճաքում է: «Գլադիատոր» ֆիլմի հերոսը՝ Կոմոդոս կայսրը, իր քույր Լուցիլլային սխալ ու վատ հայերենով կասեր. «Գլուխս *բաժան-բաժան* է լինում»:



Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 1-ին)

Էկրանավորված վատ հայերեն

Ֆիլմարտադրության ժամանակակից հնարավորություններն ո՛ր էին, երբ ստեղծվում էր հին ու բարի հայկական կինոն՝ ամեն անգամ առաջին անգամվա պես հուզող ու ծիծաղեցնող, դիտելուց հետո ներսումդ մնացող, գուցե այնտեղից երբեք էլ դուրս չեկող, կերտող ու մարդկային: Ինչի մասին էլ լինել սցենարը, ֆիլմը միաժամանակ խոսում էր իր ստեղծողների, նրանց ժամանակի մասին: Եվ ինչպիսի՜ հայերենով էր խոսում հայ կինոն. ո՛չ հատուկ կոկած, ո՛չ էլ փողոցային, այլ բնական, սիրելի հայերենով: Ամենագրեհիկ կերպարն անգամ անթերի կերպավորվում էր թույլատրելի խոսքով: Այդ ֆիլմերում գյուղացին գրական չէր խոսում, փողոցային տղան չէր դիմում գիտական ոճին: Նրանց խոսքը պարզապես բնական էր: Հայկական կինոն հարգում էր սպառողին: Ֆիլմարտադրության ժամանակակից հնարավորություններով ստեղծված մեր այսօրվա ֆիլմերն էլ գուցե շատ արժանիքներ ունեն, բայց մեր ուշադրության կենտրոնում դրանց հայերենն է:

- «Այս դեղը տրվելու է կենդանիներին *ազատության բաց թողնվելուց առաջ*» («Հյուսիս-հարավ»):

Նախադասության երկրորդ հատվածը սխալ է ձևակերպված: Ճիշտ է՝ ...*ազատ արձակելուց առաջ* կամ ...*բաց թողնելուց առաջ*:

- «Առաջարկդ ինչո՞ւմն է կայանում» («Հյուսիս-հարավ»):

Նախ՝ ոչ թե *ինչումն*, այլ *ինչում*: Բացի այդ՝ ճիշտ են *ի՞նչ առաջարկ ունես* կամ *ո՞րն է քո առաջարկը* ձևակերպումները:

- «Մեր փորձագետների այցելությունը ձեր *ապրուստի վայր*...» («Սուպեր մամա-1»):

Ապրուստը վայր չի ունենում: Այստեղ խոսքը *ապրելու վայրի* մասին է, և հենց այդպես էլ պետք էր ասել:

- «Ծրագրին մասնակցելու պայմաններից մեկը *դա* աշխատանքի առկայությունն է» («Սուպեր մամա-1»):

Ենթական *դա* դերանվամբ կրկնելը հատուկ է ռուսերենին, որտեղից էլ այն անցել է մեր լեզվին: Հայերենում այս ձևակերպումը սխալ է. *դա* դերանունն այստեղ ավելորդ է:

- «Այդ ցուցանակը կարող էք *չվերցնել* օդանավակայան» («Ուրիշի փոխարեն»):

Դարձյալ ռուսերենից եկած սխալ է՝ (не) взять в аэропорт: Ճիշտ է՝ «...կարող էք *չտանել* օդանավակայան»:

- «*Խնդիրը նրանում է*, որ իմ ընկերն ամաչկոտ է» («Ուրիշի փոխարեն»):

Ռուսերենում է խնդիրը լինում նրանում՝ в том, իսկ հայերենում ճիշտ է՝ *խնդիրն այն է*: Այստեղ ճիշտ կլիներ՝ «*Քանն այն է*, որ ընկերս ամաչկոտ է»:

- «Ես ուզում եմ, *որպեսզի* դուք ինձ ծանոթացնեք Արսենի հետ, ասեմ ավելին՝ այնպես անեք, *որպեսզի* մենք ամուսնանանք» («Ուրիշի փոխարեն»):

Որպեսզի շաղկապը *որ*-ի փոխարեն գործածելը տարածված սխալ է: Դա ճիշտ է ռուսերենում (мама хочет, чтобы..., я мечтаю, чтобы...), իսկ հայերենում սխալ է: Հայերենում ճիշտ է՝ «Ես ուզում եմ, *որ*...»:

- «Մենք կարող ենք խոսել, ինչպես ասում են, կինը կնոջ հետ» («Ուրիշի փոխարեն»):

Եթե միջանկյալ *ինչպես ասում են*-ը հանենք, կմնա անհեթեթ *Մենք կարող ենք խոսել կինը կնոջ հետ*-ը: Քանի որ այստեղ այս «ինչպես ասում են»-ի կարիքը չկա, կարելի էր խոսքը ձևակերպել ավելի հստակ ու ամենակարևորը՝ գրագետ՝ «Մենք կարող ենք խոսել, *ինչպես կինը կնոջ հետ*»:

- «*Շտապելու տեղ չկա*, Հրա՛չ ջան» («Քայլ ձիով»):

Մեկ սխալ ձևակերպման դիմաց այստեղ կարելի է առաջարկել մի քանի ճիշտը՝ *շտապելու պատճառ չկա, գնալու տեղ չկա, պետք չէ շտապել* և այլն:

- «Էդ *մտահաղացումը* իմն ա» («Ալաբալանիցա»):

Այս սխալն այնքան է տարածվել, որ անգամ գեղարվեստական ֆիլմում է տեղ գտել: Այստեղ *միտք* և *հղանալ* բառերը միացած են *ա* հոդակապով: Հայերենում *հաղանալ* բառ չկա, և ճիշտ է՝ *մտահղացում*:

➤ «Նայեք, *աստղաթափ գիշեր է*» («Իմ փոքրիկ փեսացուն»):

Ճիշտ է՝ *աստղաթափի գիշեր է, աստղաթափ է*, կամ՝ *աստղաթափ է լինելու*:



Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 2-րդ)

Խառնալեզվություն

Վերջին տարիների հայկական հումորային ֆիլմերից դուրս գրված լեզվական սխալների մեջ պարզապես աչք են ծակում խառնալեզու և «ներմուծված» տրամաբանությամբ հայերեն նախադասությունները:

➤ «Մերսի, որ եկար: Պակա»:

Թե՛ կյանքում, թե՛ կինոյում երբեմն օտար լեզվին դիմելու անհրաժեշտություն է լինում: Վկա այս ֆիլմի վերնագիրը՝ «Սկոտչ և վիսկի»: Բայց ֆիլմի գլխավոր հերոսուհին, ահա՛, մի խոսքի մեջ միանգամից երեք լեզու է գործածում՝ ֆրանսերեն, հայերեն, ռուսերեն: Փոխանակ ասելու՝ «*Շնորհակալ եմ, որ եկար: Ցտեսություն*» (կամ՝ *մինչ հանդիպում*): Կամ էլ՝ կարճ՝ *հաջող*:

➤ «Էրեխեք, ես վաբշե չեմ էրևում»:

Բանավոր խոսքում *երեխաներ* գրական ձևի փոխարեն *էրեխեք* ձևով դիմելը մտերմիկ մթնոլորտ է ստեղծում: Իսկ հիմա հենց այդ՝ մթնոլորտ ստեղծելու տեսանկյունից նայենք այս *վաբշե*-ին: Վերևում նշված օտար բառերի պես սա էլ գրեթե սովորական դառնալու աստիճան տարածվել է մեր խոսքում: Ի՞նչ դերակատարություն ունեն հաճախ ամենևին ռուսերեն չիմացողների բառապաշարում լավ տեղավորված այս բառերը: Եթե դպրոցը պայքարում է նման խոսվածքի դեմ, ապա պետք չէ, որ պատանեկան ֆիլմի («Իմ փոքրիկ փեսացուն») միջոցով խրախուսվի այն: Մանավանդ՝ առանց ֆիլմի

կինեմատոգրաֆիական արժեքը վտանգի ենթարկելու այստեղ կարելի էր ասել **ընդհանրապես, բոլորովին** բառերը կամ հենց մեր բարբառային **հեչ**-ը:

- «Վանդան *դա* ընդգծում է կնոջ խորհրդավորությունը, իսկ հերքերաները *դրանք* երջանկության սիմվոլն են»:

Միմվոլը հայերեն **խորհրդանիշն** է: Այս նախադասության մեջ ավելորդ են **դա, դրանք** դերանունները: Հայերենում նախադասության անվանական անդամը դերանվամբ չի «վերարտադրվում», ինչպես որ ռուսերենում է («*ванда-это..., гербера-это...*»), որտեղից էլ սխալմամբ փոխանցվել է հայերենին ու մի ուսույունով հասել «Պահանջվում է միլիոնատեր» ֆիլմին: Այս նախադասությունները ճիշտ ու թեթև կլինեին առանց այդ դերանունների:

- «Պլաստիկ վիրաբուժությունը *դա* կորցրած գեղեցկությունը վերադարձնելու համար է»:

Այս *դա*-ն իր ավելորդ ներկայությամբ միայն վերնում չէր ու միայն այս՝ «Ուրիշի փոխարեն» ֆիլմում չէ: Այն առկա է մտավորականների խոսքում, պաշտոնատար անձանց խոսքում, բեմում, հետնաբեմում, մի խոսքով՝ ամենուր: Ամենուր կա, բայց չպիտի լինի:

- «Ուզում է իմանալ՝ ինչ կստացվի նրա մոտ»:

Այս **մոտ** կապը ինչքա՛ն է մեր խոսքը հեռացնում հայերենից: Այս կաղապարը ռուսերեն *у меня, у тебя*-ի պատճենն է: Մենք՝ հայերս, մեր միտքը կառուցում ենք այսպես. «Ուզում է իմանալ՝ **նա ինչ կկարողանա անել**» («Պահանջվում է միլիոնատեր»):

- «Համարյա մոտո ստացվում ա, հա՞, էդ բարմենիցդ լրագրող դարձնել»:

Դարձյալ այս **մոտ** կապը: **Համարյա կարողանում ես**. այսպես թե՛ գեղեցիկ է, թե՛ ճիշտ: Բայց այստեղ միակ մեղավորը «ռուսահայերենը» չէ: **Բարմենիցդ լրագրող դարձնել**. սա էլ ճիշտ չէ: Կա՛մ **բարմենիդ լրագրող դարձնել**, կա՛մ **բարմենիցդ լրագրող սարքել** («Առաջին դեմք»):

- «Բա որ քո հետ մի բան լիներ»:

Այստեղ էլ **հեռ** կապով է մեր լեզուն հեռացել իրենից: Ռուսերեն с тобой-ի պատճենն է սա: Հայերեն այս միտքը ձևակերպվում է այսպես՝ **բա որ քեզ մի բան լիներ** կամ՝ **բա որ քեզ մի բան պատահեր** («Սկոտչ և վիսկի»):

➤ «Ես լրագրող եմ, սովորել եմ ժուռնալիստիկայի ֆակուլտետում»:

Ցանկություն է առաջանում ասելու. «Եվ շատ վատ ես սովորել»:

«Առաջին դեմք» ֆիլմի սիրելի՛ ստեղծողներ, հայերենում տ-ն միշտ հնչում է այնպես, ինչպես գրվում է: Եվ վատ է, որ ձեր այս ժուռնալիստը, ներեցե՛ք, ժուռնալիստը (լրագրող) չգիտի այդ մասին:

Իրականում՝ ո՛չ հայերենն են այսպես սիրում, ո՛չ ռուսերենը: Այս ամենի անունը ո՛չ առաջադիմություն է, ո՛չ լեզվական անմիջականություն: Այս ամենի անունը լեզվական անպատասխանատվություն է:



Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 3-րդ)

Հումորային ֆիլմերի «տխուր» լեզվավիճակը

Ասում են՝ մարդուն ծիծաղեցնելն ավելի դժվար է, քան լացեցնելը: Ժամանակակից հայ կինոն կարծես թե այս դժվարությունից չի խուսափել. հայկական ֆիլմերը հիմնականում հումորային են: Միայն թե լեզվական գեղագիտություն կրող հանդիսատեսը ֆիլմում հնչած մի սխալ արտահայտությունից մինչև մյուսը դժվար թե հասցնի թոթափել վրդովմունքն ու լիարժեք տրվել սցենարական սրամտություններին:

Խոսքային արվեստը ոճի ու ճաշակի իմաստով միշտ էլ ընտրության լայն հնարավորություն ունի, և նյութն ինքն է հաճախ ընտրություն թելադրում: Միայն թե այդ «թելադրությունը» չի կարելի գրել «տառասխալներով», մանավանդ որ ֆիլմի դեպքում դրանք անուղղելի են:

«Կազիրյոկ» նվագախումբն *ի շնորհիվ* Արտավազդի՝ աշխատանք ունի»:

➤ Այս *ի շնորհիվ*-ը բավական տարածված սխալ է:

«Հյուսիս-հարավ» ֆիլմն էլ ի՛ր հերթին է այն տարածել: Եթե մեկը կասկածում էր՝ *շնորհիվ, թե՛ ի շնորհիվ*, ահա ֆիլմը տալիս է պատասխանը, միայն թե՛ սխալ: *Ի* նախդիրը եկել է գրաբարից (ի գիտություն, ի լրումն, ի դեմս նն): Բայց *շնորհ* բառի գրաբարյան *շնորհիվ* հոլովաձևի կողքին *ի* նախդիր երբևէ չի դրվել. ավելորդ է ու սխալ: Պարզապես՝ *շնորհիվ*:

➤ «Սա Նյու-Յորքում *համար առաջին* վիսկին էր»:

Այս *համար առաջին*-ի հաղթական ընթացքը շատ ենք փորձել կասեցնել, բայց այն սողոսկել է անգամ գեղարվեստական ֆիլմ («Պահանջվում է միլիոնատեր»): Ճիշտ է՝ *համար մեկ* կամ *առաջին*, բայց ո՛չ երբեք *համար առաջին*: Նույնն էլ մյուս բոլոր թվականների դեպքում՝ *համար երկրորդ* կամ *երկրորդ*, *համար տասը* կամ *տասներորդ* և այլն: Պարզապես պիտի հիշենք, որ որևէ բանի թիվը ցույց տվող *համար* գոյականի հետ դրվում են միայն քանակական թվականներ:

➤ «Մեծ *ռազմերն* էլ ունենք»:

Այստեղ էլ «Պահանջվում է միլիոնատեր» ֆիլմը մեր *չափ* բառը թողած՝ օտար *ռազմերն* է գործածել:

➤ «Քո *մոտ* անևրիզմ է»: Նախ՝ ոչ թե *քո մոտ*, այլ *քեզ մոտ*:

Բայց սա առհասարակ հայերեն նախադասություն չէ: Ճիշտ է՝ *Դու անևրիզմ ունես*: «Մքոտչ և վիսկի» ֆիլմի ստեղծագործական խումբը, եթե ուշադիր լիներ, կնկատեր նաև, որ սցենարում խոսքը մոռանալու մասին է: Ուրեմն ոչ թե *անևրիզմ* (անոթալայնանք), այլ *ամնեզիա*: Ահա քեզ՝ փոքրիկ, բայց այսքա՛ն սխալական նախադասություն: Ճիշտ է՝ *Դու ամնեզիայով ես տառապում* կամ *Դու ամնեզիա ունես*:

➤ «Մեր ամուսնության օրը *բռնիր* ձեռքս ու *ասիր*, որ երջանիկ ես»:

«Մքոտչ և վիսկի» ֆիլմում հնչում է մե՛կ անգլաֆրանսիական լեզվախառնուրդ, մե՛կ բարբառային խոսվածք: Այս մեջբերումը մի գյուղացու խոսքից չէ, այլ հաջողակ գործարարի, որը, ճիշտ կլիներ՝ ասեր. «Մեր ամուսնության օրը *բռնեցիր* ձեռքս ու *ասացիր*, որ երջանիկ ես»:

➤ «Որոշել եմ քեզ պահեմ էնքան, մինչև ամեն ինչ *կբացատրես*» («Մքոտչ և վիսկի»):

Ճիշտ է՝ «...մինչև ամեն ինչ *բացատրես*»:

➤ *Ա՛խ քեզ* կամ *ստացի՛ր*:

Ինչ-որ մեկին խփելիս, հատկապես դեռահասները, այս արտահայտությունների փոխարեն հաճախ գործածում են *ա՛ն քեզ* արտահայտությունը, ինչն ամեննին հանձնարարելի չէ, մանավանդ մշակույթի «ձեռքով» («Իմ փոքրիկ փեսացուն»):

➤ «Շուստրի՛, մերսի»:

Այս օտար բառերը նույնպես պետք չէ հանձնարարել դեռահասին՝ նրան հասցեագրված ֆիլմի միջոցով: Նայում ես «Իմ փոքրիկ փեսացուն» ֆիլմի այս հատվածը ու մտածում՝ քանի՜ տարբերակ է առաջարկում հայերենը, իսկ մենք ռուս-ֆրանսիական շիլային ենք մեկնել մեր ձեռքը: *Ճարպիկ, հնարամիտ, խորամանկ՝* առաջին բառի փոխարեն, *կեցցես, ապրես, շնորհակալություն՝* երկրորդ բառի փոխարեն:

➤ Մի տարածված սխալ էլ ահա «առաջարկում» է «Խաղ իմ կանոններով»

ֆիլմը: «Առաջին ազգն ենք, *ով* քրիստոնեությունը որպես պետական կրոն *ա* ընդունել»:

Որ-ի փոխարեն այս ով-ը նույնպես վերջին շրջանում զարտուղի ճանապարհով անցել է հայերենի սահմանը: «Առաջին ազգն ենք, որ (որը) քրիստոնեությունը որպես պետական կրոն *ա (է)* ընդունել»:



Ինչ լեզվով է խոսում հայկական կինոն (մաս 4-րդ)

Միալ ձևակերպումներ

Ուշադիր «լսենք» վերջին շրջանում ստեղծված հայկական ֆիլմերը:

➤ «Ամբողջ *խնդիրը նրանում է՝* դու կկարողանա՞ս այդքան սպասել»:

Սա ռուսերենից պատճենված արտահայտություն է, որը մի անգամ էլ «հայերենից» հայերեն էր պետք թարգմանել, որպեսզի հնչեր այսպես. «*Խնդիրն այն է՝* դու կկարողանա՞ս այդքան սպասել»: («Կյանք ու կոիվ-1»)

➤ «Պապս *բոլկոտել էր էդ հարսանիքի դես*»:

Բոյկոտում են ո՛չ թե որևէ բանի դեմ, այլ որևէ բան: Ուրեմն՝ «Պապս *բոյկոտել էր էդ հարսանիքը*»:

➤ «Դուրներդ եկա՞վ արածներդ»:

Բանավոր խոսքում այս սխալը գուցե իր տեղն արել է, բայց ի՛նչ լավ կլիներ, եթե ֆիլմում ասվեր. «*Ձեր արածը ձեզ դուր եկա՞վ*»:

➤ «Բոլորն ասում էին, որ թողնեմ նրան, բայց ես *շարունակում էի մնայի* նրա հետ ու *խնամեի*»:

Սա էլ «Կյանք ու կռիվ» ֆիլմի 2-րդ մասից է: «Շարունակում էի մնայի»․ այսպես չեն խոսում անգամ հայերեն վատ խոսողները: Բայց չէ՞ որ գործ ունենք գեղարվեստական ֆիլմի հետ: «Բոլորն ասում էին, որ թողնեմ նրան, բայց ես *շարունակում էի մնալ* նրա հետ ու *խնամել*»: Այ սա հայերեն է:

➤ «Պահանջում եմ Նարեկ Ֆռանգուլյանին պատժել օրենքի ողջ խստությամբ՝ *հիմնվելով* ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի *համաձայն*»:

Սա հայերեն չէ: *Հիմնվելով*-ն ու *համաձայն*-ը չեն կարող այսպես գոյակցել նույն նախադասության մեջ: «Պահանջում եմ Նարեկ Ֆռանգուլյանին պատժել օրենքի ողջ խստությամբ՝ *հիմնվելով* ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի *վրա*»: Կամ՝ «Պահանջում եմ Նարեկ Ֆռանգուլյանին պատժել օրենքի ողջ խստությամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի *համաձայն*» (կամ՝ *ըստ* ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի):

Անդրադառնանք «Գարեգին Նժդեհ» ֆիլմին:

➤ «Կարսն ու Ալեքսանդրապոլը ամոթալի ձևով հանձնվեցին, սակայն իրավունք չունեին հանձնվելու, որովհետև մեր քաղաքական գործիչները Թիֆլիսում քամակ ու աթոռ են մաշում»:

Անհերթեթ, աղավաղած միտք: Ուզում է ասել. «Կարսն ու Ալեքսանդրապոլը իրավունք չունեին հանձնվելու, սակայն ամոթալի ձևով հանձնվեցին, որովհետև մեր քաղաքական գործիչները Թիֆլիսում քամակ ու աթոռ են մաշում»:

➤ «Նրանցից և *ռչ մեկը* կարմիր բանակայինի համազգեստով *չէին*»:

«Ոչ մեկը...չէի՞ն»: Իհա՛րկե ոչ: Ճիշտ է՝ «Նրանցից և **ոչ մեկը** կարմիր բանակայինի համազգեստով **չէր**»:

- «Ես իմ *սեփական անձնական* կյանքով չեմ կարողանում զբաղվել»: «*Սեփական անձնական...*»:

«Ես անգամ **իմ անձնական** կյանքով չեմ կարողանում զբաղվել»: Ահա թե ի՛նչ էր պետք ասել:

- «Թուրքերի կողմից տարվում է հակահայկական քարոզչություն, որոնք իրենց հերթին օգտագործում են եվրոպացի ծախու գործիչներին»:

Գիտե՞ք՝ ինչ են ուզում ասել: Ուզում են ասել. «Թուրքերը հակահայկական քարոզչություն են անում, որի համար օգտագործում են եվրոպացի ծախու գործիչներին»:

Ցավոք, այս ֆիլմից դուրս գրած սխալները, որոնցից ընդամենը մի քանիսը ներկայացրինք, հիմնականում Նժդեհի խոսքում են: Ֆիլմը դիտելիս, անկախ նրա գեղարվեստական արժեքից, անցյալի ցավն ու այսօրվա վրդովմունքը խառնվում են իրար: Ինչպե՞ս չվրդովվես, երբ Գարեգին Նժդեհը, որը միայն զորավար չէր, այլև անթերի գրագիտության տեր մարդ, առաջին անգամ իր մասին պատմող ֆիլմում քանիցս ասում է *այրուն թափել*, ասում է *Շվեցարյա, բարձրունք*: Ինքն իր անունը սխալ է ասում՝ *Նժդե*: Նժդեհը երբեք չէր ասի «ես *նորից կվերագրավեմ* Լեոնահայաստանը», քանի որ գիտեր՝ կա՛մ *նորից գրավում են*, կա՛մ *վերագրավում*: Թոռանը չէր ասի «*ավելի ուշ* միասին կխաղանք», քանի որ գիտեր՝ հայերեն ասում են «*հետո* միասին կխաղանք»: Եվ երբեք, ոչ մի պարագայում մի քանի լեզու իմացող այս փառահեղ զորավարն ու փիլիսոփան, հայերեն շատ լավ իմացող, բայց ռուսերեն խոսող հայ չինովնիկի լեզվական կողմնորոշմանը տուրք չէր տա, նրա հետ ռուսերեն չէր խոսի ու խոսքը չէր եզրափակի՝ ասելով՝ «Я Гарегин Нжде»:



«Անահիտ» մուլտֆիլմի լեզվական սխալները

Հայկական առաջին լիամետրաժ մուլտֆիլմում չարի ու բարու կռիվն է, արհեստների, հայրենասիրության գովքը: Բայց մուլտֆիլմի լեզվական պատկերը փոշիացնում է ներկայացված արժեքները:

Լսենք մուլտֆիլմի հերոսներին:

ԱՆԴՈՎ (Անահիտի ձին)

Այս ձին աչքի է ընկնում «լեզուների իմացությամբ»: Կենդանու կերպավորման համար մուլտաշխարհը միլիոնավոր հնարքներ ունի: Անդոկի համար ընտրվել է օտար բառերի հեղեղ թափելը՝ ինչ-որ տեղ, ոչ մուլտֆիլմային ոճով:

- «Ի՞նչ կա որ, *սյուրպրիզ* ա», «Վայ, ես մեռա, *իստերիկա*»:

Եթե Անդոկն առաջին օտար բառի փոխարեն ասեր *անակնկալ*, երկրորդի փոխարեն՝ *չեմ դիմանում*, *հիմա կուշաթափվեմ* ալլն, երեխաներին պակաս դուր չէր գա, քիչ չէր հետաքրքրի:

- «Էդ *պոսկատից* աման-չաման ա»:

Այն, որ այս հեքիաթի նկարագրած ժամանակաշրջանում նման ծառայություն չի եղել՝ իր հերթին: Նաև՝ այդ ծառայությունը հայերեն *վարձույթ*-ն է (այստեղ՝ *վարձույթով*): Անդոկ ձին տեղի-անտեղի լատիներեն է խոսում. *homo homini lupus est* (մարդը մարդուն գայլ է), *post scriptum* (հետգրություն), *terra incognita* (անհայտ երկիր), *mea culpa* (իմ մեղքը) և այլն: Սցենարային տեքստի հետ կապ չունեցող այս արտահայտությունները գործածելու իմաստը այդպես էլ անհայտ է մնում:

- «*Գնաց կաշը*»:

Այս տեսակ արտահայտությունը մանկական մշակույթի դռներին անգամ չպիտի մոտենար: Եվ, չգիտես ինչու, այս խոսքից հետո ձին երգում է՝ *Բարսեղոնա՛*:

- «Յիս էն *Անդոկսին* ձին չիմ, վուր ավզի վրա *հիմնանանա*»:

Մուլտֆիլմի ստեղծագործական անձնակազմը Սայաթ-Նովայից նույնպես «անմասն չի մնացել»: «Թամամ աշխարհի» մեջ Սայաթ-Նովան իրեն Սայաթ-Նովասի է անվանում: Այստեղ էլ Անդոկ ձին է երգում «Թամամ աշխարհը»՝ վերևում նշված ձևով: Վերջում էլ *հիմնանամ*-ը (հենվեմ, հիմնվեմ) դարձնում է *հիմնանանամ*:

ՄԵՐՈՐ (արքայի խնամարկու)

- «Ու *հլը* ուզում ես գնալ *մենակո*՞ւ: / Մարդիկ են կորչում օրը ցերեկով»:

Առաջին նշումը բարբառային խոսքին է հատուկ, մինչդեռ ֆիլմում Մերոբը, որպես բարձր, արքունական խոսքի կրող, Վաչագանի հետ չափածո է խոսում ու նույնն էլ նրանից է պահանջում: Ուրեմն պալատական Մերոբը *հլը* չպիտի ասեր, այլ պիտի ասեր՝ *դեն*: Երկրորդ նշումն արդեն կոպիտ լեզվական սխալ է, որ հավանաբար հանգավորման համար է թույլ տրվել: Կարելի էր այս բառը գործածել ճիշտ՝ *մենակ*, հաջորդ միտքն էլ միանգամայն հնարավոր էր հանգավորված արտահայտել:

ԱԶԱՐ (արքայի հորեղբայրը)

- «Էս ո՞նց էսքան արագ *հայտնվիր*»:

Պալատական անպայման կասեր՝ *հայտնվեցիր*:

- «*К чертовой бабушке*»:

Այս ռուսերեն արտահայտությանը փոխարինող բազմաթիվ հայերեն արտահայտություններ կան՝ *գրողի ծոցը*, *սատանան քեզ հետ* և այլն:

- «Կարևորը ինձ *չքաշես* (այսինքն՝ *վատ վիճակի մեջ չգցես*):
- Դե, *փախար* դու այստեղից»:

Այսպես պալատական Ազարը ներկայացնում է փողոցային խոսվածք, և այն էլ ոչ թե Վաչագան արքայի ժամանակաշրջանի, այլ այսօրվա: Այս տեսակ խոսքի մեջ, արդեն, ականջ ծակողը գրական *այստեղից*-ն է: Հանցանք է երեխաներին այսպիսի հայերեն ներկայացնելը:

- «Գահասենյակում *դարերով* ի *վեր* / Երբեք չեն դրվել ավելորդ իրեր»:

Կա՛մ տեքստի հեղինակը չգիտի, որ ճիշտը *դարեր ի վեր*-ն է, կա՛մ չափածո խոսքի տողաչափին տուրք է տվել՝ հայերենի հաշվին:

ՎԱՉԱԳԱՆ (արքա)

- «Արագացրա, Սերոբ»:

Մուլտֆիլմի գլխավոր հերոս Վաչագան արքան, որ կրթված, դաստիարակված է ու օտար լեզուներ գիտի, Էկրանից այսպիսի հայերեն է սովորեցնում դեռահասին: Այստեղ հանգ ու վանկի խնդիր չկա, ու ոչինչ չէր խանգարի ասել՝ «**արագացրու**»:

- «По коня́м», - կոչ է անում Վաչագան արքան:

Եթե նա տեղ-տեղ «ռուսախոս» չլիներ, կասեր՝ **դեպի նժույգներ**՝ կամ **ձի՛ հեծնեք (հեծնե՛նք)**:

- «Սերոբ, ընկել ես **հողի՛ն**», - ասում է Վաչագանը՝ Սերոբին **գետնին** ընկած տեսնելով:

Այսպիսի շինծու հայերեն է ներկայացվում հանուն հանգավորման (Սերոբը պատասխանում է. «Ես աչքիս հանձնվեմ **դողին**»), և սա ներկայացվում է իբրև լեզվական բարձր մշակույթ:

- «Այդ ի՞նչ էր՝ **գա՛յլ էր, գազա՛ն, կենդանի՛**»:

Ստացվում է՝ գայլը ո՛չ գազան է, ո՛չ կենդանի, գազանն էլ ո՛չ գայլ է, ո՛չ կենդանի... Կատարյալ լեզվական անտրամաբանություն:

ԶԱՆԳԻ (շուն)

- «Ուրեմն լսեք, **բանը նրանում ա**»:

Ռուսերեն *дело в том*-ի պատճենումն այն կոպիտ լեզվական սխալներից է, որ տարածվելով՝ փորձում է նեղացնել գեղեցիկ ու ճիշտ **բանն այն է**-ի տեղը:

- «Է՛, ձյաձ Սերոբ, ինչի՞ց ես **խաբար**»:

Հայերենի, ռուսերենի ու թուրքերենի մի խառնուրդ է սա: Խոսքի բնականությունն ամեննին չէր տուժի, եթե Անդրկն ասեր. «Է՛, **քեռի** Սերոբ (Սերոբ **քեռի**) ինչի՞ց ես **տեղյակ**»:

ԲԱՐԻԾԵՐՈՒՆԻ

- «Դո՛ւ ինչ ես կանգնել, **кузнец**»:

Այս իմաստունը նույնպես մասնակից է մուլտֆիլմի խառնալեզվությանը: Այսպես է նա դիմում **դարբնին**: Բայց չմոռանանք, որ Աղայանի ու կարծես նաև այս մուլտֆիլմի հիմնական ուղերձը արհեստի գովքն է, իսկ դարբնին հեգնորեն *кучец* ասողն, ահա, մուլտֆիլմի բարի, իմաստուն ծերունին է: Հայ հեքիաթագրության դասական Ղազարոս Աղայանը Թումանյանին գրած իր նամակներից մեկում սրտի ցավով պատմում է, թե ինչ հեշտությամբ է մեր ժողովուրդը մոռանում իր հին գրույցները, հիշելիս էլ պատահում է՝ աղավաղում է դրանք: Աղայանը խիստ կարևոր, հրատապ էր համարում բանավոր մաքուր ակունքից վերցրածը գրի միջոցով նույնքան մաքուր պահպանելն ու սերունդներին փոխանցելը: **Մենք քիչ բան ենք անում մեր երեխաների համար: Նրանք մեծանում են՝ հիմնականում օտար մշակույթից սնվելով: Գոնե ստեղծված հնարավորության պայմաններում պիտի ջանանք մշակույթի մաքուր ջուրը մատուցել նրանց: Աղայանի «Անահիտ» հեքիաթը այդ մաքուր ջրի մի չքնաղ կաթիլն է, որ այսպես անխնա պղտորել են:**



Խոսում է «Անհայտ բաժանորդը»

Պարզ է, որ մեր առօրյան ներկայացնող ֆիլմը պետք է ներկայացներ մեր առօրյա խոսքը՝ հագեցած մոտ անցյալում անհասկանալի, այսօր՝ բոլորիս ծանոթ բառամթերքով: Առօրյա խոսքն իր տեղում, բայց սցենարը լավ խմբագրել էր պետք: Տեքստը բարդ չէ, և հեշտությամբ կարելի էր խուսափել լեզվական սխալներից, որոնցով, ի դեպ, լեցուն են վերջին տարիներին նկարահանված, հայկական կինեմատոգրաֆիայում բառիս ուղիղ ու ցավալի իմաստով՝ նոր խոսք ասող ֆիլմերը:

Անդրադառնանք այս ֆիլմի լեզվական սխալներին.

- «Եկան», - ասում է ֆիլմի հերոսներից մեկը: «Ո՞վ», - հարցնում է մյուսը:

Պարզ է՝ եթե եկան, ուրեմն ոչ թե ով, այլ **ովքեր**: Այսպիսի սխալները ներելի են առօրյայում կամ, ասենք, ուղիղ եթերի հանպատրաստից խոսքում: Բայց չէ՞ որ սա գեղարվեստական ֆիլմ է:

- Լսում ենք՝ «Առաջին անգամ պիտի ծանոթանայի Ժորի ընկերների հետ»:

Ծանոթանալը երկրորդ, երրորդ անգամ չի լինում: Ծանոթանում են միայն առաջին անգամ: Ուրեմն պետք էր ասել. «Ժորի ընկերների հետ *պիտի ծանոթանայի*» կամ «*Առաջին անգամ պիտի տեսնեի* Ժորի ընկերներին»:

- Տանտիրուհին ըմպելիք է մատուցում՝ ասելով՝ *ապերիտիվ*: Հյուրերից մեկն ընդվզում է. «Չէ՞ր կարա, չէ՞, լինե՞ր *զակուսկի*: Պարտադիր՝ ապերիտիվ»:

Ապերիտիվը թույլ ոգելից ըմպելիք է, ավելի հայտնի բառով՝ կոկտեյլ, իսկ զակուսկի-ն (ռուսերեն՝ закуска) *ակրատն է՝ թեթև ուտեստը*, որի հետ ոչ մի կապ չունե՞ր այն, ինչ ֆիլմում մատուցվում էր:

- «Հասկացի՛ր, հիմա *Վիկայի մոտ* ձևավորվում է սեփական վարքագծի մոդելը»:

Մոտ կապով բազում անգամ քննադատված այս օտար լեզվական կառույցը ողողել է առօրյա՝ խոսքը, եթերի՝ խոսքը: Բայց գոնե կինոյի խոսքը կարելի էր խնայել: Ահա այսպես՝ «Հասկացի՛ր, հիմա Վիկան իր վարքագծի ձևավորման շրջանում (տարիքում) է»:

- «*Կենդանիների մոտ* ամեն ինչ լինում ա բնագդաբար»:

Դարձյալ այս մոտ-ը: Ախր *մոտ*՝ նշանակում է «կողքը, մերձավոր»: Այս նախադասությունը դարձնենք հայերեն. «Կենդանիներն ամեն ինչ անում են բնագդաբար»:

- «Դե՛, մենք քո *ճաշակի վրա* չենք կասկածում»:

Այս նախադասության մեջ *վրա* կապն է «մեղավոր»: Հայերենում մեկի կամ մի բանի վրա չեն կասկածում: Պետք էր ասել. «Դե՛, մենք քո *ճաշակին* չենք կասկածում»:

- «Իսկ ի՞նչ էր լինելու իմ երկու *երեխեքի հետ*»:

Այստեղ էլ՝ *հետ* կապը, և դարձյալ խորթ լեզվական կառույցում: Ահա ճիշտ ձևակերպումը. «Իսկ ի՞նչ էին անելու իմ երկու երեխեքը»: Կամ՝ «Իսկ ո՞նց կապրեին իմ երկու երեխեքը» և այլն:

- «Ուզում եք ասել՝ *ոչ մեկ* ոչ մեկից գաղտնիք չունի, հա՞»:

Այս սխալ ոչ մեկ-ի մասին շատ է խոսվել: Ճիշտ է՝ *ոչ մեկը* կամ *ոչ ոք*: Հիմա հղկենք այդ նախադասությունը. «Ուզում եք ասել՝ *ոչ մեկս մյուսից* գաղտնիք չունի, հա՞», «Ուզում եք ասել՝ *մենք իրարից* գաղտնիք չունենք, հա՞» և այլն:

- «Զափագանցում եք: Ամեն ինչ *էղքան էլ* վատ չի»:

Հայերենում քարացած արտահայտություն կա՝ այնքան էլ (ենքան էլ)՝ «այնքան էլ վատ չէ», «այնքան էլ լավ չեմ» և այլն: Այս սխալը վերջին շրջանում վատ թարգմանիչներն են

ռուսերենից փոխանցել՝ не так уж: Ճշտենք՝ «Չափազանցնում եք: Ամեն ինչ **էնքան էլ** վատ չի»:

Ֆիլմը «հարուստ է» նաև արտասանական սխալներով: Անընդհատ հնչում է՝ *իմիչայլոց* (փոխանակ՝ *իմիջիայլոց*), *ենչանիկ* (փոխանակ՝ *երջանիկ*), *ստեսցուն* (փոխանակ՝ *ցուեսություն*), *պսիխոտեռապևտ* (փոխանակ՝ *հոգեթերապևտ* կամ գոնե *փսիխոթերապևտ*), *էդգառ Առամիչ* (փոխանակ՝ *էդգար Արամի* կամ գոնե *էդգար Արամիչ*) և այլն:

«Անհայտ բաժանորդ» ֆիլմի տիտղոսներում գրված է, որ այն անչափահասների համար չէ: Գուցե ֆիլմի լեզվական պատկերն էլ նկատի ունեն: Չէ՞ որ հատկապես անչափահասներին չարժե այսպիսի հայերենով ֆիլմ ներկայացնել:



Մանուկներին մատուցվող «մեծական» սխալներ

Ներկայացնում ենք թարգմանված մուլտֆիլմերում տեղ գտած առավել տարածված ու ցցուն լեզվական սխալներից մի քանիսը՝ «Հերկուլես» մուլտֆիլմից, «Թոմ Սոյեր», «Գիզանտոգավր», «Մարկո Պոլո», «Բում-Բում», «Օզի. շնային մեծ փախուստ», «Զորքոյի քրոնիկները» մուլտսերիալներից (վերջինիս վերնագիրը, երեխաներին հասկանալի լինելու համար, կարելի էր բնագրից մի քիչ շեղել ու թարգմանել, օրինակ, *պատումիկներ*):

➤ «Պի՛նդ *բոնվիր*, Ա՛րչի», «Ռո՛քի, *բոնվիր*՝ պոչիցս»:

Բոնվել կարող են պահմտոցի խաղացողը, հանցագործը, սուտը: Մեկի հետ կարող ես վեճի բոնվել: Բայց ուղիղ իմաստով *բոնելը* չի կարող կրավորական լինել: Հեռուստատեսությունն այս տարածված սխալը պիտի ոչ թե «վավերացնի», այլ կանխի: Ճիշտ է՝ «Պի՛նդ *բոնիր*, Ա՛րչի», «Ռո՛քի, *բոնիր*՝ պոչիցս»: Ի դեպ,՝ պետք է տարբերակենք նաև «բոնի՛ր պոչս» և «բոնի՛ր պոչիցս» արտահայտությունները: Բառարանային բացատրությամբ առաջին *բոնել*-ը «բոի՛ ափի մեջ առնել»-ն է, երկրորդը՝ «ուժով ձեռքը մի բանից գցել, բաց չթողնել»-ը:

Ահա՛ կրավորական *վ*ածանցի անտեղի գործածության ևս մի դեպք.

➤ «Թող *փորձվեն* հայտնվել իրենց անճոռնի դեմքերով»:

Փորձել և փորձվել բառերը հաճախ են շփոթում: **Փորձվել** նշանակում է **վարժվել, հմտանալ**: Այստեղ խոսքը փորձ անելու մասին է՝ թող **փորձեն** հայտնվել:

- Մուլտսերիալներից մեկում լսում ենք. «**Երկուսդ էլ ծանոթ եք**»:

Սա ճիշտ կլինի, եթե երկու հոգի ծանոթ լինեն որևէ մեկին կամ մի որևէ բանի: Այստեղ նրանք իրա՛ր են ծանոթ: Ուրեմն՝ «**Դուք իրար ծանոթ եք**»: Նախընտրելի է՝ «**Դուք ճանաչո՞ւմ եք իրար**»:

- Մուլտֆիլմ դիտող երեխան լսում է՝ «Նահանգապետի հեղինակությանն ուղղված **ցանկացած մարտահրավեր անպատիժ չի մնա**»:

Այստեղ **ցանկացած** բառի գործածությունը ճիշտ չէ, քանի որ նախադասությունը ժխտական բնույթ ունի: Ճիշտ է՝ «Նահանգապետի հեղինակությանն ուղղված **ոչ մի մարտահրավեր անպատիժ չի մնա**»:

- Լսում ենք. «Գավաթն անպայման ես **կհաղթեմ**»:

Հաղթում են մրցույթում, խաղում, իսկ գավաթը կամ որևէ այլ բան **նվաճում են**:

- «Շնորհակալ եմ, որ **ստեղծիք** պահակներին»:

Ստեղ-ը չեզոք սեռի բայ է, գործողությունն իր վրա կրող չի պահանջում: Իսկ որևէ մեկին, ասենք՝ պահակներին, ոչ թե ստում են, այլ **խաբում**:

- Ապա լսում ենք. «Արի ամուր գրկեմ: Ուզում եմ **կիսվել քեզ հետ վարակով**»:

Որևէ բանով կիսվել-ը սխալ արտահայտություն է: Ճիշտ կլիներ ասել. «Արի ամուր գրկեմ: Ուզում եմ **վարակել քեզ**»: Այստեղ պատկերավոր կամ հումորով կարելի էր ասել. «Արի ամուր գրկեմ: Ուզում եմ **վարակիս կեսը քեզ տալ**»:

- Կերպարներից մեկը ընկերոջն ասում է. «Արդեն կարող ես դուրս գալ, **վախկոտ Նազար**»:

Ամերիկյան մուլտսերիալի հերոսներն, իհարկե, չգիտեն ու ժամանակագրորեն չեն էլ կարող իմանալ, թե ով է հայկական հեքիաթի հայտնի հերոսը՝ Նազարը: Սա ձախողված թարգմանություն է: Ճիշտ կլիներ **վախկոտ նապաստակ** անվանել (որ հայտնի է բոլորին) կամ պարզապես **վախկոտի մեկը**:

- «Մորաքույր Փոլին պիտի օգնեի **տները մաքրել**»:

Տան մասին հոգնակիով խոսելը մեր առօրյա խոսքում տարածված սխալ է: Եթե խոսքը մի տան մասին է, ուրեմն՝ **տունը մաքրել**:

- «Հե՛յ, ինչո՞ւ եք զարմացել, *աշխատանքի՛ անցեք*»:

Այս արտառոց սխալը սկսել է հաճախ հանդիպել: Մտահոգիչ է, քանի որ սխալը արագ կարող է փոխանցվել հեռուստատեսությանից հեռուստադիտողին: Հայերեն ճիշտ է՝ «Հե՛յ, ինչո՞ւ եք զարմացել, *գործի՛ անցեք*»:

- Հերկուլեսը հորը՝ Ջեսին, ասում է. «Եթե **Դուք** աստված եք, ուրեմն ես ...», ապա՝ «Դեռ **կհպարտանաք** ինձնով»:

Աստծու կամ աստվածների հետ երբեք ոչ ոք Դուք-ով չի խոսել:

Թարգմանված ֆիլմերից ու մուլտֆիլմերից մեր խոսքին է անցել մի արտահայտություն, որը խորթ է մեր մտածողությանը: Մեկը ընկնում, ջարդուփշուր է լինում, վթարի է ենթարկվում կամ գլխիվայր կախված է, իսկ նրան հարցնում են. «Ամեն ինչ լա՞վ է» կամ «Ամեն բան կարգի՞ն է»: Հայերեն այս հարցերը չեն տալիս, երբ ամեն ինչ շատ վատ է: Այս հարցերը մենք տալիս ենք, երբ ընդհանուր առմամբ վատ չէ կամ նույնիսկ լավ է: Իսկ վատ վիճակում մեկին ասում ենք. «Քեզ ի՞նչ եղավ», «Ի՞նչ պատահեց» և այլն:

- «Նրանք լույսեր տեղադրեցին ցամաքի վրա ու սպասեցին, որ *մութն ընկներ*»,
- «Հեքը այնքան կմնա բանտում, մինչև ինչ-որ մեկը *կապացուցի* նրա անմեղությունը»:

Սա նույնպես նոր ու արագ տարածվող սխալ է: Ստորադասական նախադասության մեջ գործողության կատարման ժամանակը արտահայտվում է գլխավոր նախադասությամբ՝ ստորոգյալով: Միշտ չէ, որ երկրորդական նախադասության բայական անդամը պետք է կրկնի ստորոգյալի ժամանակն ու եղանակը: Այստեղ ճիշտ է՝ «սպասեցին, որ *մութն ընկնի*», «կմնա, մինչև *ապացուցի*»:

- «Մենք չենք կարող ռիսկի դիմել ու լաստանավը ոսկով *ծանրեցնել*», «Այն զինվորները, որոնք *հիմարեցրին* քո նավապետին...»:

Գրագետ խոսք մատուցելու միտումով շատերը *բայերն արտասանում են սխալ խոնարհմամբ*: Ճիշտ է ասել՝ *ծանրացնել, հիմարացնել*:

- «- Դու ինչո՞ւ ես այստեղ: /- **Գողության**»:

Քիչ չեն նաև այսպիսի անհեթեթ, բնագրից պատճենված ձևակերպումները: Հարցին պետք էր պատասխանել՝ «**Գողության մեղադրանքով/Գողության պատճառով**»:

Մենք հատկապես մտահոգիչ ենք համարում լեզվամտածողության, լեզվական կադապարների խեղաթյուրման՝ առաջին հայացքից աննկատ թվացող սխալները: Այդ կաշուն լեզվական «զանցառությունները» անգամ մեծահասակների շրջանում շատ արագ են տարածվում: Ուրեմն որքա՛ն խոցելի է մանուկ հեռուստադիտողը:



Երեխաներին՝ միայն որակյալ խոսք (1-ին մաս)

Երեխայի ձևավորման գործում ականջը շատ պատասխանատու ընկալուչ է: Ամենևին միևնույն չէ, թե նա ինչ խոսք է լսում: Այդ իմաստով մուլտֆիլմերը կրկնակի կարևորություն ունեն: Խոսենք մուլտֆիլմերի հայերեն թարգմանությունների մասին:

Սկսենք երեխաների սիրած «Դեպի վեր» մուլտֆիլմից:

- «Ես չեմ համբերում լսել այս պատմության ավարտը»: «Мне не терпится услышать...»:

Պարզ է, որ այս նախադասությունը թարգմանվել է ռուսերենից: Կարելի է ասել՝ չի էլ թարգմանվել, հենց ռուսերեն էլ մնացել է: Փորձենք միասին թարգմանել: «Ես **չեմ համբերում: Ուզում եմ լսել** այս պատմության ավարտը»: Կամ՝ «Ես **չեմ համբերում, թե երբ եմ լսելու** այս պատմության ավարտը»:

- Այս մուլտֆիլմում մի հսկա թռչուն կա: Փոքրիկ հերոսը ծերունուն ասում է. «Կարո՞ղ ենք **նրան մեզ հետ վերցնել**»:

Այս միտքն էլ է ռուսերեն: Մանավանդ՝ խոսքը այդ հսկային **վերցնելու** մասին չէ: Պետք էր ասել՝ «Կարո՞ղ ենք **նրան մեզ հետ տանել**»: Կամ՝ «Կլինի՞, որ **նա էլ մեզ հետ գա**»:

- Փոքրիկ տղան զարմացած բղավում է. «Այստե՛ղ նայեք»:

Նա առաջարկով կամ խնդրանքով չի դիմում որևէ մեկին, այլ պարզապես զարմանքն է արտահայտում: Բայց երեխան այդ պահին կարճազանքի ձայնարկություններով, կասի «վայ, այս ի՞նչ է» կամ մի ուրիշ բան, այլ ոչ երբեք՝ «այստեղ նայեք»:

- Երեխան նաև չի ասի. «Շատերը ինքնաթիռով են ճանապարհորդում, բայց Դուք խելամիտ եք *գտնվել*»:

Նախ՝ ոչ թե *գտնվել*, այլ *վարվել*: Սա լեզվական սխալ է, իսկ մնացածը պարզապես վատ է. *շատե՛րը, խելամի՛տ...* Չէ՞ որ սա մուլտֆիլմ է: «*Ուրիշներն* ինքնաթիռով են ճանապարհորդում, *իսկ Դուք շատ խելոք բան եք արել*»: Եվ, հավատացե՛ք, տեսարանից ստացած տպավորությունը միանգամայն այլ կլինի:

- «Դու երբեք ճամֆար չե՞ս գնացել: - *Այո*, բայց դրսում չենք գիշերել»:

Հայերենի մեծ գիտակ պետք չէ լինել՝ իմանալու համար, որ «*չե՞ս գնացել*» հարցին չեն պատասխանում «*այո*», այլ ասում են՝ «*գնացել եմ*»:

- «Ես զանգում եմ, բայց Ֆիլիսն ասում է, որ *նրան* ձանձրացնում եմ»:

Այստեղ երրորդ մեկը չկա: Զանգին պատասխանողն էլ, ձանձրացողն էլ նույն Ֆիլիսն է: Ուրեմն՝ «Ես զանգում եմ, բայց Ֆիլիսն ասում է, որ *իրեն* ձանձրացնում եմ»:

- «Վզկապիդ *հետ* ինչ-որ բան այն չէ»:

Այս *հետ*-ը հայերեն չէ: Պետք չէ նախադասությունն այնպես կազմել, որ առանց *հետ* կամ *մոտ* կապի գործը գլուխ չգա: «Վզկապդ ի՞նչ է եղել», կամ՝ «Վզկապիդ ի՞նչ է պատահել»: Եվ պետք չէ ասել «Գրանցեք եղանակի մասին տվյալները *մաճյանում*»: *Մատյան* գրում, *մատյան* կարդում ենք:

- Իսկ ահա «Աստերիքս. աստվածների երկիրը» մուլտֆիլմի հերոսներից մեկին ամբողջ ընթացքում անվանում են *չարաճճի* Կուս:

Այսպիսի բառ չկա: Ճիշտ է՝ *չարաճճի*: Ընդ որում՝ այդ սխալն անում են կրկնօրինակող բոլոր դերասանները:

- Իսկ ահա հերոսներից մեկն ասում է. «*Եկվորներին այնքան էլ ուրախ չեն այստեղ*»:

Դարձյալ բառացի պատճենում ռուսերենից: «*Այստեղ եկվորներին այնքան էլ ուրախ չեն ընդունում*»: «*Եկվորներին այստեղ այնքան էլ չեն սիրում*»: Կարելի է շարունակել: Ճիշտ տարբերակները քիչ չեն:

- «*Քաղաքի բոլոր քաղաքացիներին* բնակարան է հատկացվում»:

Պարզ է, որ վատ է: Կարելի էր ասել. «*Քաղաքի բոլոր բնակիչներին...*»: Կամ՝ «*Բոլոր քաղաքացիներին...*»:

➤ «*Նա գիտի՝ որտեղ վազել*»:

Այսպես կարելի է ասել, եթե խոսքը, ասենք, մարզադաշտում, բակում կամ որևէ այլ վայրում վազելու մասին է: Բայց այստեղ խոսքը վազելու ուղղությանն է վերաբերում: Ուրեմն՝ «*Նա գիտի՝ ուր վազել*», «*Նա գիտի՝ ուր պիտի վազի*»:

➤ Միսալ է ասել՝ «*Ինձանից գողություն չեն արել*»:

Պետք է ասել՝ «*Ինձանից չեն գողացել*»:

➤ Միսալ է ասել՝ «*Ինչ պետք է անել սրա հետ*»:

Պետք է ասել՝ «*Ինչ պետք է անել սրան*»: «Կեսար, դու *անագնիվ գտնվեցիր*»-ի փոխարեն պետք է ասել՝ «Կեսար, դու *անագնիվ վարվեցիր/եղար*»:



Երեխաներին՝ միայն որակյալ խոսք (2-րդ մաս)

Գաղտնիք չէ, որ մեր երեխաներն ամենից շատ դիտում են ռուսերեն թարգմանությամբ ամերիկյան, ֆրանսիական, ինչպես նաև ռուսական մուլտֆիլմեր: Այս պարագայում շատ կարևոր է մուլտֆիլմերի կրկնօրինակման միջոցով երեխաների համար իրենց մայրենիի գեղեցկությունը բացահայտելու գործը: Նկատենք, որ ռուս երեխաների համար այդ աշխատանքը լավագույն կերպով է կատարում ռուսական հեռուստաշուկան:

Միասին դիտենք երեխաների սիրելի «Կոշկավոր կատուն»: Այս կատվի սիրելին էլ մուլտֆիլմում մի գեղեցկուհի կատու է, որին կոչում են օրիորդ **Փափթաթ**: Վատ թարգմանություն է: Ճիշտ կլիներ նրան **Փափկաթաթ** անվանել՝ «փափկամորթ», «փափկասուն» բառերի նմանողությամբ: Կարելի էր նաև այլ տարբերակներ գտնել: Հայերենը մարդու միտքը չի կաշկանդում: Բայց ա՛յ քեզ հայերեն՝ «*Իմ ու Գոմփոյի միջև*» վերքերը շատ խորն են»: Վերքերը Կոշկավորի ու Գոմփոյի միջև՝ չեն: Վերքերն

առհասարակ միջև չեն լինում: Ճիշտ է՝ «Իմ ու Գոմփոյի սրտում վերքերը շատ խորն են», «Իմ ու Գոմփոյի մեջ վիրավորանքը շատ խորն է» և այլն:

- «*Զգո՛ւյճ եղիր՝ ում հետ ես շփվում*»,⁻ հնչում է մուլտֆիլմում, և իմաստը միանգամայն հասկանալի է:

Բայց հասկանալի լինելը չի փրկում այս սխալ նախադասությունը: Տվյալ դեպքում ճիշտ կլիներ՝ «*Իմացի՛ր՝ ում հետ ես շփվում*», «*Զգո՛ւյճ, տե՛ս, թե ում հետ ես շփվում*», «*Դրան մի՛ վստահիր*» և այլն:

- «Գիտեմ, որ նեղացած ես, բայց ինչ *ուրախ եմ քեզ տեսնել*»: «Как я рад тебя видеть»,⁻ ասում են ռուսները:

Եվ ահա մեր եթերը լցվել է *ուրախ եմ ծանոթանալ, ուրախ եմ ներկա լինել* և այլ ռուսերենատիպ նախադասություններով: «Գիտեմ, որ նեղացած ես, բայց *ինչ/շատ* (ավելի լավ է՝ առանց սրանց) *ուրախ եմ, որ քեզ տեսա*»: Շատ ավելի լավ է՝ «Գիտեմ, որ նեղացած ես, բայց *լավ է, որ հանդիպեցիք*» և այլն:

- «*Օր չի անցնում, որ չմտածեմ, թե ինչ կորցրի*»:

Դարձյալ պատճենահանված խոսք: Փորձենք թարգմանել: Ահա՛, դժվար չէ՝ «*Օր չկա, որ չմտածեմ, թե ինչ կորցրի*»:

- «Գիտե՞ս քանտում ինչ են անում *Գոմփոյի հետ*»:

Քանտում Գոմփոյի հետ միասին ոչինչ չեն անում: Չէ՞ որ *հետ* նշանակում է՝ միասին: Բանտում Գոմփոյին տանջում են: Ուրեմն՝ «Գիտե՞ս՝ քանտում ինչ են անում *Գոմփոյին*»:

- «Ես մի բան եմ երազում՝ *իմ պարտքերս* տամ»:

Վատ չէր լինի, որ ստեղծագործական խմբի անդամներից մեկնումեկը հիշեր, որ արևելահայերենում ստացական հոդի հետ անձնական դերանուն չի գործածվում: Կա՛մ «Ես մի բան եմ երազում՝ իմ պարտքերը տամ», կա՛մ «Ես մի բան եմ երազում՝ *պարտքերս* տամ»: «Իմ պարտքերս»՝ ճիշտ չէ:

Անցնենք «Բնեռային ճեպընթաց» մուլտֆիլմին:

- «Հե՛յ, ի՞նչ ես անում: *Մեր գլխին պատմություն ես բերելու*»:

Մա հայերեն չէ: Մենք՝ հայերս, մեկի գլխին ոչ թե պատմություն ենք բերում, այլ *փորձանք*: Իսկ *պատմության մեջ գցո՛ւմ ենք*:

➤ «Կանգնած ենք *ճեպընթացի ամենասկզբում*»:

Գնացքի ոչ թե սկզբում են կանգնում, այլ *առջևի մասում*:

➤ «Փորձեցի բռնվել ամրակից, *ինչն էլ պոկվեց*»: Կամ՝ «*Խնդիր չի, ոչինչ*»:

Մուլտֆիլմում այսպես չեն խոսում: «Փորձեցի բռնվել ամրակից, *բայց այն պոկվեց*»: Եվ՝ «*Բան չկա, ոչինչ*»: Փոքրիկ փոփոխություններ, և դրվագը կդառնա կենդանի, մուլտֆիլմային:

➤ «-Ես ոչինչ չեմ լսում: Իսկ դու՞ - *Ոչ*»:

Այս հարցին ոչ ոք այսպիսի պատասխան չի տա: *Ես էլ, Չեմ լսում, Ես էլ չեմ լսում*՝ն այլն: Կամ էլ հարցը պիտի խմբագրվեր. «- *Ես ոչինչ չեմ լսում: Իսկ դու լսո՞ւմ ես: - Ոչ*»:

➤ «Խաղալիքներն առանց այդ էլ շատ են տուժել»:

Այս *առանց այդ էլ* արտահայտությունը վերջին շրջանում է հայտնվել եթերում և վստահաբար՝ ռուսերենից հայերեն վատ թարգմանության հետևանք է: Նույն կերպ և մուլտֆիլմի հաջորդ սխալը՝ «Ամեն ինչ *այդքան էլ* վատ չէ»: Ճիշտ է՝ «Խաղալիքներն *առանց այն էլ* շատ են տուժել», «Ամեն ինչ *այնքան էլ* վատ չէ»:



Ուշադրություն, երեխաներ են...

Երբ ստեղծվեց հեռուստացույցը, դեռահասների խնդիրներով մտահոգ մարդիկ ահաբեկված հայտարարեցին, թե գալիս է Էկրանի նման քառակուսի գլուխների ժամանակաշրջանը: Բայց հեռուստացույցը, ժամանցի անթերի միջոց չլինելով հանդերձ, եղել ու մնում է կրթվելու, զարգանալու, տաղանդների բացահայտման ու առաջընթացի հնարավորություն: Որակյալ հաղորդման համար մաքուր պատկերից առավել կարևոր է մաքուր խոսքը: Չէ՞ որ հեռուստադիտողը, հատկապես եթե դեռահաս է, երեքի խոսքն ընկալում է որպես օրինակելի:

«Շանթ» հեռուստաընկերության «Մեծ փոքրիկներ» հաղորդաշարի հյուրերի տաղանդով հիանալուն զուգահեռ հետևենք հաղորդաշարի լեզվին: Այն վարում է դերասան Հրանտ Թոխատյանը: Առաջինը, որ կնկատենք՝ նա խոսում է *ա* «օժանդակ բայով»: Դա գուցե մտերմիկ մթնոլորտ է ստեղծում, բայց կարելի է առիթը օգտագործել ու երեխաների ականջը սովորեցնել գրական խոսքին: Խոսակցականը նրանք այսպես թե այնպես լսում են: Հաղորդավարի խոսքը լեցուն է լեզվական սխալներով: Դրանց մեծ մասը օտարաբանություններ են՝ ռուսերենից ոչ թե թարգմանված, այլ ուղղակի պատճենված լեզվական կառույցներ, որոնք «նրբորեն» խաթարում են ունկնդրի մտածողությունը: Ահա դրանցից մի քանիսը.

- «Միքայել, հայրիկիդ *անունն ինչպե՞ս է*», - հարցնում է հաղորդավարը: Չորս տարեկան Միքայելը տալիս է տրամաբանական պատասխան. *«Լավ է»*: Հաղորդավարը, որպեսզի ընդգծի երեխայի՝ իբրև թե ծիծաղելի պատասխանը, հարցնում է. *«Մամայինն էլ ա՞ լավ»*: «Հա», - վստահ պատասխանում է Միքայելը:

Եթե երեխան հարցը լսեր գրագետ ձևակերպմամբ՝ «Միքայել, հայրիկիդ *անունն ի՞նչ է*», բնականաբար, կասեր իր հոր անունը, այլ ո՛չ «անվան որպիսությունը»:

- «Մենք գալիս ենք էստեղ մեր *կարողություններով կիսվելու*: Դու քո *ո՞ր կարողությունով ես մեզ հետ կիսվելու*»:

Երեխաները գալիս են հեռուստատեսություն՝ ներկայացնելու իրենց այս կամ այն կարողությունը, ընդունակությունը: Մեկը պարում է, մյուսը զարմացնում է իր բացառիկ հիշողությամբ: Նրանք չեն կիսվում պարով կամ հիշողությամբ: Պետք էր ասել՝ «Մենք գալիս ենք այստեղ մեր *կարողությունները ներկայացնելու*: Դու քո *ո՞ր կարողությունը մեզ կներկայացնես*»:

- «*Ինչո՞ւմն ա նրանց* կարևորությունը», - Թոխատյանը մասնակից երեխային հարցնում է քիմիական տարրերի մասին:

Այս ինչում-ը ռուսերեն *в чем*-ի պատճենումն է: Հայերենում այս հարցը ճիշտ կհնչեր այսպես՝ «*Ո՞րն է նրանց* կարևորությունը» կամ «*Ի՞նչ նշանակություն ունեն նրանք*»: Հաղորդաշարում *в чем*-ով սխալները բազմաթիվ են:

- «Ուզում եմ, որպեսզի էս հեքիաթները միշտ լինեն քեզ հետ»:

Այստեղ «որպեսզի» շաղկապը գործածված է «որ» շաղկապի փոխարեն՝ ռուսերեն *чтобы*-ի նմանողությամբ: Սա տարածված լեզվական սխալ է և հաղորդաշարում ամենից հաճախ կրկնվող օտարաբանությունը՝ «Կիսնդրեմ, **որպեսզի** բերեն նվերները քեզ համար», «Ուզում էի առաջարկել, **որպեսզի** միասին մի խաղ խաղանք», «Կիսնդրեմ, **որպեսզի** բերեն պատվոգրերը» և այլն:

- Ռուսերեն *у меня*-ի պատճենումը նույնպես հաղորդավարի «սիրած» սխալներից է:

«Ինձ *մոտ* մանկության երազանքներից մի քանիսը կատարվել են»:

Ճիշտ կլիներ՝ «**Իմ** մանկության երազանքներից մի քանիսը կատարվել են»:

- «Զգիտեմ՝ *իմ մոտ էր տենց* տպավորություն»:

Այստեղ սխալ է նաև **այդպիսի** դերանվան գրական ձևի կամ խոսակցական **էդպիսի**-ի փոխարեն *տենց*-ը գործածելը: Ճիշտ է՝ «Զգիտեմ՝ **ե՞ս ունեցա այդպիսի (էդպիսի)** տպավորություն»: Կամ՝ «Զգիտեմ՝ **ի՞նձ թվաց**»: Այս շարքը նույնպես կարելի է անվերջ շարունակել:

- «Մեր հյուրը ութ տարեկան ա, բայց շատ *հավաքված մարդ ա*»:

Կազմակերպված մարդուն ռուսներն ասում են *собранный человек*: Հաղորդավարն այս արտահայտությունը ռուսերենից «տեղափոխել է» հայերեն: Ճիշտ է՝ «Մեր հյուրը ութ տարեկան է, բայց շատ **կազմակերպված մարդ է**»:

- Երեխան հայերեն խոսքում ջութակի **աղեղին** ասում է *смычок*:

Հաղորդավարը նրան ուղղելու փոխարեն աղեղը ցույց է տալիս հանդիսատեսին ու ասում՝ «Ահա, *սմիչոկ*»:

- «Ինչպե՞ս են քո ընկերները վերաբերվում *քո ընտրությանը դեպի դասական երաժշտությունը*»:

Հայերենում ընտրությունը չի լինում դեպի ինչ-որ բանը: Սա օտար լեզվամտածողությամբ կազմված նախադասություն է: Ճիշտ կլիներ, օրինակ՝ «**Ընկերներդ դո՞ւք է գալիս**, որ դասական երաժշտությունն էս ընտրել»:

Հետևե՛ք ու կլսեք բազում այլ տեսակի լեզվական սխալներ:

- «Չե՞ս կարծում, որ *գրադվելով դասական երաժշտությամբ*՝ վաղը-մյուս օրը դա կարող ա խանգարի քո ընտանիքին»:

Միայն ձևակերպված միտք է (երեխային այդ տարօրինակ մտահոգությամբ դիմելը թողնենք մի կողմ): «Չե՞ս կարծում, որ *դասական երաժշտությամբ գրադվելը* վաղը-մյուս օրը կարող է խանգարել քո ընտանիքին»: Այ սա հայերեն նախադասություն է:

- «Արամե ջան, *Ժամանակդ շատ գրադված ա*»:

Մարդու ժամանակը չի լինում գրադված, այլ մարդն ի՛նքը: Պետք էր ասել. «Արամե ջան, *շատ գրադված ես*»: Կամ՝ «Արամե ջան, *Ժամանակ չունես*»:

- «Թե՞ անպայման չի, որ հայ տղա լինի»:

Միայն է ասել՝ անպայման է, անպայման չէ: Ճիշտ է՝ «Թե՞ *պարտադիր չի (չէ)*, որ հայ տղա լինի»:

- «Մի մարդ, *որը որ* մարզիկ ա, ու մի մարդ, *որը որ* հոշակվեց չեմպիոն»:

Այս «որը որ» արտահայտությունը տարածված սխալ է: Ոչ թե «որը որ», այլ պարզապես «որը»՝ «Մի մարդ, *որը* մարզիկ է, ու մի մարդ, *որը* հոշակվեց չեմպիոն»:

Սրանք «Մեծ փոքրիկներ» հաղորդաշարից դուրս գրված բազում լեզվական սխալներից մի քանիսն են: Ինչպես տեսնում ենք՝ մեծ մասը ռուսերենից պատճենումներ են: Օտար մտածողությամբ ու տարատեսակ այլ սխալներով հագեցած խոսք ունեցող հեռուստանախագիծը, որքան էլ կրթելու, զարգացնելու, տաղանդների բացահայտման ու առաջընթացի միտում ունենա, չի կարող հանձնարարելի լինել:



«Հարրի Փոթերը» և նրա հայերեն կրկնօրինակումը

Հանրային հեռուստատեսությունը ցուցադրում է աշխարհն անգն գրաված այս պատանու կյանքը ներկայացնող ֆիլմաշարը՝ հայերեն կրկնօրինակմամբ: Բնագիր օրինակը հիմնականում չի հիասթափեցրել ֆիլմի ստեղծումից դեռ շատ առաջ

ռոուլինգյան վիպաշարով հմայվածներին: Բայց ֆիլմի հայերեն թարգմանությունը, ահա, գոհացնող չէ:

Ներկայացնում ենք ֆիլմաշարից դուրս գրված մի քանի լեզվական սխալ:

- «Նենգամիտ *նրբանցքում վտանգավոր տեղ է*», – ասում է Հագրիդը:

Փոթերի այս հաղթանդամ, կոշտուկոպիտ ընկերն ու ուսուցիչը կարող է և ինչ-որ բան սխալ ասել: Բայց ո՛չ հայերեն: Հայերեն նա պետք է ասեր. «Նենգամիտ *նրբանցքում վտանգավոր է*»: Կամ՝ «*Նենգամիտ նրբանցքը վտանգավոր տեղ է*»:

- «Միաեղջյուրի արյունը խմողը *թանկ գին կվճարի*», – ասում է մարդաձին:

Գինը թանկ կամ էժան չի լինում: Այն լինում է բարձր կամ ցածր, մեծ կամ փոքր (այլ բան են թանկագին-ն ու էժանագին-ը): Պետք էր ասել. «Միաեղջյուրի արյունը խմողը *թանկ կվճարի*»:

- Հարրին ասում է. «– Պարոն Մալֆոյ, սա Ձերն է: – *Ի՞նչ*», – զարմանում է Մալֆոյը ու մատնում ոչ միայն թարգմանչի, այլև մի ամբողջ աշխատանքային խմբի լեզվական անփութությունը:

Ռուսերեն *мой*-ը այստեղ պետք է թարգմանվեր՝ «*Ի՞նչ է*» կամ «*Ի՞նչ*»:

- Եվս մի վատ թարգմանված երկխոսություն. «– Ջինը կգա:– Չի՛ գա, *քանի դեռ չկանչես*»:

Ճիշտ կլիներ. «Չի՛ գա, *քանի դեռ չեմ կանչել*» կամ «Չի՛ գա, *մինչև չկանչես*»:

- Ահա՛ թե ֆիլմը հայերենացնողներն ինչպես են վարվել *գտնվել* բայի հետ. «Ո՞նց կարելի է միաժամանակ երկու դասի *գտնվել*» (ճիշտ է՝ մասնակցել), «Դու պետք է այստեղ *գտնվես*» (ճիշտ է՝ լինես), «Հայրդ չէր ցանկանա, որ ես մեռնեմ: Նա ներողամիտ *կգտնվեր*» (ճիշտ է՝ կլիներ), «Ինչպիսի՞ն էր խավարի լորդը, ինչպե՞ս էր նրա ներկայությամբ *գտնվելը*» (ճիշտ է՝ ինչպե՞ս էիր քեզ զգում նրա ներկայությամբ):

- *Գտնվել* բայի սխալ գործածությունը հայկական եթերում բավական հաճախադեպ է: Իսկ ահա հաջորդ սխալը հազվադեպ պատահողներից է. «Յուրաքանչյուրիցդ ակնկալում եմ, որ ձեզ կներկայացնեք *ըստ լավագույնս*», – ասում է պրոֆեսոր Մաքգոնագոլը: Այստեղ *ըստ* կապն ավելորդ է:

- Իսկ այժմ՝ մի արտառոց սխալ. «Դու ավելի *հին տեսք ունես*»: Պարզ է, որ թարգմանությունը կատարված է ֆիլմի ռուսերեն տարբերակից: Старый՝ հայերենում ն՝ հին է նշանակում, ն՝ ծեր: Այստեղ պետք էր թարգմանել. «Դու ավելի *ծեր ես երևում*»:

Ֆիլմում, բնականաբար, շատ են խոսում ստից ու կեղծիքից: Միսալներից էլ են խոսում, միայն, ավստո, ո՛չ լեզվական:

- «Մի՛ ստիք *ինձ*»,– ասում է Սնեյփը: «Դու *ինձ ստել ես*»,– ասում է Վոլդեմորը (նրա անունը ֆիլմում ռուսերենի նմանողությամբ հնչում է՝ *Վոլդեմորդ*, բայց բնագրի հնչադարձությունը հուշում է, որ նախընտրելի է գրքի հայերեն թարգմանության *Վոլդեմոր* տարբերակը):

Ստել-ը չեզոք սեռի բայ է: Մեկը մյուսին չի կարող ստել: Մարդիկ պարզապես ստում են: Մեկը մյուսին կարող է խաբե՛լ (ներգործական սեռ): Ուստի ֆիլմում մեծ մոգերը պիտի ասեին. «Մի՛ ստիք» կամ «Մի՛ *խաբիք ինձ*», ինչպես նաև՝ «Դու *ստել ես*» կամ «Դու *ինձ խաբել ես*»:

- «Հարրի, դեմ չե՞ս լինի՝ մի երկու *բառով փոխանակվենք*»:

Սա հայերեն չէ: Հայերենը սա է. «Հարրի, դեմ չե՞ս լինի՝ մի երկու *բառ փոխանակենք*»:

- Հարրի Փոթերը վազում է, նրա ընկեր Ռոնը հետևից ձայն է տալիս. «Հա՛րրի, սպասի՛ր, ո՛չ *այդքան արագ*»: Տունը այրվում է, բնակիչները գոռում են. «Այստե՛ղ, *օգնե՛ք*»: Հագրիդն ասում է. «Մարդախոտերին *մնացել է ես մի քիչ աճել*»: Ֆիլմի ռուսերեն տարբերակում բառացիորեն այսպես է:

Բայց թարգմանել էր պետք ոչ թե բառերը, այլ տեքստը. «Հա՛րրի, սպասի՛ր, *այդքան արագ մի գնա*», «Հասե՛ք, օգնե՛ք», «Մարդախոտերը *մի քիչ էլ պիտի աճեն*»:

- Ֆիլմի չորրորդ մասը կոչվում է «Հարրի Փոթերը և հրե գավաթը»: Հրե նշանակում է հրից՝ կրակից պատրաստված, կազմված: Մինչդեռ հուրն այս գավաթի մեջ է, նրանից է դուրս գալիս (չե՞ որ, օրինակ, ջրի բաժակին մենք չենք ասում «ջրե բաժակ»): «Հրի գավաթը» այնքան էլ լավ չի հնչում:

Ուրեմն պետք էր թարգմանել այնպես, ինչպես թարգմանվել է Ջ. Ռոուլինգի հանրահայտ գրքի չորրորդ հատորի վերնագիրը՝ «Հարրի Փոթերը և կրակի գավաթը» (թարգմանիչ՝ Ալվարդ Զիվանյան):

Այդ դեպքում Միրիուս Բլեքը, լեզվական մեղքի բաժինն ավելացնելով, Փոթերին չէր ասի. «Հրե կրակի մեջ անունդ չե՞ս գցել»: Պարզ է՝ «գավաթի» փոխարեն «կրակ» ասելը կրկնօրինակման անփութություններից է: Ճիշտ կլիներ՝ «**Կրակի գավաթի** մեջ անունդ չե՞ս գցել»: Իսկ անփութություններ ֆիլմի հայերեն տարբերակում շատ կան: Ահա դրանցից մի քանիսը.

- «Ապշեցուցիչ *հաջողականություն* է» (Ճիշտ է՝ **հաջողակություն**),
- «Որսորդներից ով *որսա* սմիչը, նա էլ կավարտի խաղը» (Բարեհունչ է՝ **որսորդներից ով բռնի** սմիչը),
- «Բավական ձգնել ես ու *հանգել սխալ եզրահանգման*» (Ճիշտ է՝ ձգնել ես ու **հանգել սխալ եզրակացության**, կամ՝ **սխալ եզրահանգում արել**),
- «Դժբախտաբար, բոլոր կոշիկներս *առեղծվածաբար* անհետացել են» (դժբախտաբար-ն ու առեղծվածաբար-ը «չհանդիպեցնելու» հազար հնար կա),
- «Կարծում եմ՝ *կղիմի անհապաղ միջոցների*» (Ճիշտ է՝ կարծում եմ՝ **անհապաղ միջոցների կղիմի**):

Պրոֆեսոր Մաքգոնագոլն ասում է. «Ես կգրեմ ձեր ընտանիքներին, և երկուսդ էլ *պատժամիջոց կստանաք*»:

Պատժամիջոց կիրառում են պատժողները, իսկ պատժվողները պատիժ են ստանում: Ուրեմն՝ «Ես կգրեմ ձեր ընտանիքներին, և երկուսդ էլ **պատիժ կստանաք** (կամ՝ **կպատժվեք**)»:

Իսկ ահա մթին արվեստներից պաշտպանվելու գիտակ Սներուս Սնեյփը հայտարարում է. «Ով կփորձի օգնել Փոթերին, *կպատժվի մեղքի ծանրագույն խստությամբ*»: Սնեյփին հասկանալը դժվար է, բայց ո՛չ նրա խոսքերը: Իրականում նա ասում է. «Ով կփորձի օգնել Փոթերին, **այդ ծանրագույն մեղքի համար խիստ կպատժվի**»: Իսկ հետո Սնեյփը հեգնում է. «Սենտիմենտալ *զգացմունքնե՛ր*»: Բայց նա լավ գիտի, որ սենտիմենտը հենց զգացումը, զգացմունքն է: Ուրեմն՝ «**Ինչպիսի՜ զգացմունքայնություն**» կամ «**Ի՛նչ գերզգայունություն**»:

- Լսում ենք՝ «Միմուսն *անկախ դուրս է տալիս*»:

Ճիշտ է՝ «Միմունս *իրենից անկախ դուրս է տալիս*» կամ՝ «Միմունս *անկապ դուրս է տալիս*»:

- Բուսաբանության դաս է: «Ձեր մարդախոտը *հանում էք ամանից և հետ էք դնում մի այլ ամանի մեջ*», – ասում է պրոֆեսորը:

Ճիշտ է՝ «Ձեր մարդախոտը *հանում էք ամանից և դնում էք մի այլ ամանի մեջ*»:

- Դամբլդորը Հորացիոսին ասում է. «Դու շատ ես նման իմ հին ընկերոջը: *Մեկը մեկին*»:

Այսպես կթարգմանի միայն համակարգչային ծրագիրը: Մեկը մեկին-ը ռուսերեն դարձվածք է՝ один к одному: Իսկ դարձվածքները բառացի չեն թարգմանվում: Հայերենում դրան համապատասխանում է՝ *«ոնց որ ջրի երկու կաթիլ»*:

- Հարրին ընկերներին ասում է. «Շոյված եմ ձեր *մտահաղացումից*»:

Այս սխալը համառ վարակի պես տարածվում է: Մտահաղացում-ը *միտք* և *հղանալ՝ ծագել, ստեղծել, ծնել* բառերի միացումից է: «Հաղանալ» բառ հայերենում չկա:

- Ֆիլմում հնչում է. «Հիշե՛ք, ոչ ոքի հետ *գրույցի չենք բռնվում, բացի ծայրահեղ անհրաժեշտությունից*»:

Այսինքն՝ գրուցում ենք միայն ծայրահեղ անհրաժեշտության հե՞տ: Իհարկե ո՛չ: Նաև՝ խոսքը ոչ թե գրուցելու, այլ առհասարակ խոսելու մասին է: Ուրեմն՝ «Հիշե՛ք, ոչ մեկի հետ *չենք խոսում, եթե ծայրահեղ անհրաժեշտ չէ*» կամ՝ «Հիշե՛ք, *խոսում ենք միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում*»:

- Ապա լսում ենք. «Դուք չեք կարող *ներխուժել ներս*»:

Ներխուժել բառի մեջ ներս-ի իմաստը կա: Ուրեմն՝ «Դուք չեք կարող *ներխուժել*»:

- «Ըոպեններ առաջ այն *ռչնչացվեց ինքն իսկ Վոլդեմորդի կողմից*»:

Ինչպիսի՜ վատ թարգմանություն: Ըստ տեսարանի՝ պետք էր թարգմանել. «*Վոլդեմորն ինքը*» (անվան նախընտրելի՝ առանց երկրորդ դ-ի տարբերակի մասին խոսել ենք նախորդ հոդվածում) *ռչնչացրեց այն* մի քանի րոպե առաջ (կամ՝ քիչ առաջ)»: Ֆիլմում ականջակալները *դնելու* փոխարեն դրանք *հագնում* կամ *տեղադրում* են:

«Հաստատ դա չէ» ասելու փոխարեն ասում են. «Կտրականապես դա չի»: Ֆիլմում **հետո**-ն գրեթե միշտ *ավելի ուշ*-ն է: **Երջանիկ**-ին ասում են *եռչանիկ*: Համարյա բոլոր դերասանները **արձակուրդ**-ին ասում են *առձակուրտ*: Աշակերտներն այստեղ ոչ թե **կարողանում են**, այլ *նրանց մոտ ստացվում է*: **Խնդիրը** ոչ թե *այն է*, այլ *նրանում է*: Բայց այս ամենը Հոգվորթսի հետ կապ չունի: Հոգվորթսում ամեն ինչ կարգին է: Այս ամենը կատարվում է «Հարրի Փոթերը» ֆիլմաշարի հայերեն թարգմանության մեջ:



«Մադագասկար» մուլտֆիլմը Երեխաները ոչ միայն դիտում, այլև լսում են

Երեխաները սիրում են մուլտֆիլմեր: Երեխաները սիրում են ջունգլիների մասին պատմություններ: Ահա թե ինչու նրանց սիրելի մուլտֆիլմերի ցանկում միշտ կա «Մադագասկարը»: Լավ է, որ այս մուլտֆիլմը թարգմանվել է հայերեն: Լավ է նաև, որ կրկնօրինակող խումբը բավականին ջանք է թափել. հիանալի ձայներ են, դերասանական լավ աշխատանք է կատարված: Բայց ափսո՛ւ, շա՛տ ափսոս, որ հայերեն տեքստը խմբագրված չէ: Ահա դուրս գրված սխալներից մի քանիսը:

- Ջեֆր Մարտին ասում է առյուծ Ալեքսին. «Դու ճիշտ *մարդու* մոտ ես եկել, ընկերս»:

Մուլտֆիլմում ինչ ասես կարող է լինել: Ասենք, զեբրը կարող է մարդու պես խոսել: Բայց նա իր մասին չի ասի՝ ճիշտ մարդու մոտ ես եկել: Այստեղ հեշտությամբ կարելի էր խուսափել **մարդ** բառից: «Ինչ էլ գիտես, թե *ու՛մ պիտի դիմես*», «Լավ է, որ *ինձ մոտ ես եկել*» և այլն:

- «Պետք է դուրս գաս *նույն, ձանձրալի* առօրյայից»:

Եթե առօրյան ձանձրալի է, ուրեմն այն **միապաղաղ է, անհետաքրքիր**, բայց ոչ *նույն(ը)*: Մա սխալ ձևակերպում է:

- Ջեֆրն ասում է, որ ուզում է գնալ վայրի բնություն: Առյուծը պատասխանում է. «Էլ *այդպես չասես*, թե չէ՝ իրոք անհանգստացել էի»:

Այստեղ խոսքը ասելու ձևի՝ ինչպես ասելու մասին չէ, այլ ասվածի բովանդակության՝ ինչ ասելու մասին: Ուրեմն՝ **«Էլ այդպիսի բան չասես...»** կամ **«Էլ նման բան չասես...»**:

- «Իմ *քաղցր*, հյուրավի սթեյք», - ասում է առյուծը մսի կտորին:

Գուցե **անուշահամ, համեղ**, բայց ո՛չ քաղցր:

- «Ո՛ւր *վերացավ* դասային անհավասարությունը»:

Ճիշտ է, երբ ասում ենք «ո՛ւր կորավ», քանի որ կորած բանը մի այլ՝ անհայտ վայրում է: Իսկ այն, ինչ վերացել է, չի կարող այլ տեղում լինել: Ուրեմն պետք էր ասել **«Ինչո՞ւ *վերացավ* դասային անհավասարությունը»** կամ **«Ո՛ւր *կորավ* դասային անհավասարությունը»**:

- Մուլֆիլմի հերոսներից մեկը հարցնում է. «Ես երագո՞ւմ եմ»:

Իրավիճակը շատ նման է ն՛ երագի, ն՛ երագանքի, բայց այստեղ խոսքը երագ տեսնելու մասին է: Ուրեմն իմաստային շփոթ չառաջացնելու համար ճիշտ կլիներ ասել. «Ես երա՞գ եմ տեսնում»:

- «Պետք է հեռանա հազար տարով կամ *ամբողջ կյանքով*»:

Այս խոսքով առյուծին վտարում են Աֆրիկայից: Ամբողջ կյանքով-ն այստեղ **ցմահ**-ն է:

- «Երբ հաղթեմ քեզ ու դառնամ առյուծների առաջնորդը, *դու կկարողանաս ավելի շատ ժամանակ անցկացնել*»:

Պետք էր թարգմանել այսպես. «Երբ հաղթեմ քեզ ու դառնամ առյուծների առաջնորդը, **դու ավելի շատ ազատ ժամանակ կունենաս**»:

- «Հետույքս որպես *աղա՛նդ*», - հուզված հարցնում է զեբրը, երբ առյուծը բնագդաբար կծում է նրան:

Աղանդը իշխող եկեղեցու դավանանքից շեղվող կրոնական ուսմունք է: Պարզ է, որ այստեղ խոսքը **աղանդերի՝** ճաշից հետո մատուցվող թեթև ուտելիքի մասին է:



Շրեկ կանաչ հսկան հայերեն վատ է խոսում

Ո՞վ է այս անձոռնի հսկան, որ գերել է հարյուր հազարավոր մարդկանց: Նրա մասին պատմող լայնամետրաժ մուլտֆիլմը կինոարտադրության պատմության մեջ առաջինն էր, որ արժանացավ «Օսկար» մրցանակի:

Բոլոր ժամանակների ամերիկյան լավագույն մուլտֆիլմերի տասնյակի մշտական բնակիչ «Շրեկի» հերոսը՝ նույն ինքը՝ ճահճի բնակիչ Շրեկը, առաջին հայացքից թույլ չի տալիս ենթադրել, որ մի քանի կադր անց կարող է հմայիչ դառնալ, մուլտֆիլմն էլ, հենց ի՛ր պատճառով՝ սիրելի: Դա կարող է վկայել և հայ հանդիսատեսը, եթե դիտելիս կրկնօրինակված հայերենը չխանգարի:

Խոսքը, հասկանալի է, լեզվական սխալների մասին է, որոնցից խուսափելու դեպքում առավել գնահատելի կլինեք դերասանական կազմի բավական լավ աշխատանքը, պատշաճ ձայնադրումը:

- «Հեյ, գիտե՞ս, թե նա ինչ կարող է անել *քեզ հետ*: Կադա ոսկորներդ», - ասում է զինվորը Շրեկի մասին: Եվ ապա՝ «Շրեկ, ի՞նչ ես արել *արքայադստեր հետ*»:
«Զգիտեմ ինչ էր եղել *ինձ հետ*»: «Նայիր, թե ինչ է արել *քեզ հետ*»: «Շրեկ, ի՞նչ է եղել *քեզ հետ*»: «Գեղեցիկ թագավորն ի՞նչ է արել *Ֆրոնայի հետ*»:

Միայն այսքանը չէ: **Հետ** կապի այս անհեթեթ գործածությունը մուլտֆիլմի բոլոր մասերում անդադար ականջ է ծակում: Սա հայերեն չէ՛: Այս լեզվական կառույցի կարիքը հայերենը չունի: Հանե՛ք այս կապը բոլոր մեջբերումներիցու կտեսնեք, որ խոսքը կդառնա ավելի հասկանալի, ավելի գեղեցիկ և, եթե կարելի է ասել՝ ավելի հայերեն: Իսկ երբ շատախոս իշուկը Շրեկին ասում է. «Դու ինձ հետ լավ չես վերաբերվում», խնդիրը մի քիչ այլ է:

Եթե *վերաբերվում*, ուրեմն դարձյալ առանց հետ-ի: Կամ էլ հետ-ով՝ «Դու ինձ հետ լավ չես *վարվում*»:

- «Ինձ ինչո՞ւ ես հարցնում, *նրանից հարցրու*», - հնչում է ֆիլմում: Ինչ-որ *մեկից* չեն հարցնում:

Ինչ-որ *մեկից* իմանում են: Իսկ հարցնում են ինչ-որ *մեկին*: Ուրեմն՝ «*նրան հարցրու*»: Օրինակ, ինչպես նախադասության առաջին մասում է՝ «Ինձ ինչո՞ւ ես հարցնում»: Միայն կլինե՞ր, եթե ասվե՞ր՝ «Ինձնից ինչո՞ւ ես հարցնում»:

- «Կափսոսա այն օրվա *մասին*, երբ խլեց իմ թագավորությունը»:

Դարձյալ օտար լեզվական կաղապար: Եվ դարձյալ ավելորդ կապ, այս անգամ՝ *մասին*-ը: Բայց այստեղ մի սխալ էլ կա: Ափսո՞ս էր թագավորությունը խլելու օրը: Իհարկե ո՛չ: Ճիշտ է՝ «*Կողջա*, որ խլեց իմ թագավորությունը»: Կամ՝ «*Կանիծի այն օրը*, երբ խլեց իմ թագավորությունը»:

- «*Համար առաջին* հարսնացուն մի բանտարկյալ է»:

Այս սխալի մասին անդադար խոսվում է: Կա՛մ «*համար մեկ*», կա՛մ պարզապես «*առաջին*»: Եվ երբեք ո՛չ «համար առաջին»:

- «Հիմա *խոսքը գնում է* քո, իմ ու ձկնորսության մասին»:

Ո՛չ հիմա, ո՛չ էլ երբևէ խոսքը չի գնում: «Հիմա *խոսքը* քո, իմ ու ձկնորսության *մասին է*»։ ա՛յ սա հայերեն է:

- «Ճիշտ կանես՝ *դիետայի վրա նստես*»:

Նախ դիետան հայերենում (հատուկ) սննդակարգն է, բացի այդ՝ դա մի բան է, որի վրա չեն նստում: Դրան *հետևում են* կամ *պահպանում են* այն:

- «Հին վերքս իրեն զգացնել տվեց»:

Զգացնել պատճառական բայի հետ *տալ (տվեց)* բառն ավելորդ է: *Զգացնել*՝ նույնն է՝ *զգալ տալ*: Երկուսն էլ ճիշտ են, իսկ մուլտֆիլմում հնչած *զգացնել տալ*-ը՝ սխալ:

- «Ես *կանացի* ներքնազգեստ եմ *կրում*»:

Ոչ թե *կանացի*, այլ *կնոջ*: Ոչ թե *կրում*, այլ *հագնում*:

- Շրեկը նայում է միաչքանու երեխային ու նրա հորն ասում է. «Աչքը քեզ է նման»:

Զագուկի աչքը չէր կարող հորը նման լինել: Ճիշտ է՝ «Աչքը քոնին է նման»:

➤ «Արիքանդենք էս խնջույքը»:

Տեսնես երեխաներն ի՞նչ են մտածում այս արտահայտությունը լսելիս: Հասկանո՞ւմ են, որ խոսքը **խնջույքը տապալելու** մասին է: Իսկ ինչպե՞ս է արձագանքում հայերեն մտածող ունկնդրի միտքը, երբ «**դու ճիշտ չհասկացար**»-ի փոխարեն լսում է՝ «**ամեն ինչ այդպես չէ**»:

Միայն այս մուլտֆիլմում չէ, մենք եթերից անընդհատ ենք լսում այս և նման արտահայտություններ: Առաջին պահին կարող է չզգանք էլ, որ մեր լսած խոսքը հայերեն չէ, վատ հայերեն է, կարող ենք և չկարևորել այս հրապարակման մեջ տեղ գտած-չգտած բազում լեզվական սխալներ, մտածենք, որ պետք չէ գերազնահատել դրանց բացասական ազդեցությունը, բայց իսկապե՛ս այդպես չէ:



Մենք էլ եղանք «Մոլորակ հմ. 612»-ում

Մենք «այցելեցինք» Հանրային հեռուստաընկերության «Մոլորակ հմ. 612» մանկապատանեկան հաղորդաշար:

Հերոսները Անտուան դը Մենթ-Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը» գրքի գլխավոր կերպարներն են: Օդաչուն ու փոքրիկ իշխանը հեռադիտակով կապվում են այլ աշխարհների հետ, իմանում իրենց ու հեռուստադիտողին հետաքրքրող հարցերի պատասխանները: Մտահղացումը լավն է, բայց հաղորդաշարի լեզուն ընդհանուր առմամբ գրավիչ չէ: Հերոսների խոսքը չոր է, անհետաքրքիր: Հումորը, լեզվատրամաբանական հնարքներն իսպառ բացակայում են: Առկա են նաև բազմաթիվ լեզվական սխալներ: Ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

➤ Փոքրիկ իշխանն ասում է. «Այնպե՛ս շարիր, որ **խորովելուց** չընկնի»:

Բանավոր խոսքում տարածված այս սխալը հարիր չէ եթերի լեզվին: Ճիշտ է՝ «Այնպե՛ս շարիր, որ **խորովելիս** չընկնի»:

➤ Բայց ահա մեր հերոսները ավելի՛ են խճճվում բայաձևեր ընտրելիս: «Սա պահենք, որ հենց մոլորակը **զարդարելուց լինենք**, այն ինչ-որ տեղ **կփակցնենք**»:

Ճիշտ է՝ «Սա պահենք, որ հենց մոլորակը *գարդարելիս* լինենք (ավելի լավ է՝ հենց մոլորակը *գարդարենք*), ինչ-որ տեղ *փակցնենք*»:

- «Կվերցնենք մատիտը, մի *կետ կգծենք*», -ասում է օդաչուն՝ ինչ-որ հմտության հետ միասին լեզվական սխալ փոխանցելով մանուկ ունկնդրին:

Կետը չեն գծում: Ճիշտ է՝ «Կվերցնենք մատիտը, մի *կետ կդնենք*»:

- «Կմիացնենք մեր *բամբակե ապարատը*»:

«Բամբակե» նշանակում է՝ «բամբակից պատրաստված», մինչդեռ այստեղ խոսքը բամբակ պատրաստող սարքի մասին է: Իսկ ահա «ապարատ» բառը հայերեն համարժեք ունի: Պետք էր ասել. «Կմիացնենք մեր *բամբակի սարքը*»:

- «Կա մի ձմեռային սպորտաձև, *ուր* չմուշկներ են հարկավոր»:

Այս ձևակերպումը հայերեն չէ: Ճիշտ է՝ «Կա մի ձմեռային սպորտաձև, *որի* *համար* չմուշկներ են հարկավոր»:

- «Ֆիզիկական *բարդ* պատրաստվածությունն է պահանջում այս մարզաձևը»:

Պատրաստվածությունը չի կարող լինել բարդ: Այն կարող է լինել *լուրջ* և այլն:

- Փոքրիկ իշխանն ասում է. «Արի խնդրենք իմ տարեկիցներից մեկին, թող ավելի *հավաքված* և հետաքրքիր պատմի այդ մասին»:

«Հավաքված»-ն այստեղ ճիշտ չէ: Ճիշտ կլիներ ասել՝ *մանրամասն, ամբողջական* և այլն:

- «Շների քիթը տարբերվում է *մերինից*»:

Մերինը, քոնինը խոսակցական լեզվում հանդիպող սխալ ձևեր են: Չի կարելի դրանք եթերից հնչեցնել: Չէ՞ որ երեխաները եթերի խոսքը ընկալում են որպես հանձնարարելի: Ճիշտ է՝ «Շների քիթը տարբերվում է *մերից*»:

- «Արի *նայենք*, թե նրանք ինչ են մտածում այս ամենի մասին»:

Ոչ թե *նայենք*, այլ *տեսնենք*: *Նայել* նշանակում է հայացքն ուղղել ինչ-որ բանի, իսկ *տեսնել* բառի մեջ իմանալու, հասկանալու, տեսողությամբ ընկալելու իմաստը կա:

- Փոքրիկ իշխանը կրկնում է նաև այն սխալներից մեկը, որի մասին բազմիցս խոսել ենք: Նա ասում է. «Իրականում *այդքան էլ* դժվար չէ քաղցր բամբակ պատրաստելը»:

Այս մասին շատ է խոսվել: Ոչ թե *այդքան էլ*, այլ *այնքան էլ*: Սա լեզվական կայուն կաղապար է: Ուրեմն՝ «Իրականում *այնքան էլ* դժվար չէ քաղցր բամբակ պատրաստելը»:

- Օդաչուն փոքրիկ իշխանին ցույց է տալիս լամպը ու պատմում նրա կառուցվածքի մասին. «Տեսնո՞ւմ ես այս կտորը: Նրա միջոցով նավթը ներքևից բարձրանում է վերև»:

Այստեղ լեզվական սխալ չկա: Բայց կարելի էր օգտվել առիթից ու *այս կտորը* ասելու փոխարեն երեխաներին սովորեցնել *պատրույգ* բառը:

Մենք ներկայացրինք հաղորդաշարի լեզվական սխալներից մի քանիսը միայն: Նկատի ունենանք, որ սա վաղ պատանեկան տարիքին ուղղված հաղորդաշար է, որպիսիք հայկական եթերում, ինչպես ասում են՝ վերջին հորիզոնականում են:



Ինչպես է խոսում «Երգիր, թե կարող ես»-ը

«Արմենիա» հեռուստատեսության «Երգիր, թե կարող ես» հաղորդաշարը պարզապես ժամանցային չէ: Եթե ուզում ես անորակ երաժշտությունից կայուն գիտելիքներ ձեռք բերել, այս խաղ-նախագիծը չի հիասթափեցնի: Այստեղ կարող ես նաև լեզվական բազմաթիվ սխալ ձևերի ծանոթանալ, անգամ անգիր անել, քանի որ դրանք անընդհատ կրկնվում են: Իսկ կրկնողը հաղորդաշարը վարողն է՝ Վաչե Թովմասյանը: Նրա խոսքից դուրս գրված սխալներից մի քանիսը մի անգամ էլ մե՛նք կկրկնենք, իհարկե այլ՝ մատնացույց անելու նպատակով, որպեսզի հեռուստադիտողը կարողանա խուսափել դրանցից:

Հաղորդավարը հաճախ է դիմում օտար բառերին, և այն էլ՝ ռուսական արտասանությամբ՝

ֆանտաստիկ (այստեղ՝ *գարմանալի*), պոզիժիվ (*դրական*), սիմպաժիչնի (*համակրելի*) և այլն:

Սխալների մեջ մեծ տեղ են գրավում նաև ռուսական լեզվական կադապարները:

- «*Ո՞նց ես կարծում*՝ քանի՞ միավոր կկորցնես», - հնչում է հարցը՝ ուղղված հերթական մասնակցին:

Ոնց կամ ինչպես (как) կարծում են ռուսերենում: Հայերենում ճիշտ է՝ «*Ի՞նչ ես կարծում*՝ քանի՞ միավոր կկորցնես»:

- Կամ՝ «Այս *ակնոցները* կփրկեն մեր մասնակիցների աչքերը»:

Ռուսերենում է մեկ ակնոցը հոգնակի (անեզական)՝ очки: Հայերենում «ակնոցներ» ասում են մեկից ավելիին: Ուրեմն պետք էր ասել՝ «Այս *ակնոցը* կփրկի մեր մասնակիցների աչքերը»:

- «Ես ուզում եմ, *որպեսզի* մեր հովանավորին ներկայացնեմ»:

Որ շաղկապի փոխարեն *որպեսզի*-ն գործածելու մասին շատ ենք խոսել: Սա ռուսերեն чтоды-ի «մեղքով է»: Ճիշտ կլիներ՝ «Ես ուզում եմ, *որ* մեր հովանավորին ներկայացնեմ»: Ցանկալի կլիներ՝ «Ես ուզում եմ ներկայացնել մեր հովանավորին»:

- Հաղորդաշարը ողողված է *հետ*-ի և *մոտ*-ի՝ ռուսերենին հատուկ կապային կառույցներով, ինչպես՝ «*Մեզ մոտ* Օնոն ջրվեց հինգ անգամ», «Հիմա կտեսնենք, թե *քեզ հետ* ինչ կպատահի» և այլն:

Ճիշտ կլիներ՝ «*Մեր խաղում* Օնոն ջրվեց հինգ անգամ», «Հիմա կտեսնենք, թե *քեզ* ինչ կպատահի»:

- Շատ են նաև այնպիսի լեզվական սխալները, որտեղ ռուսերենը, այսպես ասած, մեղք չունի: Ահա դրանցից մի քանիսը.
- «*Կանացի* երաժշտական տրամաբանությունը այժմ մենք կտեսնենք»: Այս տարածված սխալի մասին շատ է գրվել ու խոսվել:

Ճիշտ չէ *կանանց* կամ *կնոջ* բառերի փոխարեն *կանացի* բառը գործածելը: Պետք էր ասել՝ «*Կնոջ* երաժշտական տրամաբանությունը այժմ մենք կտեսնենք»:

- «*Եվ նաև* ուզում եմ շնորհակալություն հայտնել...»:

Սա նույնպես տարածված սխալ է: *Նաև*-ի մեջ *և*-ը առկա է, ուստի այս շաղկապներից մեկն ավելորդ է. կա՛մ «*և* ուզում եմ», կա՛մ «*նաև* ուզում եմ»:

- Անընդհատ լսում ենք՝ «էս թմից», «իր թմի համար»:

Թիմ բառը ընդունված է չինյունափոխել՝ **թիմից, թիմի**:

- Հաճախադեպ սխալներից է՝ *հույսով եմ*:

Ճիշտ է, ասում ենք «հույսով անել», «հույսով սպասել» և այլն, բայց **հուսով եմ**-ը քարացած լեզվական կառույց է, ընդունված է հնչյունափոխել:

- Հաղորդաշարում, բնականաբար, հաճախ են հնչում **երաժշտություն, երաժշտական** բառերը՝ սխալ ձևով՝ *երաշտություն, երաշտական*:

Հաղորդաշարի մասնակիցները նույնպես հաճախ են թույլ տալիս լեզվական սխալներ:

Դրանց չենք անդրադառնա: Բայց չենք կարող չանդրադառնալ կադրից դուրս հնչող, խաղի կանոնները ներկայացնող խոսքին, որը, ի տարբերություն հաղորդավարի խոսքի, նախօրոք գրված-խմբագրված է ու պետք է որ անսխալ լիներ: Պատկերը, սակայն, միանգամայն այլ է:

- «Յուրաքանչյուր մասնակցի տրվում է 60 *վայրկյան ժամանակ*՝ բացատրելու, և 60 վայրկյան՝ անունը կոսահելու համար»:

Նախ՝ **ժամանակ** բառն ավելորդ է, քանի որ վայրկյանն այլ բան չէ, քան ժամանակ, բացի դրանից՝ այստեղ տրամաբանական սխալ կա: Տեքստից ենթադրվում է, որ յուրաքանչյուր մասնակցի ընդհանուր հաշվով տրվում է 120 վայրկյան: Իրականում «Մասնակիցներից մեկին տրվում է 60 վայրկյան՝ բացատրելու, մյուսին՝ 60 վայրկյան՝ անունը կոսահելու համար»: Կամ՝ «Մասնակիցներից յուրաքանչյուրին տրվում է 60 վայրկյան: Մեկին՝ բացատրելու, մյուսին՝ անունը կոսահելու համար»:

- «Նրանց խնդիրն է *միմյանց համադրելով* նկարները՝ կոսահել պատկերները»:

Համադրել նշանակում է միմյանց կողքի դնելով համեմատել, ուստի **միմյանց** բառն այստեղ ավելորդ է: Ճիշտ է՝ «Նրանց խնդիրն է **համադրելով** նկարները՝ կոսահել պատկերները»:

- «Նա պետք է երգերը կատարի այնպես, որ մյուս մասնակիցը գուշակի *այն*»:

Այստեղ թվային անհամաձայնություն կա: Ճիշտ է՝ «Նա պետք է երգերը կատարի այնպես, որ մյուս մասնակիցը գուշակի **դրանք**»:

Մենք ներկայացրինք հաղորդաշարի անհամար լեզվական սխալներից մի քանիսը միայն: Ո՛չ լեզվական, ո՛չ երաժշտական իմաստով հաղորդումն ուսանելի չէ:



Նորահայտ սխալներ

Խոսենք այն սխալների մասին, որոնք վերջին շրջանում են մուտք գործել հայկական լրատվամիջոցներ ու տարածվել են այդ ճանապարհով:

- Նոր չէ պայքարը ավելորդ **ն**-ի դեմ. ամանչել, կապնվել, կամանց և այլն: Բայց խոսենք մի սխալի մասին, որը վերջին շրջանում է տարածվել: Ո՞րն է ճիշտ. *միննույն է*, թե՞ *միննույնն է*:

Դիմենք բառարաններին: Նրանք ասում են, որ *միննույն*-ը *նույն*-ի հոմանիշն է, դրա սաստկական իմաստն արտահայտող բառ, այսինքն՝ «բոլորովին նույնը», «միանգամայն նույնը»: «Ինձ համար այդ երկուսը նույնն են»/«Ինձ համար այդ երկուսը միննույնն են»: Այստեղ խնդիր չկա: Բայց ահա «Ինձ համար միննույն է» («Ինձ համար մեկ է») վերաբերական արտահայտության մեջ այս *միննույն* բառը ճիշտ է գրել ու արտասանել մեկ **ն**-ով: Նախկինում այդպես էլ արվում էր: Վերջին շրջանում է այս սխալը սողոսկել մեր խոսք:

- Ավելորդ **ն** է հնչում նաև *ինչպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի* դերանունների վերջում:

Եթե միննույն-ը վերոնշյալ իմաստներից մեկով կարող է վերջում երկու **ն**-ով գրվել, ապա այս բառերը ոչ մի պարագայում չեն կարող երկու **ն** ունենալ: Մինչդեռ եթերից հաճախ լսում և մամուլում կարդում ենք. «*Ինչպիսի՞նն* են ձեր կանխատեսումները», «Ահա *այսպիսիինն* էր մեր այսօրվա եթերը», «Մի՞թե *այդպիսինն* են առաջարկները», «Պայմաններն *այնպիսինն* են, որ դժվար է համակերպվելը» և այլն: Ավելորդ **ն**-ն նշված դերանունների հոգնակիներում էլ է հայտնվում: Ահա՝ «*Այդպիսիները* տեղ չունեն մեր հասարակության մեջ» և այլն: Իհարկե, ճիշտ են՝ *այդպիսիները, այսպիսիները...* Ճիշտ են նաև *ինչպիսիք, այսպիսիք, այնպիսիք* նն ձևերը:

➤ Մի հաճախադեպ սխալ էլ կա, որը նախկինում երբեք չէր հանդիպել:

Դա *մենակով* բառն է:

Խոսակցական լեզվի ամենացածր մակարդակներից այն մտել է զանգվածային լրատվամիջոցներ, ապա ավելի լայն տարածում ստացել: Ածականի կամ մակբայի պաշտոն կրող այս բառին գործիական հոլովի վերջավորություն «վերագրելը» կոպիտ սխալ է: «Ես իմ գործը *մենակ* կանեմ»: «Բոլորը խմբով էին, իսկ նա *մենակ* էր եկել»: Մոռանանք այդ սխալ *մենակով*-ի մասին: Վտարենք նրան հատկապես եթերից, որտեղ այն ավելի ու ավելի հաճախ է հանդիպում:

Հայերենում *է* տառը երբեք «հենց այնպես» չի հայտնվում բառամիջում կամ բառավերջում: Այն կա՛մ բառի սկզբնատառ է, կա՛մ բառարմատ, ինչպես *մանրէ* բառում է: Այստեղ երկու արմատ կա՝ «մանր» և «է» (էակ): Այս *է*-ն արմատի վերջնատառ չէ, ուստի բառաբարդման ժամանակ չի սղվում: Բայց ահա մեր գովազդներում *մանրէազերծել* բառի փոխարեն հաճախ լսում ենք՝ *մանրազերծել (մանրազերծված)*: Եվ մի ուղղախոսությանն սխալ. հատկապես եղանակի տեսության որոշ մեկնաբաններ *Լոռի* ասելու փոխարեն ասում են *Լորի*, իսկ, ասենք, *Արմավիրի* փոխարեն՝ *Առմավիր*: Եվ չմոռանանք. *երջանիկ* բառը արտասանվում է ոչ թե *երչանիկ* կամ *եռչանիկ*, այլ այնպես, ինչպես գրվում է:



Անկոտրում սխալներ

Հանրային խոսքն ուսումնասիրելիս Լեզվի կոմիտեի ուշադրության կենտրոնում ի սկզբանե եղել ու մնում են զանգվածային լրատվամիջոցները՝ որպես լավ ու վատ խոսքն ամենից արագ տարածողներ: Ժամանակի ընթացքում որոշ լեզվական սխալներ մեր աշխատանքի շնորհիվ ընկրկել էին: Տպագիր մամուլը բավական մաքրվել էր լեզվական սխալներից, իսկ եթերը՝ նաև հին՝ ռուսական և նոր՝ ամերիկյան առողջանությամբ հայերենից: Բայց ահա էլեկտրոնային մամուլը լեզվի հարցում գործեց արագ սննդի կետերի տրամաբանությամբ:

Համացանցը սխալների մեծ հոսք բերեց: Բայց այժմ խոսենք այն լեզվական ձևերի մասին, որոնք եղել են թղթի մամուլի, գուցե մագաղաթի տիրապետության ժամանակներում ու դեռ պահպանում են իրենց անզիջում, սխալական գոյությունը:

➤ Հայկական եթերն ու մամուլը համառորեն չի լքում *մտահաղացում* բառը:

Այս սխալը քննարկվել է Լեզվի կոմիտեի բազմաթիվ ամփոփագրերում, անդադար գրվել ու խոսվել է սրա մասին: Խոսենք մի անգամ ևս: *Միտք* և *հղանալ* (վերջինս այստեղ նշանակում է՝ *ծագել, ծնվել, առաջանալ*) բառերը *ա* հոդակապի հետ կազմում են *մտահղացում* բառը: Հիշենք, որ հայերենում *հաղանալ* (*հաղացում*) բառ չկա:

➤ *Բանն այն է*, - ասում և գրում են լրատվամիջոցները, եթե ճիշտ են խոսում հայերեն: Բայց ահա շատերը ոռուսերեն *дело в том-ը* «պատճենիչով թարգմանում են» ու «Բանն այն է»-ն դառնում է *բանը նրանում է*: Այս արտահայտությունն անընդհատ կարելի է լսել հեռուստահաղորդումներում, կարդալ մամուլում: Բանն այն է, որ այն անխնա քննադատվել է, բայց շարունակում է գոյատևել:

➤ *Ինչպե՞ս է անունդ*: Ուզում ես պատասխանել. «Լավ է, ոչինչ»: Դեռ քանի՞ տարի *ի՞նչ է անունդ/անունդ ի՞նչ է* հարցը պիտի հնչի սխալ ձևակերպմամբ: Այս չարչրկված սխալը հանդիպում է ամենուրեք, անգամ գեղարվեստական ֆիլմերում, և դա ներքին չէ:

➤ Արդեն խոսել ենք *հիշեցնել տալ, մոռացնել տվեց, աշխատացնել տուր* և այլ արտահայտությունների մասին, բայց այս սխալը նույնպես շարունակում է իր գոյությունը:

➤ Պատճառական բայերը չեն կարող գործածվել *տալ* բայի հետ, քանի որ դրանց *ացն, եցն, ցն* ածանցները ունեն ինչ-որ բան անել տալու իմաստը:

Հիշել տալ-ը հենց *հիշեցնել*-ն է, և պետք չէ ասել կամ գրել *հիշեցնել տալ*: Ճիշտ է՝ *մոռացրեց* կամ *մոռանալ տվեց, աշխատեցրո՜ւ* կամ *աշխատե՛լ տուր* և այլն:

➤ *Կրկին անգամ*:

Ճիշտ է *կրկին*, այլ ո՛չ *կրկին անգամ*, քանի որ *կրկին* նշանակում է *ևս մեկ անգամ*:

Անգամ-ի իմաստը կա *կրկին* բառի մեջ, և այն կրկնելու հարկ չկա:

- Շատերը համառորեն **ամսական** բառի փոխարեն գրում ու ասում են **ամսեկան**, **օրական**-ի փոխարեն՝ **օրեկան**:

Մեղավորը **տարեկան** բառն է: Նրա նմանողությամբ են նախորդ երկուսը սխալ ձևով գործածվում: Բանն այն է, որ այս դեպքում բառավերջի **ի**-ն **ական** ածանցի **ա**-ին հանդիպելով (տարի+ական) հնչյունափոխվում է **ե**-ի: Իսկ ահա **ամիս** և **օր** բառերի դեպքում դա տեղի չի ունենում, ուստի ճիշտ է գրել և ասել **ամսական**, **օրական**:

- Գեղեցիկ են գրաբարից եկած **ի** նախդիրով ձևերը՝ **ի վերուստ**, **ի գիտություն**, **ի հեճուկս**: Այս նախդիրը հաճախ դրվում է **շնորհիվ** բառին, երբ այն նախադասության մեջ առաջադաս է՝ **ի շնորհիվ քեզ**, **ի շնորհիվ բոլորիս ջանքերի** և այլն:

Շնորհ բառի գրաբարյան այս հոլովաձևը **ի** նախդիրի «կարիքը չի զգում», հետևաբար ճիշտ է այն ասել և գրել առանց նախդիրի, ինչպես որ հետադաս դիրքի դեպքում է՝ «նրանց օգնության շնորհիվ», «շնորհիվ նրանց օգնության»:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Պատասխանները՝ Գուրգեն Միքայելյանի

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ինչ-ն չ, թե՛ ինչ որ. ո՞րն է ճիշտ

Այս բառերն ունեն տարբեր իմաստ ու կիրառություն: **Ինչ-որ**-ը անորոշ դերանուն է և, ինչպես մյուս անորոշ դերանունները, ցույց է տալիս անորոշ անձ, առարկա կամ անձի ու առարկայի անորոշ հատկություն, քանակ: Այլ կերպ ասած՝ այն արտահայտում է անորոշություն: Օրինակ՝ **ինչ-որ մարդ**, **ինչ-որ գիրք**, **ինչ-որ տեղ**:

Ինչ որ-ը նույնպես դերանուն է՝ կազմված **ինչ** և **որ** բառից, սակայն, ի տարբերություն **ինչ-որ**-ի, հարաբերական դերանուն է և ունի այլ գործառույթ:

Ահա այս պատճառով տվյալ բառերը գրելիս մի դեպքում գծիկ դրվում է, մյուս դեպքում՝ ոչ:

Կողմնորոշվելու համար, թե ո՛ր դեպքում գործ ունենք անորոշ, ո՛ր դեպքում հարաբերական դերանվան հետ, կարող ենք փորձել այդ բառերը գործածել առանց *որ* բաղադրիչի: Եթե դա հնարավոր է, ուրեմն գործ ունենք հարաբերական դերանվան հետ, եթե ոչ՝ անորոշ: Օրինակ՝ *Արա այն, ինչ որ ասում եմ / Արա այն, ինչ ասում եմ: Մոտեցավ ինչ-որ մարդ / Մոտեցավ ինչ...*

Քանի որ, ինչպես տեսնում ենք, վերջին դեպքում առանց *որ*-ի նախադասությունը շարունակել հնարավոր չէ, բնականաբար գործ ունենք անորոշ դերանվան հետ:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ճի՞շտ է, երբ կոշիկի տակին ասում են տակացու

Տակացու բառը կազմված է *տակ* արմատից և *-ացու* վերջածանցից:

Ածանցները նույնպես ունեն իմաստ, որը հաղորդում են այն բառին, որին ավելանում են: Նշանակում է՝ հարցին պատասխանելու համար նախ պետք է ճշտենք, թե ինչ իմաստ ունի *-ացու* վերջածանցը:

Ընդունված է ասել, որ այն ունի «մի բանի համար սահմանված լինելու, մի բան դառնալու ենթակա» բառակազմական ընդհանուր իմաստ: Հիշենք այդ ածանցով կազմված բառեր՝ *հարսնացու, փեսացու, սերմացու, տիրացու, մահկանացու*:

Նշանակում է՝ կոշիկի տակացուն այն է, որը կոշիկի տակ դեռևս չի դարձել. նախատեսված է, որ դառնա: Օրինակ՝ շուկայում կարող են վաճառվել կոշիկի տակացուներ, որպեսզի կոշկակարը գնի և կոշիկ կարելիս կամ նորոգելիս օգտագործի: *Կոշիկի տակացու* ասելը ճիշտ է նման դեպքերում: Իսկ երբ խոսքը արդեն կոշիկի տակ դարձած հատվածի մասին է, բնականաբար, դա տակացու անվանելը ճիշտ չէ: Այդ դեպքում պետք է գործածել *տակ* բառը: Չմոռանանք նաև *ներքան*-ի մասին...

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Բարձրացրի՞, թե՞ բարձրացրեցի

Այս հարցը առաջանում է հաճախ, և սխալներն էլ բավական շատ են:

Նախ հիշեցնենք, որ պատճառական են կոչվում այն բայերը, որոնք ունեն *ացն, եցն, ցն* ածանցները: Օրինակ՝ *խաղացնել, ուտեցնել, հագցնել*:

Ոմանց թվում է, թե սովորաբար գրական, ճիշտ են լինում այն ձևերը, որոնք, ոչ գիտական լեզվով ասած, ավելի երկար են: Այդպես է թվում նաև այս բայերի անցյալ կատարյալ և հոգնակի հրամայական ժամանակաձևերը կազմելիս: Այսինքն՝ որ ճիշտ են, օրինակ, *բարձրացրեցի, բարձրացրեցինք, նստեցրեցի, նստեցրեցիք, նստեցրեցե՛ք* ձևերը: Հերքելով այս թյուր կարծիքը՝ ասենք, որ ժամանակակից հայերենում ճիշտ են կարճ ձևերը:

Պատճառական բայերի կատարյալի հիմքը կազմվում է **ն/ր** փոփոխությամբ (բարձրացնել-բարձրացն/բարձրացր): Այս բայահիմքին ավելանում են *ի, իր, եց, ինք, իք, ինք* վերջավորությունները, և ունենում ենք, օրինակ՝ *բարձրացրի, բարձրացրիր, բարձրացրեց, բարձրացրինք, բարձրացրիք, բարձրացրին* ձևերը:

Նույն բայահիմքին է ավելանում նաև հոգնակի հրամայականի –*եք* վերջավորությունը: Ունենում ենք, օրինակ՝ *խաղացրե՛ք, հագեցրե՛ք, հագցրե՛ք* ձևերը:

Թեև պատճառական բայեր չեն, սակայն նրանց ձևային նմանակությամբ նույն ձևով են խոնարհվում նաև *լցնել, հարցնել, վերցնել* բայերը:

Այսպիսով, հիշենք. ճիշտ է ասել (գրել), օրինակ՝

- *բարձրացրի (բարձրացրինք),*
- *խաղացրի (խաղացրինք),*
- *խոսեցրի (խոսեցրինք),*
- *հագցրի (հագցրինք),*
- *հարցրի (հարցրինք),*
- *նստեցրի (նստեցրինք),*

այլ ոչ՝ *բարձրացրեցի (բարձրացրեցինք), խաղացրեցի (խաղացրեցինք) և այլն*:

Հոգնակի հրամայականի դեպքում՝

- *բարձրացրե՛ք,*
- *խաղացրե՛ք,*
- *խոսեցրե՛ք,*
- *հագցրե՛ք,*
- *հարցրե՛ք,*
- *նստեցրե՛ք:*

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ճի՞շտ է, երբ ասում են՝ գրվածը աղերս չունի իրականության հետ

Հարցի պատասխանը գտնելու համար պետք է պարզել, թե ինչ իմաստներ ունի *աղերս* բառը: Բայց մինչ այդ խոսենք բազմիմաստ և համանուն (նույնանուն) բառերի մասին:

Ինչպես գիտենք, բազմիմաստ են համարվում այն բառերը, որոնք ունեն մեկից ավելի իմաստ: Բազմիմաստ է բառերի մեծ մասը: Օրինակ, *գրիչ* բառը, ըստ բացատրական բառարանների, ունի վեց իմաստ: Նշանակում է՝ *թանաքով գրելու գրենական պիտույք, հին ձեռագիր արտագրող, գրագիր* և այլն:

Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» («Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, էջ 516-517) նշված է չափ բառի քսանինը իմաստ:

Բազմիմաստ բառերը չպետք է շփոթել համանունների հետ: Հիշեցնենք. սրանք այն բառերն են, որոնք ձևով նույնն են, իմաստով՝ տարբեր: Այլ մեկնաբանությամբ՝ համանունները հնչունական նույն կազմն ունեցող, նույն ձևով գրվող, բայց **տարբեր իմաստներ** ունեցող **տարբեր բառեր** են: Օրինակ՝

1. բազուկ (մարմնի մաս).
2. բազուկ (ձակնդեղ):

Աղերս-ի դեպքում նույնպես ունենք նույն գրությամբ ու արտասանությամբ տարբեր բառեր:

Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1969, հատոր 1, էջ 38)՝ դրանք նշանակում են.

ԱՂԵՐՄ¹, 1. *աղաչանք, պաղատանք, աղերսանք*: Ոչ մի խնդիր և ոչ մի աղերս չէր կարող փափկացնել նրա սիրտը (Ա. Բակունց):

ԱՂԵՐՄ², *կապ, առնչություն*: Այդ երկու երևույթների միջև ոչ մի աղերս չկա:

Էդ. Աղայանն այս իմաստներին ավելացնում է նաև *հարաբերություն-ը*:

Դառնանք տրված հարցին: Կարո՞ղ է արդյոք գրվածը աղերս (կապ, առնչություն) չունենալ իրականության հետ:

Իհա՛րկե:

Ի դեպ, ըստ լեզվաբան Վ. Առաքելյանի, *աղերս* բառը նախապես նշանակել է հույս:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ձե՞րձ, թե՞ գուրկ

Նախ բերենք այս բառերի գործածության մի քանի օրինակ՝ վերցված գեղարվեստական գրականությունից.

«Այժմ դուք *զեքձ* եք այդ սպանիչ *ախտից*» (Մերո Խանգաղյան):

«Զպետք է թաքցնել, որ այդ իրականությունը *զեքձ* չի եղել *թերություններից*» (Սիլվա Կապուտիկյան):

«.... նա վայելում է մի քանի ուրիշ *բարիքներ*, որոնցից *գուրկ* են թե՛ իրավաբանը, թե՛ երկրաչափը և թե՛ ճարտարապետը» (Մուրացյան):

«Միրտ ունեինք բայց դեռևս *գուրկ* էինք գրական *վարպետությունից*» (Վախթանգ Անանյան):

Ինչպես տեսնում ենք, առաջին երկու նախադասության մեջ, որտեղ խոսքը ախտի ու թերությունների մասին է, գործածված է *զեքձ* բառը, մյուս երկուսում՝ բարիքների ու վարպետության հետ՝ *գուրկ*-ը:

Կարծում ենք՝ այս բառերի իմաստային տարբերությունն արդեն կարելի է զգալ:

Եթե ասենք կարճ, *զեքձ* լինում են վատ բանից, *գուրկ*՝ լավ:

Այս հարցին անդրադարձել է նաև լեզվաբան Պետրոս Բեդիրյանը: Ըստ նրա՝ *սրանք հոմանիշ բառեր են, որոնք «մի բանից հեռու լինելու, մի բան չունենալու» ընդհանուր նշանակությունը ունեն, որոնք, սակայն, հստակորեն տարբերակվում են կիրառության նրբերանգներով:*

Ջերծը գործածվում է «վատ, մերժելի բանից հեռու մնալու, առանձնացնելու» իմաստով (չարիքից, վտանգից, դժբախտությունից), **գուրկը**՝ «որևէ լավ հատկություն կամ անհրաժեշտ, ցանկալի բան չունենալու» (բարիք, աշխատանք, ունեցվածք, խելք):

Այսուհանդերձ, նկատենք, որ երկու բառերն էլ երբեմն կարող են կիրառվել այնպիսի դեպքերում, երբ խոսք չկա լավ կամ վատ, դրական կամ արատավոր երևույթների մասին: Դա *գուրկ*-ի պարագայում ակնհայտ է հատկապես գիտական խոսքի մեջ: Օրինակ՝ «Ձայնարկությունները *գուրկ* են *խոսքիմասային իմաստից* կամ *ունեն խոսքիմասային զրո իմաստ*» (Հովհաննես Բարսեղյան):

Ահա այդպիսի օրինակներ նաև *զերծ*-ի գործածության.

«Այդ հնարանքը՝ *երազը, զեհենային նենգության անկրկնելի մի նմուշ է, և նրա օգտագործումը՝ զերծ ամենայն պատասխանատվությունից*» (Վահրամ Փափագյան):

«... ի՞նչ խղճով պատժենք այս անմեղներին, որոնց *Աստված զերծ է համարում ամեն մի պատասխանատվությունից*» (Վարդգես Պետրոսյան):

«*Լուսինը զերծ է մթնոլորտից, այնտեղ չկա օդ, չկա ջուր, չկա քամի ու անձրև....*» (Արտակ Վարդազարյան):

Հիշենք նաև *մաքսազերծ, մաքսազերծել* բառերը, որոնցում *զերծ*-ն ունի «անմեղ»՝ չեզոք նշանակություն:

Բերենք նաև *գուրկ*-ով կազմված բարդությունների օրինակներ, որտեղ այն բառերին տալիս է «լավ բան չունենալու» նշանակություն՝ *ընչագուրկ, ձայնագուրկ, պատվագուրկ, իմաստագուրկ*:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Վերնագրերում պե՞տք է դնել կետադրական նշաններ

Մինչև հարցին պատասխանելը մի անսովոր հարց տանք նաև մենք. կարո՞ղ է վերնագիր ընտրելու հարցում լինել սահմանափակում: Օրինակ՝ պահանջ, որ այն պետք է լինի ընդամենը երկու բառ, կամ՝ որ չպետք է վերնագիր դառնա ամբողջական նախադասությունը:

Ի դեպ, մի ժամանակ «նորաձև» էին դարձել հենց այդպիսի՝ երկար նախադասություններով վերնագրերը: Ընթերցողն ինքն էլ կարող է հիշել գեղարվեստական գործերի այդպիսի վերնագրեր: Դրանք հիմա էլ մամուլում սակավ չեն: Եվ քանի որ նախադեպը կա վաղուց, ասենք, որ մենք էլ առաջիկայում հրապարակելիք մեր հոդվածը մտադիր ենք վերնագրել այսպես. «Կարենին ներել պետք չէ պատժել»:

Կասեք, թե ծեծվա՞ծ նախադասություն է: Դեմ չենք, սակայն եթե նկատեցիք, խնդիրը մենք «բարդացրել» ենք ևս մեկ աստիճանով...

Բայց դա թողնենք և տանք հաջորդ հարցը. ի՞նչ ենք հասկանում այս չկետադրված նախադասությունից:

Ոչի՛նչ: Այնինչ այն ունի չորս իմաստ՝ նայած, թե ինչպես կկետադրենք: Կարդանք այդ տարբերակները.

- «Կարենին. ներել պետք չէ, պատժե՛լ»:
- «Կարենին. ներե՛լ, պետք չէ պատժել»:
- «Կարենին ներել. պետք չէ պատժել»:
- «Կարենին ներել պետք չէ, պատժե՛լ»:

Նախադասության իմաստը այսպես պա՞րզ է: Անշո՛ւշտ: Իսկ ի՞նչ արեցինք դրա համար: Ոչինչ. ընդամենը կետադրեցինք...

Եվ քանի որ դրանից հասկանալի դարձավ նախադասությունը, նշանակում է՝ կետադրական նշանների գործածումն ինքնանպատակ, գրածը «գեղեցկացնելու» համար չէ: Նշանակում է՝ դրանք ոչ թե զարդանախշեր են, այլ լեզվական իմաստակիր միավորներ:

Որ կարելի է ասվածի իմաստը փոխել, անգամ շրջել՝ ընդամենը փոխելով կետադրությունը, նույնիսկ քննարկման հարց չէ, և անիմաստ ենք համարում բերել այդպիսի այլ օրինակներ:

Ինչպես ասացինք, տարօրինակ է, որ ծագել է այսպիսի հարց: Բայց քանի որ ծագել է, ուստի տանք նաև գիտական մեկնաբանություն, թե ինչի՝ համար են կետադրական նշանները:

«... կետադրական նշանները առաջին հերթին ծառայում են գրավոր խոսքի առանձին հատվածների շարահյուսական-կառուցվածքային մասնատմանը, տրոհմանը, որը և նպաստում է բաղադրիչների (բառերի, բառակապակցությունների, նախադասությունների) շարահյուսական, հետևաբար և իմաստային կապերի ճշգրիտ արտահայտմանը» (Գ. Գաբեգինյան, «Ժամանակակից հայոց լեզու», Երևան, 1991, էջ 397):

Մեջբերենք նաև լեզվաբան Ս. Աբրահամյանի խոսքը. *«... գրավոր խոսքն առանց կետադրության՝ համր կամ համարյա համր է, կետադրությունն է այն դարձնում «խոսող»* («Հայերենի կետադրություն», Երևան, 1999, էջ 5):

Ասենք նաև, որ անցյալում գործածվել են շատ քիչ կետադրական նշաններ: Դրանց քանակն ավելացել է հետագայում՝ աստիճանաբար, ինչպես քիչ առաջ ասվեց՝ ճշգրիտ արտահայտելու համար բաղադրիչների իմաստային կապերը: Իսկ այդ իմաստային կապերն ուրիշ էլ որտե՞ղ է հարկավոր արտահայտել առավել ճշգրիտ, եթե ոչ վերնագրերում:

Զրնկենք մոլորության մեջ: Կետադրական նշանների գործածությունը պարտադիր է գրավոր ամեն խոսքում, եթե ցանկանում ենք ասելիքն արտահայտել հստակ, խոսել հասկանալի:

Հիշենք շատերիս հայտնի մի քանի վերնագիր.

- *«Տաղ՝ ձոնված բնությանը»* (Ե. Չարենց).
- *«Դու մի՛ հարցրու. «Միրո՞ւմ ես ինձ»»* (Պ. Սևակ).
- *«Մենք ենք, մեր սարերը»* (Հ. Մաթևոսյան):

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ո՞վ է ամուրին, ո՞վ է այրին

Հարցը տարօրինակ թվաց հավանաբար շատերին:

Ի՞նչ մի հարցնելու բան է: Ո՞վ չգիտի. ամուրին չամուսնացած տղամարդն է, այրին՝ ամուսնուն կորցրած կինը: Հիշենք թեկուզ Վարդան Այգեկցու՝ դեռ դպրոցից ծանոթ «Այրի կին և որդի» առակը:

Բայց արի ու տես, որ մենք որքան էլ համոզված լինենք ասվածում և այս բառերը գործածենք այդ նշանակությամբ, այնուամենայնիվ...

Այնուամենայնիվ, դրանք բազմիմաստ են, իմաստներից մեկով՝ հոմանիշ, *ամուրի-ն* նշանակում է նաև *այրի, այրի-ն*՝ *ամուրի*:

Զարմանալի՞ է: Գուցե: Սակայն այդպես է:

Համոզվելու համար թերթենք բառարանները:

Սկսենք գրաբարից և կարդանք, թե ի՞նչ է գրված Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի բառարանում» (Երևան, 2000).

ԱՄՈՒՐԻ – Դեռևս չամուսնացած տղամարդ կամ կին, այրի մնացած (էջ 49):

ԱՅՐԻ – 1. Ամուսինը մեռած և այլևս չամուսնացած կին, որբնայրի: 2. Կնոջից զրկված և այլևս չամուսնացած տղամարդ (էջ 62):

Նայենք Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» (Երևան, 1969).

ԱՄՈՒՐԻ – 1. Չափահաս տղամարդ կամ կին, որ ամուսնացած չէ: 2. Ամուրիին՝ չամուսնացածին վերաբերող՝ հատուկ (հատոր 1, էջ 61):

ԱՅՐԻ – 1. Ամուսինը մեռած, որբնայրի (մեծ մասամբ կանանց մասին) (հատոր 1, էջ 71):

Այս բառերին գրեթե նույն բացատրությունն է տրված նաև Ստեփան Մալխասյանցի *հայերեն բացատրական* (Երևան, 1944) և Էդուարդ Աղայանի *արդի հայերենի բացատրական* (Երևան, 1976) բառարաններում:

Հարցը, տեսնում ենք, բնավ էլ տարօրինակ չէր, ինչպես թվաց առաջին հայացքից:

Անշուշտ, հարկ է ընդունել նաև, որ ներկայումս *ամուրի*-ն հիմնականում (եթե ոչ միշտ) գործածվում է «*կին չունեցող տղամարդ*», *այրի*-ն՝ «*ամուսնուն կորցրած կին*» իմաստով: Թե ապագան ինչ իմաստներ «կամրագրի» այս բառերին, դրանք կմնան հոմանիշներ, թե ամբողջովին կտարբերակվեն, ցույց կտա ժամանակը:

ՄԵԶ ՀԱՐՅՆՈՒՄ ԵՆ

Հավաքե՛լ, թե՛ հավաքագրել

Քանի որ *հավաքել*-ը գործածության խնդիրներ չի առաջացնում, խոսենք *հավաքագրել* բառի մասին:

Ի՞նչ իմաստներ ունի այն:

Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (Երևան, 1974, հատոր 3, էջ 312)՝ այս բառը նշանակում է. «*Նոր ուժեր հավաքել, նոր ուժեր ցուցակագրել*»:

Ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (Երևան, 1976, էջ 835)՝ *հավաքագրել*-ը նշանակում է. «*1. Շատերին վարձել՝ վարձով հավաքել մի բանի համար: 2. փխր. Կողմնակիցներ գտնել, գրավել, ներգրավել: 3. փխր. Համալրել, կազմը ուժեղացնել: 4. փխր. Համախմբել, միավորել*»:

Այս բայից է կազմվել *հավաքագրում* գոյականը:

Այժմ, մտքում պահելով վերոբերյալ իմաստները, ընթերցենք տարբեր կայքերից վերցված մի քանի նախադասություն.

- «Նրանք արդեն ավելի քան 200.000 էջ *տվյալներ են հավաքագրել*»:
- «Եղել է հրապարակում աղբահանության *վարձերի հավաքագրման* վերաբերյալ»:
- «Նախարարությունն սկսել է *հավաքագրել համակարգչային սարքեր*»:

Ճիշտ է արդյոք *հավաքագրել, հավաքագրում* բառերի կիրառությունն այս օրինակներում:

Անշուշտ՝ ո՛չ:

Նշված դեպքերում պետք էր ոչ թե «*հավաքագրել*», այլ «*հավաքել*» և՛ տվյալները, և՛ վարձերը, և՛ համակարգչային սարքերը:

Այդպես պետք է «հավաքել» նաև (ոչ թե «հավաքագրել») հարկերը, տեղեկությունները, գումարները...

Ոմանք գուցե հարցնեն. «Իսկ եթե *հավաքագրել* բառն իմաստափոխվել է, և կարելի է գրանցելով, ցուցակագրելով հավաքել ոչ միայն մարդկանց, այլև վարձն ու հա՞րկը»:

Կարծում ենք՝ դա ցույց կտա ժամանակը: Ի դեպ, նկատենք, որ *հավաքագրել*-ն արդեն հավակնում է գրավել նաև այլ բառերի տեղը:

Բերենք նաև այդպիսի օրինակներ.

➤ «Պաշտպանն այցելել է աուտիզմ ունեցող անձանց կենտրոն. *ի՞նչ խնդիրներ է հավաքագրել*»:

➤ «Պատգամավորը լսել ու *հավաքագրել է* բնակիչների *խնդիրները*»:

Կարելի է ենթադրել, որ *հավաքագրել* ասելով՝ հեղինակներն այս դեպքերում նկատի են ունեցել արձանագրելը, գրանցելը:

Հավելենք, որ այս բառի սխալ գործածության մասին գրել է նաև լեզվաբան Պետրոս Բեդիրյանը «Հայ լեզուն և մեր խոսքը» գրքում (Երևան, 1999, էջ 52), որն անպայման արժի ընթերցել:

Պատասխանները՝ Երազիկ Գրիգորյանի

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հայերենում օտար բառերի կրկնակ բաղաձայնները մե՞կ բաղաձայնով են գրվում, թե՞ երկու

Այս մասին դեռևս 1985 թվականին որոշում է ընդունել Տերմինաբանական կոմիտեն, որում մասնավորապես ասված է.

1. Օտարազգի և ռուսերեն բառերի կրկնակ բաղաձայնները, հայերենի արտասանությանը համապատասխան, տառադարձել մեկ բաղաձայնով: Օրինակ՝ *ակորդ, ալիգատոր, ամիակ, ամոնիում, կլասիցիզմ, կոմունիստ*:

2. Հայերենում կրկնակ բաղաձայնների երկար կամ ուժգին արտասանության դեպքում դրանք գրել կրկնակ բաղաձայնով: Օրինակ՝ *Ջեմմա, պաննո, վատտ*:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Վճարում են կանխիկ, թե՞ կանխիկով

Ճիշտ տարբերակն է՝ *վճարել կանխիկ*: Օրինակ՝

Ստիպված եմ վճարել կանխիկ, որովհետև բանկային քարտս մոռացել եմ տանը:

Այս խանութում հնարավոր է վճարել միայն կանխիկ, մինչդեռ այդքան գումար դրամապանակումս չկա:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ

Հետ-ը հայերենի ամենից հաճախ գործածվող կապերից է, ու թերևս դա է պատճառը, որ շատ են հանդիպում դրա գործածության հետ կապված սխալներ:

Հարցազրույց Պետրոս Ղազարյանի հետ նշանակում է՝ լրագրողը հարցազրույց է վերցնում Պետրոս Ղազարյանից: Իսկ եթե հարցազրույց վերցնողը Պետրոս Ղազարյանն է, ուրեմն պետք է ասել. *«Հարցազրույցը վարում է Պետրոս Ղազարյանը»*:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Դիմագրավել արհավի ըբբ, թե՞ արհավիրքին

Դիմագրավել բայը բառարաններում գերազանցապես գրանցված է որպես չեզոք սեռի բայ («Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», 1969, Է. Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», 1976 և այլն): Կան բառարաններ, որոնցում այն գրանցված է որպես ներգործական սեռի բայ (Ա. Սուքիասյան «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան» 2009, Ա. Կոսնյան, «Բառգիրք հայերեն լեզվի», 1998):

Այս տարբերությունը կապված է խնդրո առարկա բայի իմաստային նրբերանգների հետ. նայած, թե ինչ բացատրություններ են գրված բայի դիմաց: Այսպես, եթե *դիմագրավել* բայի *առաջ նետվել, տոկալ, դիմադրել*, և այլ իմաստներ չեզոք են, ապա *նվաճել, ազդեցությանը*

ենթարկել, հակահարված տալ և այլն՝ ներգործական: Այդ է պատճառը, որ *դիմագրավել* բայը պահանջում է երբեմն հայցական, երբեմն տրական հոլովով գոյականներ:

Նույն պատճառով է, որ այս բայի հետ որպես լրացում գործածված գոյականի հոլովածնր կախված չէ այն բանից՝ գոյականը անձ է, թե իր, ինչպես որոշ բայերի դեպքում է. օրինակ՝ *փրկել նախագիծը, փրկել հիվանդին*: Այստեղ կարող է լինել՝ *դիմագրավել մարտը*, ինչպես նաև՝ *դիմագրավել արհավիրքներին*: Իմաստային նուրբ տարբերությամբ պայմանավորված այս մոտեցումները, իհարկե, չեն վերաբերում անձ ցույց տվող գոյականներին: Դրանք միշտ ստանում են տրականի վերջավորություն՝ *դիմագրավել ցուցարարներին, ամբոխին* և այլն:

Քննարկվող բայի հետ գոյականի տարածն գործածության բազմաթիվ օրինակներ կան գեղարվեստական և մասնագիտական գրականության մեջ: Դրանք բոլորն էլ թելադրված են տվյալ համատեքստում այս բայի «թաքնված» իմաստներով:

Այսպիսով, *դիմագրավել* բայի հետ գոյական լրացումները կարող են դրվել և՛ տրական, և՛ հայցական հոլովով, նայած թե ի՛նչ իմաստով է այն գործածված:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Նշանակում են պաշտոնի՞ն, թե՞ պաշտոնում

Գրականության մեջ, իրավական փաստաթղթերում, մամուլում ու գրավոր խոսքում հաճախ հանդիպում է *պաշտոնում նշանակել* արտահայտությունը. *պաշտոնում նշանակվել է* մրցութին մասնակցելուց հետո, *պաշտոնում նշանակել է* Եվրամիության խորհուրդը և այլն: Նույն հաճախականությամբ հանդիպում է *պաշտոնի(ն) նշանակել* արտահայտությունը. կայացավ *պաշտոնի նշանակման* արարողությունը, այդ *պաշտոնին նշանակվում է* հրամանատարը: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքում կարդում ենք. «Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցողը *պաշտոնում նշանակում է*»:

Այսպիսով՝ ո՞րն է ճիշտ. *պաշտոնում նշանակել*, թե՞ *պաշտոնի(ն) նշանակել*:

Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (Երևան, 1980), Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (Երևան, 1976) **նշանակել** բառի իմաստն է՝ **«Կարգել, հաստատել, դնել (պաշտոնի, գործի)»**:

Թեև նախընտրելի է **պաշտոնի(ն) նշանակել**-ը, **պաշտոնում նշանակել**-ը չենք մերժում. թողնում ենք ժամանակի հայեցողությանը:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Մեծատառով գրել, թե՛ փոքրատառով պետական գերատեսչությունների, հիմնարկների, կազմակերպությունների անունները

Ըստ «Բաղադրյալ հատուկ անուններում մեծատառերի գործածության մասին» որոշման («Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու», 2006, էջ 286)՝ պետական գերատեսչությունների, դատական մարմինների, մշակութային կառույցների, բուհերի անվանումները, եթե տեղայնացված չեն, այսինքն՝ նշված չէ դրանց աշխարհագրական, վարչական պատկանելությունը, ապա որպես հասարակ անուններ՝ գրվում են փոքրատառով: Օրինակ՝ **արտաքին գործերի նախարարություն, գլխավոր դատախազություն, ազգային գրադարան, բժշկական համալսարան** և այլն: Տեղայնացված բաղադրյալ անվանումները գրվում են մեծատառով՝ **Հայաստանի պետական պատկերասրահ, Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարություն, Հայկական գյուղատնտեսական ափսոսման, Երևանյան զոգավորություն, Գերմանական կարմիր խաչի ընկերություն** և այլն:

Բաղադրյալ հատուկ անունների գրության ձևերը կարգավորելու նպատակով ընդունված այս որոշումից հետո էլ հատկապես նշված խմբի անվանումների գրության խնդիրը չլուծված մնաց: Ի դեպ, այդ որոշումը ժամանակին քննադատվեց մամուլում:

2018 թվականին ընդունվել է երկու օրենք՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» և «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին»: Առաջին օրենքի «Կառավարության կազմը և կառուցվածքը» հոդվածում (հոդված 2) նախարարությունների անունները գրվել են չտեղայնացված և փոքրատառով՝ **շրջակա միջավայրի նախարարություն, ֆինանսների նախարարություն** և այլն: Երկրորդ

օրենքում Կառավարությանը, վարչապետին և նախարարությանը ենթակա մարմինների անունները (համապատասխանաբար՝ հոդված 4, 5, 6) գրվել են մեծատառով՝ *Կադաստրի կոմիտե, Ազգային անվտանգության ծառայություն, Քաղաքացիական ավիացիայի կոմիտե* և այլն: Ըստ այս օրենքների՝ նախարարությանն առնթեր մարմինների լրիվ, չհապավված անվանումն սկսվում է փոքրատառով, բուն անվանումը՝ մեծատառով (օրինակ՝ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Լեզվի կոմիտե):

Լեզվաբան Դավիթ Գյուրջինյանը 2003 թվականին իր «Մեծատա՞ռ, թե՞ փոքրատառ» բառարան-տեղեկատուի նախաբանում գրում է. «Տասնամյակներ շարունակ փոքրատառով գրվող որոշ բաղադրյալ անուններ հաճախադեպ են մեծատառով գրությամբ, և հակասություն է առաջանում այս կամ այն հիմնարկի պաշտոնական ամբողջական անվանման և նրա կրճատ տարբերակի գրության միջև»:

Ինչպես տեսնում ենք, Դավիթ Գյուրջինյանն իր մտահոգությունը հայտնել է վերոնշյալ որոշումն ու օրենքներն ընդունելուց տարիներ առաջ: Բայց այսօր էլ խնդիրը մնում է առկա, քանի որ նշված որոշումը չի տարբերակում այս խմբի բաղադրյալ հատուկ անունների կրճատ գրության ձևը նույն բովանդակությամբ չտեղայնացված հասարակ անվանումների գրելաձևից: Օրենքները նույնպես հստակություն չեն մտցնում:

Կա որոշում, կան օրենքներ, բայց պետական գերատեսչությունների, հիմնարկների, կազմակերպությունների անունների գրության ձևերը դեռևս հստակ չեն: Նման խնդիրները լեզուն ինքն է լուծում ժամանակի ընթացքում: Բաղադրյալ հատուկ անունների գրության զուգաձևությունն առայժմ շարունակվում է:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Առիթո՞ւլ, թե՞ առթիվ

Առիթուլ-ն ու *առթիվ*-ը *առիթ* բառի գործիականի հոլովաձևերն են: *Առթիվ*-ը գրաբարյան ձև է, որը բառի արժեքով անցել է ժամանակակից հայերենին: Այս բառերի միակ էական տարբերությունն այն է, որ *առթիվ*-ը ածականի հետ չի գործածվում: Եթե սովորական ու

Ճիշտ են «Շնորհավորում եմ այս *գեղեցիկ առիթով*» կամ «Այսօր *լավ առիթով* ենք հավաքվել» նախադասությունները, ապա չենք կարող ասել. «Շնորհավորում եմ այս *գեղեցիկ առթիվ*» կամ «Այսօր *լավ առթիվ* ենք հավաքվել»:

Մյուս բոլոր դեպքերում *առիթով* և *առթիվ* բառերը միմյանց փոխարեն գործածելը սխալ չէ:

Այնուամենայնիվ, որքան էլ այս բառերը նշանակությամբ նույնն են, մի միտում նկատվում է. վատ, անցանկալի դեպքերի կապակցությամբ մարդիկ հաճախ գործածում են *առիթով*-ը, իսկ ուրախ, հաճելի դեպքերի կապակցությամբ՝ *առթիվ*-ը:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Չափ, թե՞ չափս

Չափ և չափս բառերը հոմանիշներ են, բայց միշտ չէ, որ դրանք կարող են գործածվել միմյանց փոխարեն: Չափը չափման միավորն է, չափման տվյալ միավորի մեջ պարունակվող նյութի քանակը, որնէ բանի համար ընդունված սահմանը և այլն: Չափ բառով, ի տարբերություն չափս-ի, կան բազմաթիվ դարձվածքներ. չափ տալ- կառավարել, գլխավորել, ղեկավարել,

- չափը իմանալ- դիրքին, հեղինակությանը համապատասխան պահել,
- չափի զգացում ունենալ- չափավորություն պահել,
- չափն անցնել- սահմանն անցնել և այլն:

Չափսը որնէ բանի չափերը որոշող տվյալների ամբողջությունն է, չափսը առնելը որնէ բանի չափերի տվյալները վերցնելն է: Չափս-ը գործածում ենք հագուստի, կոշիկի, որնէ տարածքի և այլնի չափման տվյալները որոշելիս: Օրինակ՝ «Նրա շրջագգեստի չափսը 42 է»: «Նկարի չափսերը համապատասխանում են շրջանակի չափսերին»: «Բանվորները վերցրին վերանորոգվող սենյակի չափսերը»:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ձեռնահա՞րկ թե՞ ձեղնահարկ

Ձեղնահա՞րկ,- զարմանում են շատերը:- Մի՞թե ճիշտը ձեռնահարկ-ը չէ: Որտեղի՞ց է գալիս այս թյուրընկալումը: Գուցե ձեղուն բառի իմաստը չըմբռնելո՞ւց: Բայց չէ՞ որ սխալվողները ձեռուն բառի իմաստն էլ չգիտեն, մանավանդ որ այդպիսի բառ չկա: Ձեղունը տանիքն է, կտուրը: Ձեղնահարկը անմիջապես տանիքի տակ եղած հարկն է, որը կարելի է որպես խորդանոց օգտագործել, կարելի է և բարեկարգել, դարձնել բնակության համար պիտանի տարածք և ձեղնահարկում մի հարմարավետ ձեղնասենյակ ունենալ:

Բայց նախ պետք է մոռանալ սխալ ձեռնահարկ-ը:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ինչպե՞ս արտասանել «ձեռնպահ» բառը

Ձեռնպահ լինելը կարծիք չունենալը չէ: Թեև չեզոք՝ այն նույնպես տեսակետ է: Նաև քաղաքակա՛ն տեսակետ: Եվ ահա, եթերից հաճախ լսում ենք՝ «ձեռնպահ էին», «ձեռնպահ մնաց» և այլն: Ձեռնպահ բառը կազմված է ձեռք բառի գրաբարյան ձեռն ձևից և պահ արմատից: Բառացի՝ «այո» կամ «ոչ» ասողների, իրենց կարծիքը հայտնողների հետ միասին ձեռք չբարձրացնել, ձեռքը պահել: Ուրեմն ինչպե՞ս է պետք արտասանել ձեռնպահ բառը: Որտե՞ղ է գաղտնավակի ը-ն: Այնտեղ, որտեղ ձեռ(ը)ն բառի մեջ է՝ ձեռ(ը)նպահ: Նույնն է՝ ձեռ(ը)նտու: Ինչպես որ՝ դատարկաձեռ(ը)ն, անձեռ(ը)նմխելի: Բայց ահա մեր լրագրողներն ու քաղաքական մեկնաբանները շատ հաճախ եթերից հնչեցնում են այս բառը սխալ արտասանությամբ՝ ձեռն(ը)պահ (այդ նույն մարդիկ, հաստատ, ձեռ(ը)նտու բառն արտասանում են՝ ձեռն(ը)տու): Հիշե՛նք, նախադաս ձեռ(ը)ն-ը արտասանվում է այնպես, ինչպես հետադասը, և ճիշտ է՝ ձեռ(ը)նպահ (նաև՝ ձեռ(ը)նտու):

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Ծնո՞ւնդ, թե՞ ծննդյան տարեդարձ

«Ծնունդ նշել» արտահայտությունը ճիշտ է: Ծնունդ-ն այստեղ հավասար է ծննդյան տարեդարձ-ին և ազատորեն կարող է գործածվել վերջինիս փոխարեն, ինչպես ասենք՝ Չայկովսկի լսել-ը Չայկովսկու ստեղծագործությունները լսել-ու փոխարեն, մի բաժակ խմել-ը մի բաժակ ջուր (հյութ, օղի) խմել-ու փոխարեն:

Լեզվաբանության մեջ այս երևույթը կոչվում է փոխանունություն (մետոնիմիա), այսինքն՝ որևէ երևույթի՝ հասկացության՝ առարկայի անվան փոխարինումը մի ուրիշ երևույթի՝ առարկայի հասկացության անվամբ՝ նրանց միջև եղած առնչություն հիման վրա:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Իրացնե՞լ, թե՞ իրականացնել

Իրացնել-ը բազմիմաստ բառ է: Բառարանային բացատրությամբ այն նշանակում է «1. դրամի վերածել՝ վաճառելով դրամ դարձնել, առարկայացնել, 2. գործի վերածել՝ իրականացնել, գործ դարձնել, գլուխ բերել, իրողություն դարձնել, կենսագործել, ինչպես նաև՝ յուրացնել, օգտագործելի դարձնել, կիրառել»: Թեև, ինչպես տեսաք, բառարաններում իրացնել բառի դիմաց կարդում ենք իրականացնել, շատ հաճախ այս բառերն իրար փոխարինել չեն կարող: Չենք կարող ասել «երազների իրացում»: Ու քանի որ «իրացնել» բառի «իրականացնել» նրբերանգային տարբերակը մեզանում իր ուրույն տեղն ունի «գործի վերածել», «իրականություն դարձնել» իմաստով, «իրացնել» ձևն ավելի հաճախ օգտագործվում է «դրամի վերածել» իմաստով, թեև սխալ չէ նաև այն իր երկրորդ իմաստով գործածելը:

Պետք է իրացնել բառի իմաստային տարբերակներից ընտրել այն, որը հարմար է համատեքստին:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Նիդերլանդներ ը, թե՛ Նիդեռլանդներ

ՀՀ կադաստրի կոմիտեի գեոմատիկայի կենտրոնի երկրատարածական տվյալների կառավարման բաժնի հաստատած երկրանունների ցանկում այս երկրի անունը գրանցված է Նիդերլանդներ ձևով: Ճիշտ է, հայերենում լ-ից ու ն-ից առաջ գրում ենք ո, բայց այս սկզբունքը Նիդերլանդներ-ի դեպքում չի գործել, քանի որ որոշումն ընդունողները նիդեր և լանդ բաղադրիչներն ընդունել են որպես առանձին արմատներ, ինչպես ինտերնացիոնալ բառում է: Իհարկե, կարելի է վիճարկել՝ մատնացույց անելով այն սկզբունքը, ըստ որի՝ եթե օտար բարդ բառի բաղադրիչները հստակ որպես առանձին միավորներ չեն ընկալվում, տվյալ բառն ընդունվում է որպես մեկ միավոր, և օրինակ բերել Իռլանդիա-ն և վկայակոչել որոշ բառարաններ, որտեղ Նիդերլանդներ-ը գրված է ո-ով:

Այնուամենայնիվ, անվանացանկը հաստատված է, թեև այն հավանաբար վերանայման կարիք ունի:

ՄԵԶ ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ

Միա՞ն է ասել հայերեն լեզու

Հայերեն լեզու կապակցությունը նախկինում սխալ չի համարվել: Այն հանդիպում է դասական գրականության մեջ (Կորյուն, Րաֆֆի, Հ. Թումանյան և այլն): Բայց բոլոր լեզուները ժամանակի ընթացքում բնական փոփոխությունների են ենթարկվում, և հաճախ ո՛չ առանց հիմքի: **Հայերեն լեզու** կապակցությունն այսօր անհանձնարարելի է համարվում, և դրա համար հիմք է ծառայում **-երեն** վերջածանցը, որն այլ բան չի նշանակում, քան **լեզու**: Այս ածանցի կողքին **լեզու** բառն ավելորդ է՝ **անգլերեն լեզու, ռուսերեն լեզու** և այլն:

Ուրեմն ճիշտ է՝ **հայերեն կամ հայոց լեզու** (նաև **ռուսաց լեզու** (մյուս լեզուների դեպքում այսպիսի կապակցությունները հնացած են)): Հիշե՛նք մերօրյա դասականներին՝ (Ս. Կապուտիկյան, Հ. Սահյան, Պ. Սևակ, ամբողջ լեզվագիտական գրականությունը), և մտապահե՛նք, որ **-երեն** վերջածանցն ու **լեզու** բառը միասին գործածել պետք չէ: